կարողանալ կառուցել ուսումնական գործընթացը, որն ուղղորդված է կրթության նպատակներին հասնելուն, ընտրել և առաջարկել մանկավարժական օգնության եղանակներ, ստեղծել դպրոցականների նախաձեռնությունների բացահայտման պայմաններ, տեսնել աշակերտներին կրթական գործընթացում, առաջարկել տարբեր եղանակներ սովորողներին ընդգրկելու գործունեության տարբեր ձևերում՝ տարիքային առանձնահատկություններին համապատասխան, ստեղծել կրթական միջավայր և օգտագործել դրա հնարավորությունները՝ տեղեկատվական ռեսուրսները, պլանավորել և իրականացնել պրոֆեսիոնալ ինքնակրթումը, վերլուծել սեփական գործունեությունը, ընտրել համապատասխան տեխնոլոգիա:

Կոմպետենցիայի գնահատումը միշտ եղել և մնում է սուբյեկտիվ գործընթաց, քանի որ կոմպետենցիա հասկացությունը ինքնին սուբյեկտիվ է: Հիմնվելով գիտական գրականության վերլուծության և սեփական փորձի վրա՝ մենք մտածում ենք, որ սուբյեկտիվության հիմնախնդիրը կարելի է լուծել: Եթե հնարավոր չէ կոմպետենցիան գնահատելիս ազատվել սուբյեկտիվությունից, ապա անհրաժեշտ է հաստատագրել ոչ միայն գնահատականը, այլ նաև այն իրադարձությունները որոնք գնահատվել են: Իրադարձությունները նկարագրել խիստ վերապահորեն. գործողություն, արդյունքներ, մասնակիցներ, վկաներ, կոմպետենցիաների համալիր: Կոմպետենցիայի գնահատման շատ թե քիչ ընդունված պայմաններն են՝

1. Կոմպետենցիան պետք է դրսևորվի գործողության մեջ: Մյուս այլ գնահատականները (թեստերը, անկետաները և այլն) – դրանք օժանդակ չափիչ սարքեր են: Եթե մարդը դրսևորել է կոմպետենցիա, դա կարելի է դիտել և նկարագրել որպես առանձին իրադարձություն: Տրամաբանական է, որ ցանկացած գործողությունում մարդը դրսևորում է մի շարք կոմպետենցիաներ, և յուրաքնչյուր իրադարձությունում կարող է լինել երկուսից ավելի մասնակիցներ (եթե դա առցանց հաշվետվություն չէ):
2. Կոմպետեցիան չի կարելի գնահատել իրադարձության տեղում: Դրանով մենք կորցնում ենք անկախ գնահատման հնարավորությունը, կորցնում ենք գնահատման թափանցիկությունը և բոլորը հանգեցնում ենք ավանդական միավորներին, միայն թե այս դեպքում ոչ թե գիտելիքների համար, այլ կոմպետենցիայի: Անհրաժեշտություն է առաջանում նոր դերակատարության՝ ***դիտորդի***: Ոչ թե գնահատող, այլ դիտորդ՝ տեսավ–գրանցեց–մտցրեց բազա:

Իրադարձությունները հաստատագրվում են դիտորդների կողմից, իսկ գնահատվում են նաև ուրիշների՝ այսպես կոչված փորձագետի կողմից: Ստացվում է բարդ կառուցվածք. դիտորդներ, փորձագետներ, իրադարձությունների՝ բազա: Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր փորձագետ բացատրի, թե ինչի համար է դրվել գնահատականը:

Օգտվելով սովորական ֆիլտրումից՝ կարելի է ընտրել փորձագետների տարբեր խմբեր և դիտարկել, թե ինչպես է փոխվում տվյալ մասնագետի կոմպետենցիան գնահատողների կազմից կախված: Այս եղանակով միանգամից բացահայտվում են և ոչ օբյեկտիվ փորձագետները, և բարձրացված կամ իջեցված գնահատականները:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 28.03.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Компетентностный подход в педагогическом образовании/под ред. **Козырева В.А. и Родионовой Н.Ф.**– СПб, Из-во РГПУ им. А.И. Герцена, 2004.– 392 с.
2. **Ядровская М. В.** Моделирование и коммуникативная компетентность педагога. [Электронный документ]. mailto:itta@kstu.ru/ info.dstu.edu.ru
3. **Солодова Г. Г.** Профессиональное самоопределение студентов в контексте изменяющегося социума. / Педагогика. № 4, 2007. – с.67–69.
4. **Федоряк Л. М.** Как сегодня обучать, чтобы повысить качество жизни. / Педагогика, №4, 2005. – с. 35–40.
5. **Якунин В. А.** Педагогическая психология: Учеб. пособие. / 2–е изд. – СПб.: Изд–во Михайлова В.А., 2000. – 349
6. Болонский процесс: поиск общности европейских систем высшего образования (проект TUNING) / Под ред. **Байденко В. И.** М., 2006. – 210 с.
7. **Чичикин В. Т.** Профессиональная готовность педагога : монография / **Чичикин В. Т.** Н. Новгород : Китеж, 1998. – 103 с.
8. **Зимняя И. А.** Ключевые компетентности как результативно–целевая основа компетентностного подхода в образовании / М., 2004. – 381 с.
9. **Кухарев И. В.** На пути к профессиональному совершенству: Кн. для учителя. – М.: Просвещение, 1990. – (Мастерство учителя; идеи, советы, предложения). – 159 с.
10. **Станкин М. И.** Профессиональные способности педагога: Акмеология воспитания и обучения / М.И. Станкин. – М.: Московский психолого–социальный институт; Флинта, 1998.–368 с.
11. **Хуторской А. В.** Ключевые компетенции как компонент личностно–ориентированной парадигмы образования / А.В.Хуторской // Народное образование. – 2003. – №2.– С. 58–64.
12. **Хуторской А. В.** Технология проектирования ключевых и предметных компетенций / **Хуторской А. В.**// Интернет–журнал «Эйдос». 2005. 12 декабря. http: / / www.eidos.ru / journal / 2005 / 1212. htm/
13. **Шишов С. Е.** Мониторинг качества образования в школе / **Шишов С. Е., Кальней В. А.** – М.: Педагогическое общество России, 1999. – 354 с.

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ КОМПЕТЕНЦИИ

СААКЯН ЛИДА

Заведующая кафедрой фармацевтической химии Ереванского государственного медицинского университета имени Мх. Гераци, доктор педагогических наук, профессор

Модернизация системы образования в Армении выдвигает вопросы формирования профессиональной компетентности педагога на одно из ведущих мест. Учитель должен иметь все качества идеального, современного, компетентного и профессионального педагога. А идеальный педагог – это образец профессионала, носитель гражданских, производственных и личностных функций, сформированных на наивысшем уровне. Поэтому одним из важных профессиональных качеств педагога является профессиональная компетентность. Через это педагог реализуется как работник, выполняющий свои обязанности в системе производственных отношений.

Дата представления статьи 28.03.2012

THE PROBLEM OF EDUCATIONAL COMPETENCE

LIDA SAHAKYAN

Yerevan State Medical University After M. Heratsi, Head of The Chair of The Pharmaceutical Chemistry, Doctor of Pedagogical Sciences, Professor

Competence is defined as possession of knowledge and the abilities allowing to operate effectively in any area. Knowledge and abilities is a basis for development of competence and the form for their display. The basic characteristic of the competence is effective and creative demonstration of use of knowledge and abilities in various situations. Competence assumes also certain degree of comprehension of limitation of own knowledge and opinions and planning of measures on overcoming of this limitation. Competence assumes constant updating of knowledge, possession of the new information for the successful decision of professional problems. In other words, «competence is an ability to actual performance of activity».

The concept of competence is not new in pedagogics: orientations to development of concrete ways of activity have not been devoted in the works of known teachers.

Article submission date 28.03.2012

ՀԱՅԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նորագույն տեխնոլոգիաների ներդրման և կրթության որակի գնահատման բաժնի պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ՈՒ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՀՏԴ 378

Հոդվածում ներկայացվում են բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգը և մանկավարժական կրթության որակի ապահովման գործընթացի կառավման համակարգային մոտեցումը: Կառավարման համակարգը ներկայացված է որպես մասնագիտական կրթության որակի ապահովման գործիք, ընդհանրացված է հեղինակի կրթական ծառայությունների որակի ապահովման համակարգի ստեղծման և կատարելագործման փորձը: Կառավարման համակարգը դիտարկված է որպես բուհում մասնագետների պատրաստման գործընթացի կառավարման մոդել:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ կրթության որակ, որակի ապահովում, մշտադիտարկում, դիագնոստիկա, ինքնավերլուծություն, չափորոշիչ, որակի գնահատում, կառավարման համակարգ, կառավարման սուբյեկտ, կառավարման սկզբունքներ:

Գիտության և տեխնիկայի զարգացման արդի պայմաններում, մարդկային գործունեության բոլոր ոլորտներում, անգամ փոքր ժամանակահատվածում, տեղի են ունենում արմատական փոփոխություններ, այդ թվում՝ նաև բարձրագույն կրթության: Փոփոխվում են նաև մասնագիտական կրթության որակի նկատմամբ պահանջները, արմատապես վերակառուցվում ուսուցման տեխնոլոգիաները, արագորեն փոփոխվում ուսումնական հաստատությունների գործունեության տնտեսական և կազմակերպական պայմանները:

Բուհերի կառավարման հիմքերի վերանայման անհրաժեշտությունը շուկայական հարաբերությունների պայմաններում բերեցին նրան, որ կառավարման ոլորտի շատ մասնագետներ սկսեցին ավելի հաճախ անդրադառնալ կրթական ծառայությունների որակի հարցերին: Որակը այժմ հաստատությունների համար դառնում է ռազմավարական խնդիր և դիտարկվում է որպես մրցակցային առավելության հիմնական բաղադրիչ: Բուհերը արդեն ակտիվորեն քննարկում են որակի դերը և նշանակությունը կրթության համակարգի բարեփոխման համատեքստում: Զարգացումների անկանխատեսելի և դինամիկ պայմաններում ցանկացած բուհի աշխատանքի հաջողությունը անհնար է առանց ծառայությունների և դրանց արդյունքների որակի բարձրացման ուղղությամբ գործունեության կատարելագործման: Այդ ծառայությունները հենց այն ապրանքն է, որ ուսումնական հաստատությունների կողմից ներկայացվում է ազգային և միջազգային մակարդակներում: Այսպիսի մոտեցումը պետք է լինի բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման ռազմավարության անկյունաքարը:

Հայաստանի Հանրապետության արդի սոցիալ–տնտեսական զարգացման սկզբունքային փոփոխությունները պահանջում են շրջանավարտների ստեղծագործական ներուժի և մրցունակության զգալի բարձրացում: Այս հիմնարար գլոբալ խնդրի լուծումը որոշվում է բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կատարելագործման համալիր միջոցառումների իրականացմամբ: Այժմ կրթական կազմակերպությունները գտնվում են մրցակցության և պետական վերահսկողության տարեցտարի սաստկացող պայմաններում և ստիպված են վերանայել ուսումնական գործընթացի կազմակերպման ավանդական մոտեցումները ժամանակակից շուկայի պահանջներին համապատասխան: Իսկ շուկան, ինչպես հայտնի է, ելնելով սպառողների առկա կամ ձևավորվող պահանջարկից, թելադրում է իր պահանջները: Այժմ բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառի շատ աշխատակիցների մոտ հետաքրքրություն է ծագում արտադրության ոլորտում կիրառվող որակի ապահովման գործընթացի կառավարման (ՈԱԳԿ) հայեցակարգը կրթական կազմակերպությունների կառավարման բնագավառում կիրառելու հնարավորության նկատմամբ: Մասնավորապես, վերոնշյալը վերաբերում է ՈԱԳԿ համընդհանուր սկզբունքները և որակի միջազգային «ISO 9001:2000» չափորոշիչների պահանջները ՈԱԳԿ ներբուհական համակարգի կառուցման գործընթացում կիրառությանը: Այդպիսի համակարգը, հիմնվելով կառավարման գործունային մոտեցման վրա, հնարավորություն է ընձեռում հասնել բարձրորակ մասնագետների պատրաստման գործընթացի շարունակական կատարելագործման, հենց ուսումնական գործընթացի որակի միջոցով՝ ապահովել ուսումնառողների գիտելիքների արդիական մակարդակ, ինչպես նաև արդյունավետ օգտագործել ուսումնական հաստատության առկա կադրային, նյութատեխնիկական, տեղեկատվական և ֆինանսական ներուժը: Սակայն, բուհերում այդպիսի համակարգերի ստեղծումը աշխատանքի և ծառայությունների շուկայի զարգացման տեմպի համեմատությամբ հապաղում է, որը պայմանավորված է ՈԱԳԿ ներբուհական համակարգի ստեղծման հարցում միասնական մոտեցումների բացակայությամբ, կառույցների կազմակերպական բարդությամբ, ֆինանսական միջոցների անբավարարությամբ և ՈԱԳԿ ներբուհական համակարգի արդյունավետության թերագնահատմամբ, ինչպես նաև ՈԱԳԿ տեսության ոլորտի գիտելիքների անբավարարությամբ:

Հետևաբար, հիշյալ հիմնախնդրի լուծումը պահանջում է հետազոտությունների իրականացում, հատկապես, երբ ՈԱԳԿ ներբուհական համակարգի ձևավորման բնագավառում տեսական, մեթոդական և գործնական երաշխավորությունների մշակումը արդիական է և հրատապ:

Նախորդ դարի վեջին տասնամյակում ստեղծված տնտեսական պայմաններով պայմանավորված դժվարություններն այսօր արդեն անցյալում են, իրավիճակը զգալիորեն փոփոխվել է: Կրթության ոլորտում պետական քաղաքականությունը պետությունը հռչակում է որպես կրթական ծառայությունների որակի երաշխավոր: Կրթության ՈԱԳԿ համակարգը ճանաչվում է բուհական գործունեության բաղադրիչ, որի կառուցումը համահունչ է, և ուղղորդված Բոլոնիայի հռչակագրի դրույթներին ու Հայաստանի Հանրապետության որդեգրած քաղաքականությանը: Սակայն, համակարգի կառուցման վերաբերյալ բացակայում են մեթոդական կուռ երաշխավորությունները, գործիքակազմն ու մեխանիզմները, և առկա են լոկ տեսական դրույթներ ու որոշ պրակտիկ փորձ: Անշուշտ, համակարգի կառուցման ստեղծման, գործառույթների շրջանակների և գործունեության վերաբերյալ կարող են լինել բուհերի կողմից տարբեր մոտեցումներ, մինչդեռ, սկզբունքների գործողության, մեթոդաբանության


շրջանակներն ու մոտեցումները պետք է լինեն հստակեցված ու կոնկրետ, ունենան զարգացման միտումների լուրջ նախադրյալներ: Ստեղծված իրավիճակում կրթության որակի ապահովման հիմնախնդիրները դրվում են բուհերի վրա, և լուծում են այնպես, ինչպես կարողանում են բուհերը:

Կրթության որակի հասկացությունը տարբեր երկրներում մեկնաբանվում է ամենատարբեր ենթատեքստերում, տարբեր երկրներում այն տարբեր է և՛ բովանդակությամբ, և՛ ծավալով, դրա որակի ապահովումը՝ գործընթացներով: Սակայն, բոլոր երկրներում ընդհանուր է գործունեության պայմանների նկատմամբ պահանջների սահմանումը (պայմանների որակ): Բոլոր դեպքերում կրթական գործունեությունը սկսելուց առաջ հաստատության մուտքային պայմանները, հաջորդ շրջաններում զարգացման աճն ու պայմանների որակի բարելավումը գնահատվում են պարբերական դիագնոստիկայի, փորձաքննության և սահմանված նորմատիվներին համապատասխանության ստուգման միջոցով:

Կրթական գործունեության որակը բնութագրվում է տարբեր բաղադրիչներով, որոնք ընդգրկում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները և դրանց իրականացման որակը, հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի որակը, ուսուցման գործընթացի կազմակերպման որակը, ինչպես նաև ուսումնառության սուբյեկտի որակը:

Այժմ բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման հիմնական միտումը դառնում է կրթական գործընթացի որակի արտաքին վերահսկողության ընթացակարգերից և ատեստավորման ու հավատարմագրման արդյունքներից ծանրության կենտրոնի տեղափոխումը ՌԱԳԿ որնէ մոդելի հիման վրա ներքին ինքնագնահատման, ինքնահետազոտման կողմը: Դա ապահովում է որակի գնահատման պատասխանատվության տեղափոխումն այնտեղ, որտեղ պետք է այն լինի՝ ուսումնական հաստատություն, և որակի ներքին գնահատման համար հատկացվող նյութական և ժամանակային ռեսուրսների էական խնայողություն:

Եվրոպական շատ երկրներում բուհերի ազատությունների տրամադրման միտումները կապված են ոչ միայն որակի գնահատման արտաքին, այլ նաև ներքին համակարգերի հետ: Ինքնագնահատումը, ընդհանուր առմամբ, կարող է դիտարկվել որպես առանձին գործընթաց, ինչպես նաև որակի գնահատման ընդհանուր գործընթացի մաս: Որակի գնահատման ներքին մեխանիզմների զարգացումը կապված է այնպիսի գործընթացների հետ, ինչպիսիք են՝ պետական կարգավորումից անցումը շուկայական ուղղվածության, կրթական հաստատությունների և ծրագրերի որակի շարունակական զարգացումն ու կատարելագործումը: Բնական է, որ զարգացմանն ու կատարելագործմանը միտված առանձնանում են արտաքին և ներքին բաղադրիչները, սակայն այն ամբողջական ցիկլ է և սխեմատիկ ձևով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:



Կրթության որակի արտաքին գնահատման համակարգը, ամբողջականության մեջ, մեծ մասամբ ուղղորդված է չափորոշիչների, գործընթացների արդյունավետության և այլ որակների, ներքինը՝ կատարելագործման և մրցունակության զարգացման վրա: Որպես կանոն, արտաքին գնահատման գործընթացը ներառում է ինքնագնահատման տարրեր: Ներքին գնահատման զանազան տարբերակների վերլուծության արդյունքներով կարելի է առանձնացնել այնպիսի հիմնական փուլեր, ինչպիսիք են՝ նպատակադրումը և ընդհանուր պատրաստությունը, հաշվետվությունը և հետագա գործնական կիրառությունը: Վերջին փուլը ներառում է կատարելագործման ցուցումների մշակումը և դրանց իրականացումը: Բնական է, որ որակի գնահատումն ամբողջությամբ ձեռք է բերում զարգացման հսկողության և մշտադիտարկման, կատարելագործման և ինքնակարգավորման շեշտադրությունների միահյուսման միտումներ:

Որակի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գնահատման գործընթացի հիմնական գործիքներն արդյունավետության ցուցանիշներն են և փորձագիտական գնահատումները: Արդյունավետության ցուցանիշները, մեծ մասամբ, արտահայտվում են քանակական գնահատականով, դրանք փորձնական քանակական ու որակական տվյալներ են, որոնց միջոցով կարելի է դատել նպատակների իրականացված լինելը:

Այսպիսով, եվրոպական երկրների որակի ապահովման համակարգերում ևս դեռ առկա են չլուծված հիմնախնդիրներ, կապված արտաքին և ներքին գործընթացների հաշվեկշռի, գնահատման օպտիմալ մեթոդների որոնման հետ:

Գոյություն ունեն կրթության որակի ապահովման հիմնախնդրի լուծման տարբեր մոտեցումներ.

• որակի համընդհանուր կառավարման («TQM») մեթոդաբանության վրա հիմնված մոտեցում՝ «ISO 9001:2000» չափորոշիչներ, զարգացման տարբեր մոդելներ,
• կրթության բովանդակության մասի վրա ուշադրության կենտրոնացման մոտեցում,
• ուսումնական գործընթացի հսկողության և բուհի ատեստավորման միջոցով ուսանողների կրթվածության մակարդակի գնահատման վրա կողմնորոշված մոտեցում:

Այս մոտեցումներից, սակայն, միայն առաջին մոտեցումն է որակի ապահովման համակարգը առանձնացնում որպես հետազոտման առարկա:

Մանկավարժական բուհի կամ մանկավարժական մասնագիտությունների գծով գործունեություն իրականացնող բուհի մանկավարժական մասնագիտությունների մասով որակի համակարգին առնչվող բոլոր տեսանկյուններն ու մոտեցումներն էապես տարբերվում են: Տարբեր են նաև ՈԱԳԿ անհրաժեշտության և կառավարվող գործընթացի հնարավոր տարբերակների հետ կապված ըմբռնումները, հավանաբար կապված՝

• ՈԱԳԿ համակարգի ստեղծման, որակի ապահովման գծով մասնագետների պատրաստման աշխատանքներում համակարգվածության, հետևաբար նաև՝ որակի ապահովման մշակույթի բացակայության հետ: Այս մշակույթի ձևավորումը պետք է սկսել բուհական միջավայրում: Հարկ է բոլոր բուհերին առաջարկել որակի համակարգի չափորոշիչ, որում հաշվառված կլինեն ոլորտին վերաբերող բոլոր պահանջները, ինչպես նաև ներառված լինի եվրոպական շատ բուհերի կողմից ընդունված կարարելագործման մոդելը: Ըստ որում, ՈԱԳԿ համակարգի ստեղծման այս փուլում պետության գործողությունը պետք է կրի լոկ պարտադիր դրդապատճառային տարրերով հագեցված խորհրդատվական բնույթ, օրինակ՝ հսկողության, ատեստավորման գործընթացներում պահանջների շեմի իջեցում, երաշխիքների տրամադրում, արտաքին այլ դրդապատճառներ:
• «որակի կառավարում», «ՈԱԳԿ», «ՈԱԳԿ համակարգ», «կառավարման համալիր համակարգ», և այլ, անգամ «որակի ապահովման և որակի արտաքին գնահատման» հասկացությունների, հաճախ նաև միաժամանակյա, գործածման հետ կապված տերմինաբանական խառնաշփոթի հետ՝ հաճախ ստեղծելով դրանք իրարից խիստ տարբեր լինելու տպավորություն: Մինչդեռ, հասկացությունների կիրառությունը մեզ պետք է բերի այն պատկերացումներին, որ դրանք բոլորը բնութագրում են համակարգի կառավարումը և արտահայտում են կառավարման մակարդակը:
• որակի ապահովման համակարգի մոդելի բարդության և բեռնվածության հետ, ինչը սաստիկ դժվարեցնում է համակարգի ըմբռնումը: Որակի և դրան հասնելու ուղիների մասին գիտելիքները պետք է հասանելի և հասկանալի լինեն բոլորին, դրա համար նախ և առաջ պետք է ձեռբազատվել ավելորդ բարդություններից, զուտ տեսական դատողություններից և ստեղծել աշխատանքի կոնկրետ ալգորիթմ:

Որակի ապահովման համակարգի գործառնություն և կատարելագործման ակտիվություն հնարավոր է ապահովել գործունեության արտաքին և ներքին

գնահատման միջոցներով: Այս միջոցներով աշխատանքը կլինի կառավարման ուղղությամբ գործառույթների պարբերաբար իրականացման լավագույն սկիզբ: Փոփոխությունները պետք է ընթանան երկու ուղղություններով՝ կառավարման համակարգի և կրթության բովանդակային մասի բարելավման: Իսկ այսպիսի փոփոխությունների խթան կարող է լինել ՈԱԳԿ համակարգի և գործընթացի կառավարման մեթոդական գործիքակազմի տեղեկացվածությունը:

Հաջորդ լուրջ փուլը չափորոշչի կամ մոդելի ընտրությունն է, որին համապատասխան պետք է իրականացվի որակի ապահովման ուղղությամբ համակարգված աշխատանքները: Կառավարման համակարգի ընտրությունը կախված կլինի կազմակերպության ուղղվածությունից կամ տիպից և ուսումնական հաստատության կազմակերպական զարգացման մակարդակից:

Մոդելի ընտրությունն այնքան էլ դյուրին չէ: Շատ դեպքերում առավելությունը տրվում է գործարար կատարելագործման մոդելին՝ չափաբերումը դիտելով որպես որակի պապահովման գործընթացի կառավարման համակարգի անհրաժեշտ նվազագույն պահանջ: Չափորոշիչները ենթադրում են համակարգի կառուցման ալգորիթմ, որի յուրացմամբ առավել դյուրին է սկսել ՈԱԳԿ համակարգի կառուցումը: Եթե որակի ապահովման ուղղությամբ աշխատանքն իրականացվի համակարգված, ապա կարելի կլինի սկսել կատարելագործման մոդելների կիրառությունը:

Անհրաժեշտ է որոշել, թե որ գործոնները, և ինչ չափով են ներազդում կոնկրետ նպատակի իրականացման վրա.

1. գործունեության պայմանների որակը,
2. պրոֆեսորադասախոսական կազմի որակը,
3. դիմորդների ընտրությունը,
4. կրթական ծրագրերի որակը,
5. տեղեկատվության ապահովման մակարդակը,
6. բուհական գիտության կազմակերպական մակարդակը,
7. բուհի ինֆրակառուցվածքի որակը և այլն:

Այս գործոնների հիման վրա, ըստ էության, առանձնացվում են որակի ապահովման չափանիշները, որոնց օգնությամբ հնարավոր կլինի իրականացնել գնահատումը և հատկապես՝

• կրթության բովանդակությունը.
• մասնագետների պատրաստվածության մակարդակը.
• շրջանավարտների աշխատանքի տեղավորվելը.
• պրոֆեսորադասախոսական կազմը.
• տեղեկատվական–մեթոդական ապահովումը.
• կրթական գործընթացի նյութատեխնիկական ապահովումը.
• կրթական և ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը.
• գիտական գործունեությունը:

Բուհի կրթության ՈԱԳԿ համակարգի տակ հասկանում ենք կազմակերպության ղեկավարման և որակի ապահովման ուղղությամբ կառավարման համակարգը, այսինքն՝ որակի ապահովման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ բուհի կազմակերպական կառույցների ամբողջականությունը, գործընթացները, ռեսուրսները, փաստաթղթերը՝ ներքին կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, մեթոդական ցուցումները, աշխատանքային հրահանգները և այլն: Կրթության որակի ապահովման համակարգի ստեղծման առաջին քայլը մոդելի ընտրությունն է, որին համապատասխան դա պետք է կառուցվի: Այս պարագայում ՈԱԳԿ համակարգի մոդելի տակ հասկանում ենք բոլոր այն սկզբունքների, մեթոդների, կազմակերպության

գործունեության տարբեր գործընթացների և տեսանկյունների ցուցամիշների և պահանջների, այդ գործընթացների մակարդակների և դրանց գնահատման եղանակների չափանիշների ամբողջությունը, որն ամբողջությամբ որոշում է պահանջվող որակին հասնելուն ուղղված կազմակերպության գործունեության բոլոր գործընթացները:

Բուհի դիտարկվող ՈԱԳԿ համակարգի կազմակերպական մեխանիզմը մանկավարժական բուհում մասնագետների պատրաստման և պատրաստման ՈԱԳԿ իրականացման ուղղությամբ գործողությունների ամբողջական համակարգ է: Հիմնվելով կրթության մարդասիրական մոտեցման հիմնադրույթների վրա, ՈԱԳԿ կարելի է դիտել բուհի՝ որպես՝ ամբողջական ինքնակազմակերպվող համակարգի հատուկ գործառույթի դերում, որը կրթության ոլորտի կոմպետենտ մասնագետների պատրաստման խնդրի լուծմանն ուղղված ակադեմիական հանրության սուբյեկտների առանձնահատկությունների խթանումն է: Նման ըմբռնումների պարագայում բոլոր մակարդակների ղեկավարների կողմից կառավարչական ներգործությունների էությունը դասավանդողների, ուսանողների և մասնագիտական գործունեության այլ -սուբյեկտների արդյունավետ գործունեության համար արտաքին և ներքին նպաստավոր պայմանների ստեղծումն է: Կարևոր է նաև, գործողությունների բովանդակային բնութագրերի դիտարկումը, որն անհրաժեշտ է նախաձեռնել բուհում, ՈԱԳԿ համակարգի կառուցման ժամանակ:

Կրթության ոլորտի բարձր որակավորում և մրցունակ մասնագետների պատրաստման հարցում լուրջ հետաքրքրություններ ունեն պետությունը, հասարակությունը, ուսանողները և հենց այդ մասնագետները պատրաստող բուհը: Դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել և հաշվի առնել բոլոր կողմերի հետաքրքրություններն ու պահանջները: Պետությունը, որպես մասնագետների պատրաստման հիմնական պատվիրատու, կրթության բովանդակության նկատմամբ իր պահանջները ներկայացնում է բարձրագույն կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներում: Հաշվի առնելով, որ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներում արտացոլված կրթության բովանդակությունը իրականացվում է դասավանդողների կողմից նրանց մասնագիտական կոմպետենտություններին համապատասխան, անցնելով նրանց անձնային ըմբռնումների և մտածողության առանձնահատկությունների պրիզմայով, կարելի է պնդել, որ ապագա մասնագետների կողմից յուրացվող կրթության բովանդակությունը կրում է սուբյեկտիվ բնույթ: Հատկապես, հենց այդ պատճառով էլ միևնույն չափորոշիչներով աշխատող մանկավարժական կամ մանկավարժական նույն մասնագիտությունների գծով գործունեություն իրականացնող բուհերը իրարից էապես տարբեր են. յուրաքանչյուրն ունի իր սեփական մոտեցումներն ու վարկանիշը: Պետական չափորոշիչներում, ուսումնական առարկայական ծրագրերում, դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում ամրագրված մասնագիտական կրթության բովանդակությունը հանդիսանում է կրթական գործընթացի մասնակիցների փոխներգործության հիմքը:

Կոնկրետ իրավիճակում կրթական գործընթացի յուրաքանչյուր մասնակից ցուցաբերում է իր սուբյեկտիվությունը, այլ սուբյեկտների հետ փոխներգործության ձգտումները, դրանով ներգործելով կրթական գործընթացի կոլեկտիվ սուբյեկտի՝ մասնագիտական պատրաստության միասնական արժեհիմնատային կողմնորոշիչներով միավորված ուսանողների և դասավանդողների

ակադեմիական հանրույթի կայացման գործընթացի վրա:

Այդ գործընթացների համակարգային կառուցման համար նպատակահարմար է մասնագետների պատրաստման որակի մշտադիտարկման կենտրոնի ստեղծումը, որի ռազմավարական նպատակը կլինի բուհում Բոլոնյան գործընթացի այն հիմնադրույթին համապատասխան որակի քաղաքականության ձևավորման նպաստելը, ըստ որի, որակը բարձրագույն կրթության համակարգի կատարելագործման անկյունաքարն է: Այս նպատակին հասնելու համար պետք է որոշել խնդիրների համակարգը.

- մասնագետների պատրաստման մասին՝ բուհի ուսանողների, դասավանդողների, աշխատակիցների և շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության մասին՝ գործատուների կարծիքների պարբերական ուսումնասիրությունների կազմակերպում,
- տեղեկույթի հավաքագրման մշակման, վերլուծության, գնահատման, կանխատեսման տեխնոլոգիայի մշակման, մասնագետների պատրաստման որակի բարելավման ձգտումների վրա հիմնված բուհում ուսանողների և դասավանդողների հանրույթի ձևավորում,
- ֆակուլտետների, ամբիոնների կոլեկտիվներում և ուսանողական խմբերում մշտադիտարկման արդյունքների պարբերական քննարկումների կազմակերպում,
- բուհում մասնագետների պատրաստման որակի կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների և երաշխավորությունների ներկայացում կառավարման սուբյեկտների քննարկմանը:

Բուհի ամբիոնների մանկավարժական կոլեկտիվները պետք է հստակ պատկերացնեն՝ ինչպիսի մասնագիտական և անձնային որակների պետք է տիրապետի բուհի ուսանողը՝ կրթության ոլորտի ապագա մասնագետը: Ընդ որում, հնարավոր է, որ շահագրգիռ կողմերի պահանջները իրարից տարբեր լինեն: Այս հակասության մեջ մենք տեսնում ենք մասնագետների պատրաստման որակի բարելավման դրդապատճառներից մեկը:

Այնուհետև, անհրաժեշտ է յուրաքանչյուր ուսանողի համար բուհում մշակված որակի չափանիշներին համապատասխան կանխատեսել պատրաստության նպատակները: Դա մասնագետների պատրաստության ՈԱԳԿ կարևոր տարրերից մեկն է: Իսկ արդյունքների կանխատեսումը կախված է կրթական ուղեծրից և կազմվում է ուսանողների հետ մասնագիտական պատրաստության սկզբում:

Այս փուլում կրթության ՈԱԳԿ սուբեկտներ են հանդես գալիս դասավանդողները, կուրսղեկները, ուսանողները և ուրիշները: Այս փուլի իրականացման ժամանակ տեղի է ունենում նպատակների, արժեքների և մասնագիտական պատրաստության իմաստի գիտակցում, սեփական հնարավորությունների, կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների մասնագիտական հետաքրքրությունների հետադարձ կապ:

Յուրաքանչյուր բուհ մասնագիտական պատրաստության գործընթացը կազմակերպում է իր կադրային, նյութատեխնիկական և ֆինանսական հնարավորություններին համապատասխան, օգտագործելով կառուցվածքային ստորաբաժանումների, ֆակուլտետների, ամբիոնների կուտակած փորձը, գիտամանկավարժական ավանդույթները: Ընդ որում, հաշվի է առնվում բարձրագույն կրթության ժամանակակից զարգացումներն ու զարգացման միտումները, պետության և հասարակության պահանջները մասնագետների պատրաստության որակի

նկատմամբ: Ստեղծված են նոր մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ժամանակակից հատուկ դասընթացների ներդրման, ուսանողների կողմից սեփական կրթական պահանջմունքների բավարարման ու կրթական ուղեծիրը ընտրելու հնարավորություններ: Այս փուլում, հիմնական խնդիրը յուրաքանչյուր ուսանողի և դասավանդողի մասնագիտական դիրքորոշումների ազատ արտահայտումն է պահանջների և հետաքրքրությունների համակարգի կառուցման համար:

Հաջորդ՝ կրթական հարացույցի ընտրության փուլը սերտորեն կապված է նախորդ՝ պահանջները բուհի հնարավորություններին համապատասխանեցնելու փուլի հետ, քանի որ կրթական հարացույցի ընտրությունը պետք է իրականացվի յուրաքանչյուր դասավանդողի և ուսանողի կողմից գիտակցած՝կրթական գործընթացի կոլեկտիվ սուբյեկտի մակարդակով: Անձնուղղորդ հարացույցը ենթադրում է ըստ բովանդակության և կազմակերպման տարբեր կրթական գործընթացներ: Անձնուղղորդ հարացույցը ենթադրում է ուսանողների անձի զարգացման, նրանց, որպես մասնագետի կայացման, նրանցից յուրաքանչյուրի պահանջմունքների նկատմամբ մշտական ուշադրություն, բուհում մարդասիրական միջավայրի ստեղծում: Բուհում առաջատար համակարգածին ուղղությունը պետք է լինի անձի կրթության անընդհատ զարգացնող հայեցակարգը, որը սկզբունքորեն տարբերվում է մասնագետների պատրաստման ավանդական պրակտիկայից:

Բուհական պատրաստության ժամանակաշրջանում կարևոր է ապագա մասնագետի ուսուցման և դաստիարակության առավել արդյունավետ տեխնոլոգիաների կիրառման պայմանների ստեղծումը, և առաջին հերթին, կապված ապագա մանկավարժի մասնագիտական զարգացման ամբողջական իրավիճակների ստեղծման լայն հնարավորությունների, մանկավարժական փորձի բազմաթիվ տեսակետների ընդհանրացման, կրթական գործընթացի մասնակիցների իրատեսական կենսագործունեության հետ: Կրթական հարացույցը նշանակալի չափով որոշում է մասնագիտական պատրաստության ավանդական նպատակային դիրքորոշումների փոփոխությունները, որը իր հերթին ներազդում է մասնագետների պատրաստման որակի չափանիշների և այդ որակի ապահովման գործընթացի համակարգային կառավարման փոփոխության վրա:

Այս փուլի իրականացման ընթացքում կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների ինքնազարգացման համար ստեղծվում են բոլոր մակարդակների անհատական և կոլեկտիվ սուբյեկտների պահանջմունքները և հետաքրքրությունների հաշվառման նպաստավոր հնարավորություններ:

Այսօր մասնագիտական գործունեությունը ուսուցչից պահանջում է մշտական ինքնակրթություն ու ինքնազարգացում, և, կապված դրա հետ, ժամանակակից մանկավարժական կրթության ռազմավարությունը կայանում է ապագա ուսուցչի պրոֆեսիոնալ–անձնային զարգացման և ինքնազարգացման մեջ: Պրոֆեսիոնալ–անձնային զարգացման և ինքնազարգացման մեխանիզմը մանկավարժի՝ իր անձնային կրթական–զարգացնող միջավայրի յուրահատուկ ինքնակազմակերպումն է, որտեղ նա հանդես է գալիս որպես մասնագիտական կայացման և ինքնազարգացման սուբյեկտ:

Հաջորդ փուլը մասնագետների պատրաստման գործընթացի որակի գնահատման չափանիշների ընտրությունն է: Մասնագետների պատրաստման գործընթացի որակի գնահատման չափանիշների ընտրության ժամանակ, ամենից առաջ, պետք է կողմնորոշվել որակի նկատմամբ պետական պա-

հանջների վրա, և հաշվի առնել որակի ներբուհական չափորոշչի առանձնահատկությունները: Պետական մակարդակում մասնագետների պատրաստման որակը գնահատվում է կրթական գործընթացի պայմանների լիցենզավորման պահանջներով, կրթության բովանդակության, մակարդակի և հաստատության ատեստավորման պահանջներով, կրթական գործընթացի նպատակների, պայմանների, բովանդակության և արդյունքների հավատարմագրման ցուցանիշներով: Մասնագետների պատրաստման գործընթացի և արդյունքների չափանիշները հստակ նշվում են մինչև կրթական գործընթացը, այնուհետև, պարբերաբար մշտադիտարկվում մինչև գործընթացի ավարտը: Ընդ որում, անպայման պետք է հաշվի առնել բարձրագույն կրթության համակարգի զարգացումները, որոնք նոր պահանջներ են ներկայացնում որակի նկատմամբ:

Բուհում մանկավարժ մասնագետների պատրաստման որակի ամփոփիչ գնահատումը կարող է ներկայացվել մի խումբ չափանիշների հանրագումարի տեսքով՝ կրթական գործընթացի սուբյեկտների նպատակային կողմնորոշումների որակ, պատրաստման բովանդակության որակ, կրթական տեխնոլոգիաների որակ, ապագա մասնագետների պատրաստման արդյունքների որակ: Այս պարագայում, պատրաստման որակը դիտվում է, որպես որոշակի ամբողջականություն՝ օժտված ընդհանրական հատկություններով, և չի բերվում առանձին տարրերի պարզ գումարի:

Այս քայլի իրականացման գործընթացում առաջատար տեղը պատկանում է կրթական գործընթացի սուբյեկտների երկխոսային ներգործություններին, քանի որ առաջին պլան է մղվում ընդհանուր պահանջների, նպատակների և արժեքների խելամիտ համադրումը անհատ սուբյեկտների նպատակների և արժեքների հետ: Երկխոսային ներգործությունների նախագծումն իրականացվում է իմաստային մակարդակով, այլ ոչ թե կրթական գործընթացում դիրքորոշումներով կամ կառավարման հիերարխիայով: Այդ պատճառով ստեղծվում է միջսուբյեկտային միջավայր, որտեղ հատվում են անհատական արժեքներն ու իմաստները: Կառավարման սուբյեկտների խնդիրը այդպիսի երկխոսության համար նպաստավոր պայմանների ապահովումն է, տարբեր մակարդակներում մասնագիտական պատրաստության խնդիրների լուծման փոխադարձ ընդունելի որոշումների որոնումը:

Որակի ապահովման գործընթացի ամբողջացման և որակի հիմնավոր գնահատման հարցում առանձնապես կարևորվում է մասնագետների պատրաստման գործընթացի մշտադիտարկման մեխանիզմների մշակման և իրականացման փուլը, անշուշտ, շեշտը դնելով դիագնոստիկայի իրականացման մակարդակների վրա: Որպեսզի որոշվի ուսանողի հնարավոր մուտքը մասնագիտություն, ամենից առաջ, անհրաժեշտ է իրականացնել ուսանողների հնարավորությունների, կրթության ոլորտի ապագա մասնագետների մասնագիտական կայացման արդյունավետության, նրա հետաքրքրությունների, հակումների, մասնագիտական դրդապատճառների յուրահատկությունների սկզբնական դիագնոստիկա: Այնուհետև դիագնոստիկա՝ այն չափանիշներին համապատասխան, որով իրականացվելու է մշտադիտարկում և մասնագիտական պատրաստության որակի գնահատում:

Սկզբնական դիագնոստիկան նպատակահարմար է իրականացնել ուսանողների ընդունելությունից անմիջապես հետո, մինչև պարապմունքների սկսվելը, որպեսզի ֆակուլտետները, ամբիոնները, դասավանդողները, ուսանողների հետ անմիջականորեն

աշխատողներն ունենան հստակ պատկերացում ուսանողների նախնական մասնագիտական պատրաստվածության մակարդակի մասին: Դիագնոստիկայի գիտամեթոդական ապահովումը պետք է լինի կենտրոնացված, որպեսզի գնահատումը կատարվի միևնույն չափանիշներով, այդ պարագայում հնարավոր կլինի համեմատել մասնագիտական պատրաստության որակը տարբեր ֆակուլտետներում, ամբիոններում, առանձնացնել բուհում մասնագետների պատրաստման որակի կատարելագործման միտումները: Այդ տեսակետից, որոշակի նշանակություն ունի ուսուցման կրեդիտային համակարգով սովորող ուսանողների ուսումնական ձեռքբերումների գնահատման վարկանիշային համակարգը, որը չի խախտում գնահատման ավանդական համակարգը, սակայն, էապես մեծացնում է հնարավորությունները, նպաստում ուսանողների ձեռքբերումների ավելի ստույգ, օբյեկտիվ և օպերատիվ գնահատմանը:

Այս քայլի իրականացման գործընթացում ստեղծվում են նպաստավոր պայմաններ ուսանողների կողմից ուսումնական նյութը յուրացնելը մասնագիտական անձնային զարգացման հետ համադրելու հարցում ավելի բարձր արդյունքների հասնելու, բուհում կրթական մթնոլորտի ու կրթական գործընթացի սուբյեկտների փոխհարաբերությունների բարելավման համար:

Հայաստանի Հանրապետությունում ի սկզբանե ձևավորվեց գնահատման համակարգ, որտեղ ուսումնական հաստատությունների կրթական գործունեության լիցենզավորման գործընթացը առանձնացված է հաստատության ատեստավորման գործընթացից: Ենթադրվում էր, որ հետագայում, «Կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, բացը կարող էր լրացվել ուսումնական հաստատության գործունեության համալիր գնահատման՝ լիցենզավորման, ատեստավորման և պետական հավատարմագրման գործընթացների միասնական նպատակների, սկզբունքների, խնդիրների միասնականացման և սահմանման հիման վրա: Սական, իրականում, կառավարման միևնույն մարմնի կողմից իրականացվող այդ գործընթացները, այդպես էլ մնացին տարանջատված, անդեմ, նպատակների ու սկզբունքների լիակատար բացակայության և խնդիրների ոչ ամբողջական ու անորոշ ձևակերպվածության պայմաններում: Ավելին, օրենքով ամրապնդվեց տրամադրվող լիցենզիաների անժամկետ լինելը, իսկ պետական հավատարմագրման համար ժամկետներ չսահմանվեցին ընդհանրապես: Այդ պատճառով էլ, մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման հայաստանյան մոդելն իր որակի ապահովման հետևողականության, փուլայնության, դիագնոստիկ անվիճելի առավելություններով հանդերձ, մատնվեց անգործության: Մինչդեռ, ուսումնական հաստատությունների ուսումնական գործունեության ինքնավերլուծության ու անկախ փորձագիտական վերլուծության և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացները, հստակ ցուցիչների ու չափանիշների առկայության պայմաններում, համալիր պրոֆեսիոնալ մակարդակով իրականացնելու պարագայում ակնհայտ կդառնար մոդելի արգասաբերության ներուժը:

Պետական հավատարմագրման մոդելի ոչ բնականոն գործողությանը նպաստեց նաև որակավորումների ազգային շրջանակների և մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների բացակայությունը, ավելի ուշ, նաև, մշակվածները օրենքով սահմանված կարգով ուժի մեջ չմտնելը:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի կրթության լիազոր մարմնի ենթակայությունից դրա դուրս բերումը, կրթության որակի ապահովման, ուսուցման որակի հսկման և պետական հավատարմագրման գործառույթների կենտրոնի վերապահելը միանգամայն արդարացված է: Սակայն, այդ գործառույթների իրականացման ոլորտներում խորհրդատվական իրավասությունները որակի ապահովման ազգային կենտրոնին վերապահումը լուրջ խոչընդոտ կարող է լինել այդ գործառույթների պատշաճ իրականացման հարցում: Այդ ենթատեքստում, ենթադրվում է նաև, որ արդյունավետ կլիներ նաև լիցենզավորման գործառույթների իրականացման համար այլ պետական կառույցի՝ կրթության լիազոր մարմնի ենթակայությունից դուրս ստեղծումը, քանի որ մասնագիտական ուսումնական հաստատությունների գերակշիռ մասը գտնվում է կրթության լիազոր մարմնի ենթակայության տակ: Այսպիսի պայմաններում՝

- կրթական գործունեության լիցենզավորման պայմանների ապահովման պատասխանատու պետական հատվածի մասով կհանդիսանա ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, մասնավոր հատվածի մասով՝ հիմնադիրները.
- կրթական գործունեության լիցենզավորման (հետագայում, լիցենզիաների ժամկետավորման պարագայում նաև՝ վերալիցենզավորման) գործընթացների իրականացնողը՝ մեր կողմից առաջարկվող կառույցի.
- կրթության որակի ապահովման, ուսուցման որակի հսկման և պետական հավատարմագրման գործառույթների իրականացնող ու դրա ցուցիչների ու չափանիշների սահմանողը՝ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը:

Նման պարագայում իրավասություններն ու պատասխանատվությունները կբաշխվեին կրթական ուղղվածություն ունեցող կառույցների միջև, կունենային կոնկրետ հասցեատեր և ամենևին էլ կարիք չէր լինի վերահսկման իրավասություններ շնորհել բազմաթիվ կառույցների: Բացի այդ, մոդելի գործողության համար անհրաժեշտ, գրեթե առանց ֆինանսական ծախսերի, հաստատությունը գործունեության պայմանների բարելավման աճ չարձանագրելու, կրթական գործընթացի և թողարկվող շրջանավարտների որակ չապահովելու դեպքում ուղղակի չի կարողանա վերալիցենզավորվել, ստանալ կամ պահպանել պետական հավատարմագիրը, կմարեն բնականոն ճանապարհով և պետական միջամտության կարիք չի լինի: Մյուս կողմից, մտահոգությունն արդեն թողարկված ոչ որակյալ կրթություն ստացած և ստացող ուսանողների մասով արդեն ժամկետանց է, քանի որ նրանց թիվը ոչ հազար է, ոչ էլ երկու հազար: Այս հարցում, թերևս, առկա է մտահոգությունը փարատող հանգամանք՝ աշխատաշուկայում դիպլոմի արժեզրկումը բերում է մասնագիտական կոմպետենտության արժեքի բարձրացման: Աշխատանքի մասնավոր հատվածում վաղուց արդեն մերժվում են նույնիսկ «վարկանիշ» ունեցող մի քանի դիպլոմներ ունեցող ոչ կոմպետենտ մասնագետները: Ուստի որակի գնահատման պարբերական և ցիկլիկ աշխատանքի ուղղորդումն ու դրա կատարելագործումը կլինի նորություն հայկական մասնագիտական կրթության ոլորտում և, անշուշտ, հնարավորություն կընձեռի ուսումնական հաստատությունների կրթական գործունեության պայմանների բարելավման, կրթության որակի ապահովման հարցերում:

Միաժամանակ, ՌԱԳԿ ոլորտում մեխանիզմների ազատականացումը պե-

տական կառավարման մարմիններին ինքնին կազատի լրացուցիչ հոգսերից ու մտահոգություններից, իսկ ամենակարևորը՝ մեխանիզմների անխափան աշխատանքը ոլորտում կապահովի օրինապահություն, ուսումնական հաստատությունների բնականոն գործունեության և զարգացման, թողարկվող մասնագետների որակի երաշխիքներ:

Այսպիսով, մասնագետների պատրաստման ՈԱԳԿ համակարգի դիտարկումը ցույց է տալիս, որ ՈԱԳԿ թույլ է տալիս կրթական գործնթացի մասնակիցների ուշադրությունը և կառավարման սուբյեկտների ջանքերը բևեռել ոչ միայն որակի արտաքին չափանիշների, վրա այլ նաև պրոֆեսիոնալ մանկավարժական արժեքների վրա:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 11.04.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հ.Հ. Պետրոսյան** Մասնագիտական կրթության որակի ապահովման գործընթացի կառավարման մանկավարժական տեխնոլոգիաներ, «Ան–Ջոն» հրատարակչություն, 2010, 520 էջ:
2. **Հ.Հ. Պետրոսյան** Կրթական ծրագրերի հավատարմագրման հիմնախնդիրների մասին, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», N 1(618), Հունվար–ապրիլ, 2007:
3. Որակի ապահովման բուհական համակարգեր, Ուղեցույց, (կազմեցին **Յու. Սարգսյան, Ռ. Աղգաշյան, Հ. Բալաբանյան, Ա. Գրիգորյան, Ա. Բուդաղյան**), Եր., 2009:
4. **Петросян Г. А.** Психологические проблемы обеспечения качества образования и профессиональной учебной деятельности. Периодический научный журнал «Новация», Кутаиси, N7, 2010, с.262–267.
5. **Петросян Г. А.** Вопросы обеспечения качества профессионального образования. Вестник Кыргызско-Российского Славянского университета N5, том 11, 2011, с.148–150.
6. Процедуры оценки качества в Европейском высшем образовании. Исследование ЕСОК. Международная Стратегическая Группа Экспертов. www.iseg.ru/sessions/s6/dieced.doc.
7. **Салахов М. Х., Михайлов В. Ю., Гостев В. М.** Ресурсный центр как основа формирования и развития образовательного округа классического университета. Интеграция образования. 2004. № 1. С. 18–26.
8. **Соболев В.С., Степанов С.А.** Концепция, модель и критерии эффективности внутривузовской системы управления качеством высшего профессионального образования. Университетское управление, 2004. № 2 (31). С. 102–110.
9. **Щеглов П. Е., Никитина Н. Ш.** Качество высшего образования. Риски при подготовке специалистов. Университетское управление: практика и анализ. Екатеринбург, 2003. № 1 (24). С. 52–59.
10. ГОСТ РИСО 9001–2000. Системы менеджмента качества. Требования. М.: ИПК Издательство стандартов, 2000.
11. **Petrosyan H. H.** The Accreditation and Quality Assurance of Education, Санкт–Петербург, Личность и культура, N2 (54), 2010, 50–51.
12. **Petrosyan H. H.**, Accreditation of Higher Educational Insituitions in the Context of the Governmental Process of Education Qualiti Control, Известия Российского Государственного Педагогического Университета им. А.И. Герцена, Санкт–Петербург, N 125, 2010, 140–144.
13. **Petrosyan H. H.** Several Questions on Supervision and Fulfilment of the Process of Assurance of Professional Educational Qualiti, Mkhitar Gosh, N2, 2010, 101–104.
14. Quality Procedures in European Higher Education. European Network for Quality Assurance. http://www.enqa.net/texts/procedures.pdf.
15. Benchmarking in higher education. European Network for Quality Assurance. http://www.enqa.net/texts/benchmarking.pdf.

СИСТЕМА УПРАВЛЕНИЯ КАЧЕСТВОМ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ И ОБЕСПЕЧЕНИЕ КАЧЕСТВА ПЕДАГОГИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ

ПЕТРОСЯН ГАЙК

Доктор педагогических наук, доцент,
Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна,
руководитель центра внедрения инновационных технологий и оценки качества

В статье представлена система обеспечения качества высшего образования и системный подход к управлению процессом обеспечения качества педагогического образования. Система управления представлена как инструмент обеспечения качества профессионального образования, обобщен опыт автора по созданию и совершенствованию системы менеджмента качества образовательных услуг. Система управления рассматривается как модель управления качеством подготовки специалистов в вузе.

Дата представления статьи 11.04.2012

QUALITY MANAGEMENT SYSTEM OF HIGHER EDUCATION AND ENFORCEMENT QUALITY OF PEDAGOGICAL EDUCATION

HAYK PETROSYAN

Doctor of Sciences (Pedagogy), Docent
Armenian State Pedagogical University After Kh. Abovyan,
The Head of the Centre of Contribution of Innovative
Technologies and Quality Assessment

The article presents quality assurance system of higher education and a systematic approach to the management process to ensure the quality of teacher education.The control system is presented as a tool to ensure the quality of vocational education, the author summarizes the experience of the creation and improvement of the quality management of educational services. The control system is considered as a model of quality management training at the university.

Article submission date 11.04.2012

ԱԻԴԱ ԹՈՓՈՒԶՅԱՆ

Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժության դոկտոր

ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

ՀՏԴ 37.01

Հոդվածում քննարկվում են կրթության քաղաքականության և կրթության բնագավառի քաղաքականության առանձնահատկությունները, ներկա պայմաններում կրթության ազգային դոկտրինա ունենալու անհրաժեշտության հարցը, կոնկրետ օրինակի վրա ցույց է տրվում կրթության բնագավառի քաղաքականության և պրակտիկ մանկավարժության անհամապատասխանությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ ՝ կրթության քաղաքականություն, կրթության բնագավառի քաղաքականություն, կրթության ազգային դոկտրինա, ուսուցչի մասնագիտական ազատություն, իրավունք և այդ իրավունքից օգտվելու հնարավորություն:

Նախքան բուն նյութին անցնելը հարկ ենք համարում խոսել երկու հասկացությունների մասին, որոնք շատ հաճախ կամ շփոթում են կամ նույնացնում: Խոսքը «կրթական քաղաքականություն և «կրթության բնագավառի քաղաքականություն» հասկացությունների տարբերության մասին է:

Կրթական՝ քաղաքականությունը ավելի լայն հասկացություն է. այն ընդգրկում է կրթության բնագավառի քաղաքականությունը և որոշում է քաղաքական դաշտի 3 հիմնական ոլորտները.

- ֆինանսատնտեսական (որոշում է կրթության ֆինանսավորման չափը, դրա բաշխման և օգտագործման տեսակները և ոլորտները),
- իրավական (տալիս է կրթական գործընթացի սուբյեկտների վարքագծի սահմանները և կառավարման մարմինների իրավասությունները),
- մշակութագաղափարական (ընդգրկում է հասարակական գիտակցության դիրքորոշումները և կողմնորոշվածությունը, որոնք ազդում են ինչպես կրթության բովանդակության, այնպես էլ այն որոշումների ընտրության վրա, որոնք որոշակի իրավիճակում թույլատրելի կամ անթույլատրելի են):

Այսինքն՝ մեկ կողմից հաշվի է առնվում կրթության թողած ազդեցությունը երկրի տնտեսության տարբեր ոլորտների վրա, իսկ մյուս կողմից՝ յուրաքանչյուր ոլորտի ազդեցությունը կրթության վրա:

Այսպես օրինակ, կրթության և ազգային անվտանգության կապն առաջներում դիտարկվում էր որպես զինվորական պատրաստության, զինվորական կրթության, հատուկ ծառայությունների համար մասնագետներ պատրաստելու միջոց:

Ժամանակակից պայմաններում «Կրթության դերն աճում է, միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը» [1 էջ 7]: Ավելին, կրթությունն ինքն է վերաճում ազգային անվտանգության գործոնի, քանի որ ցանկացած պետության ազգային անվտանգությունը կարող է ապահովված լինել միայն հաջող արդիականացման հիմքի վրա: Իսկ կրթությունը և՛ արդիականացման, և՛ երկրի ազգային անվտանգության ապահովման ինքնատիպ գործոն է: Այն ժամանակակից պետության տնտեսական և ռազմական անվտանգության վրա ազդեցություն ունի, թեկուզ նրանով, որ առանց բարձրորակ կադրերի անհնար է ապահովել երկրի արդիականացումը և, հետևաբար, նաև ռազմական անվտանգությունը: Հնարավոր չէ ապահովել նաև երկրի տեխնոլոգիական անվտանգությունը՝ առանց համապատասխան կադրեր պատրաստելու, գիտական ներուժի և գիտական գործնական մշակումների ու ծրագրերի: Մասնավորապես սա վերաբերում է ժամանակակից տեղեկատվական համակարգերի օգտագործման մշակույթը ձևավորող կամ ԶԼՄ-ների հրապարակումների նկատմամբ քննադատական վերաբերմունք ու տողատակը հասկանալու հմտություն ձևավորող հատուկ կրթական ծրագրերի մշակման գործընթացին:

Կրթությունը՝ ամբողջությամբ վերցրած, մշակութային զարգացման անվտանգության հիմքն է: Ոչ մի պետություն, ազգ չի կարող գոյատևել և զարգանալ առանց արժեքային համակարգի. հակառակ դեպքում՝ ազգը կդառնա ամբոխ: Ուստի, ժողովրդի արժեհամակարգի ձևավորման գործում առաջին տեղը գրավում է կրթությունը:

Կրթության դերը երկրի արդիականացման և ազգային անվտանգության ապահովման գործում պայմանավորված է նրա՝ տեղեկատվական հասարակության անցմամբ (պրոֆեսիոնալների հասարակություն, գիտելիքների հասարակություն, համակարգչային հեղափոխություն), որի արդյունքում սոցիումի կյանքում որակական փոփոխություններ են կատարվում: Ի տարբերություն արդյունաբերականի՝ դեպի տեղեկատվական հասարակության անցում կատարելու պայմաններում կրթությունն ավելի շուտ վերաճում է ոչ թե հասարակության ռեսուրսներն օգտագործող, այլ տնտեսական և սոցիալական զարգացման կարևորագույն ռեսուրսներ ստեղծող գործոնի (ստեղծագործական ներուժով օժտված բարձրորակ կադրեր):

Եվ վերջապես, կրթությունը միաժամանակ հանդես է գալիս որպես հասարակության սոցիալ-քաղաքական բնագավառի արդիականացման գործոն: Այն նպաստում է շարքային քաղաքացիների սոցիալ-քաղաքական և իրավական գիտակցության աճին, ժողովրդավարության զարգացմանը, քաղաքական մշակույթի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը:

Այսպիսով, պետության արդիականացումը և ազգային անվտանգության ապահովումը ոչ միայն հնարավոր չէ իրականացնել միայն կրթական քաղաքականության բարեփոխման միջոցներով, այլև անհնար է այն կենսագործել կրթական քաղաքականությունից առկախ, առանց դրա սկզբունքային փոփոխության: Հաշվի առնելով այս հանգամանքը, մեր կարծիքով, օգտակար կլիներ մշակել կրթության զարգացման միասնական հայեցակարգային փաստաթուղթ, այսպես կոչված՝ կրթության դոկտրինա, մեր երկրի պաշտպանության դոկտրինայի օրինակով, որտեղ հստակորեն նշվեին կրթության ընդհանրական խնդիրները, որից հետո միայն ամրագրվեր, թե դրանցից որը տնտեսության որ ոլորտում կամ կրթական ո՛ր աստիճանում է լուծվելու, և որոնք են այն ընդհանուր խնդիրները, որոնց լուծմանը պետք է մասնակցեն տնտեսության այլ ոլորտները կամ կրթության բոլոր աստիճանները կամ ողջ համակարգը:

Այստեղ կարող է հարց առաջանալ՝ ինչի համար է կրթության դոկտրինան, եթե ունենք կրթության զարգացման ազգային ծրագիր: Այս հարցը ծագում է հենց այն պատճառով, որ շփոթում ենք կրթական քաղաքականությունը կրթության բնագավառի քաղաքականության

հետ: Բանն այն է, որ կրթության զարգացման ծրագիրը կրթության բնագավառի քաղաքականության իրականացման գործիք է: Մինչդեռ դոկտրինան դրա հետ միասին կձևավորի մեր երկրի տնտեսության ցանկացած ոլորտի կրթական բաղադրիչը և կկանխատեսի դրանցից յուրաքանչյուրի ոչ միայն կրթական հետևանքները, այլև ազդեցությունը կրթության ոլորտի վրա: Բացի դրանից՝ չպետք է մոռանանք, որ դեռևս 1992 թվականին «հանուն կայուն զարգացման կրթության» մասին (ՀԿԶԿ) Ռիոյի ՄԱԿ–ի գագաթնաժողովում հնչել են քաղաքակրթական զարգացման հարացույցը փոխելու անհրաժեշտության մասին գաղափարներ: Գագաթնաժողովում շեշտվում էր, որ ժամանակակից քաղաքակրթությունը կանգնած է երկընտրանքի առաջ. կամ պետք է զարգացման վեկտորը փոխել ոչ սպառողական արժեքների (մարդկային, հոգևոր) օգտին, կամ էլ քաղաքակրթությանը սպառնում է գլոբալ աղետ, ընդհուպ հնարավոր ինքնաոչնչացում[2]: Նման պայմաններում յուրաքանչյուր ժողովուրդ, ազգ պետք է միջոցներ ձեռք առնի այնպիսի «ազգային գաղափար» գտնելու համար, որը հիմնված կլինի ոչ միայն ազգային մշակույթի ավանդույթների վրա, այլև նպաստի ընդհանուր առմամբ մարդկային զարգացման հեռանկարներին: Մեր երկրի համար նման գաղափար կարող է լինել կրթությունը, քանի որ աշխարհին մենք կարող ենք զարմացնել միայն մեր ուղեղով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս շարադրել որոշ պարամետրեր, որոնք կրթության ազգային դոկտրինայի շրջանակներում կնպաստեն «կրթությունը ազգային գաղափար» դարձնելուն, կրթության պետական քաղաքականության տարբեր ուղղությունները կանոնավորելուն [3, էջ 10]: Այսպես, օրինակ՝

- Աջակցություն հայրենական ապրանքային արտադրությանը և առաջին հերթին դրա բարձր տեխնոլոգիական ոլորտներին: Դա կապահովի երկրի արդիականացումը և կստեղծի բարձրագույն կրթություն, բարձր որակավորում ունեցող աշխատողների պահանջարկ:
- Աշխատանքի կազմակերպման և սեփականության այնպիսի ձևերի զարգացման խթանում, որոնք ապահովում են աշխատողի մասնակցությունը ստացված շահույթը բաժանելու և արտադրությունը ղեկավարելու գործում: Ասենք, ակցիոներական ընկերություններ, որոնք աշխատողից պահանջում են բարձրացնել ոչ միայն պրոֆեսիոնալ, այլև ընդհանուր քաղաքացիական կրթության մակարդակը:
- Հարկային համակարգի ձևավորման շերտավորված բնույթ: Արտադրության խթանման և միաժամանակ սոցիալական անհավասարության սահմանափակմանն ուղղված հարկերի հաստատում: Քաղաքացիների կողմից հայրենական ուսումնական հաստատություններում կրթություն ստանալու համար օգտագործած եկամուտների հարկերից ազատում: Այս քայլը կունենա ոչ միայն տնտեսական, այլև բարոյական նշանակություն, քանի որ դա արտադրության նոր ճյուղերում լրացուցիչ ներդրումներ կատարելու հնարավորություն կընձեռնի և մի կողմից՝ կապահովի մարդկային կապիտալի զարգացումը, իսկ մյուս կողմից՝ հստակ կմատնանշի, թե պետությունը աշխատանքի որ տեսակներին է առաջնություն տալիս:
Существование «разных психологий», которое не раз констатировалось в истории этой науки [5], обусловлено отсутствием единого теоретического аппарата при исследовании разных объектов и проблем. Классическая психология породила огромное количество теорий, но все они были преданы забвению после появления парадигмы бихевиоризма. Лишь спустя несколько десятилетий частично возродились теории классической психологии в когнитивной науке, чем была доказана ошибочность их раннего забвения. Таких забытых теоретических конструктов уйма. Причин «научной амнезии» немало – и то, что у старых концепций было много недостатков и трудно было отделить золото от руды; – и то, что в науке (тем более – в гуманитарной) мода часто сильнее логики; – и то, что порой отсутствовала уверенность в правильности собственой парадигмы и её легко отвергали вместо улучшения (исключение составляют «самоуверенные» психоаналитики и бихевиористы, не раз обновляющие свою теорию). Такое пренебрежение традициями означает, что большинство психологов кладут «кирпичи» знания рядом, а не друг на друга. Наверно, поэтому и не воздвигается до сих пор «вавилонская башня» психологии.

Хрупкость теоретических конструкции по сравнению с психологической реальностью породила еще одну тенденцию – описание и накопление фактов без их соотношения с основными теоретическими концепциями. Эта тенденция тоже вошла в моду, еще больше ослабляя объяснительный потенциал науки, увеличивая метафоричность языка психологии и оставляя у него лишь описательную функцию.

Все эти академические проблемы не раз были предметом анализа в фундамен-

тальной науке [2]. Те же самые проблемы малозаметны, но играют существенную роль при понимнии и решении вопросов, которые ставит жизнь. А она сегодня ставит вопросы исключительной сложности.

Конец двадцатого столетия ознаменовался демонтажом СССР. На постсоветском пространстве произошла смена общественно–политической системы, т.е. изменилась социальная среда людей. С одной стороны, характер трансформации общества является следствием ряда психологических факторов, а с другой – сам влияет на психическое состояние людей. Психологический анализ должен рассмотреть оба аспекта.

Понять упомянутое сложное переплетение причинных связей, наверно, возможно в том случае, если от описания перейдем к объяснению. Но в объяснении тоже немало вариантов. Явление можно объяснить локальной теорией, созданной только для исследуемого случая (теория ad hoc). Более полноценное объяснение строится на основе общей теории, которая стремится общими закономерностями объяснить конкретное явление. Мы считаем, что даже в упомянутой глобальной проблеме психологи должны постараться объяснить поведение человека в трансформированном обществе на основе общепсихологических моделей. Проблема в том, что альтернативных общепсихологических моделей слишком много. Поэтому должен быть сделан выбор. Мы выбираем общепсихологическую теорию установки Д.Н.Узнадзе [8].

Теория установки, как и все другие общие теории психологии, стремится объяснить адаптацию к среде живого существа, т.е. существа с определенной мотивацией. В отличие от бихевиоризма она считает, что ключевым в процессе адаптация является не поведение, а установка – целостное психосоматическое состояние организма, предопределяющее и поведение и переживание. Выделяется такая её форма, как фиксированная в жизненном опыте установка, латентно данная в мнемических структурах. Экспериментальные исследования, в основном, были направлены на изучение особенностей фиксированной установки. Оказалось, что при смене ситуации на первых порах всегда нарушена адаптация, так как фиксированная ранее установка мешает адекватной реакции. Чем сильнее трансформирована ситуация, тем сильнее влияние ранее фиксированной установки. Сама установка фиксируется как реальной ситуацией, так воображаемой. Кроме этих эмпирических закономерностей теория считает, что если среда пассивна, то субъект стремится к свободной реализации фиксированных установок (игра, фантазии, творчество, сновидения) и называет это стремление функциональной тенденцией. Рассмотрим упомянутые выше политические процессы через призму данной теории.

Для психологического анализа должно быть значимо, что разложение СССР началось гораздо раньше 90–ых годов, началось тогда, когда сформировался внутренний протест против существующей социальной среды и позитивное отношение к западу, как к свободному миру [4]. Формирование позитивного отношения к западу, в основном, происходило под влиянием воображаемой реальности, созданной СМИ, фильмами, книгами и т.д. (исключение составляют прибалтийские республики, где у граждан сохранился реальный опыт западного образа жизни). Эти установки по–разному сформировались в разных республиках. Они превалировали в культурах, ориентированных на западную цивилизацию. В республиках, где доминировал ислам, такая поляризация установок отсутствовала. На таком психологическом фоне по чисто политическим соображениям [7] произошел

демонтаж СССР – «железной руки» уже не стало. Из изложенных выше теоретических положениях надо предполагать, что с ослаблением давления социальной среды устремились к реализации фиксированные ранее установки.

Под влиянием этих установок в одних странах произошла резкая, революционная трансформация общества, в других – эволюционная. Примером первого могут быть Россия и Украина, страны Южного Кавказа, частично – прибалтийские государства. Примером второго – Белоруссия и бывшие республики Средней Азии. Резкая транформация наблюдалась как раз там, где страна стала поприщем нереализованных ранее политических или экономических установок, которые были сформированы без знания и учета реальных факторов ситуации. В этих странах перед людьми до сих пор стоит проблема психологической адаптации к кардинально трансформированной социальной среде. На это указывают как прямые (вопросы и публикации), так и косвенные показатели (повышение статистических показателей самоубийств, девиантного поведения, психосоматических заболеваний и т.д.). Социальная среда стала более (по сравнению с периодом СССР) непредсказуемой и безжалостной. В информационном пространстве преобладают ценности массового сознания, угрожающие личностной уникальности человека [1]. Сообщения о разных формах насилия уже никого не удивляют [6]. Слишком большая разница между ожиданием (установкой) и реальностью затрудняет реадаптацию и порождает новые политические процессы.

Крайне важна и интересна постсоветская судьба России. Россия сперва сделала резкие шаги в сторону либерализации экономики и политики. В эпоху Ельцина у страны отсутствовал инстинкт самосохранения – установка на европеизацию России затмила все остальные стратегии. Известно, что в психике работает механизм селекции – сильная концентрация на определенном содержании вызывает блокировку остальных. Чем сложнее воспринимается задача, тем круче проводится селекция. На ельциновском этапе развития России наиболее сложным представлялась либералиция экономики. Поэтому «сужение» политического сознания этой задачей, наверно, объяснимо.

Односторонность дала свои результаты. Россия начала вписываться в цель Рейгана – превратить Россию в отсталую и слабую капиталистическую страну. Политическая элита и народ отреагировали на это. Настал период правления Путина, который чувствовал требование электората. Появились новые формулы, в частности, развал СССР оценивался «катастрофой двадцатого века». Наиболее сильной оппозицией стали левые партии, большинство граждан стали поддерживать вооруженные операции как внутри страны, так и по отношению соседних государств и т.д. Создается впечатление, что политические установки россиян, которые сформировались в советскую эпоху, возродились и продолжают влиять на менталитет и поведение людей сегодня [3]. Получаем что–то похожее на эффект Зейгарник. Установки, сформированные в советское время и блокированные в период Ельцина, стремятся к реализации. К.Левин такое положение объяснял законом прегнантности гештальта, Д.Н.Узнадзе – функциональной тенденцией фиксированных ранее установок.

Наглядно раскрываются психологические механизмы и в грузинском опыте. Стремление к освобождению от России, зафиксированное на протяжении 200 лет, стало приоритетным и чувство свободы открыло путь к его реализации. Но опять подвела неадаптированность – в порыве чувств остались незамеченными политические мины сепаратизма, заложенные

ещё в советское время. В результате пролилась кровь. Не будь упомянутого психологического механизма гипертрофированной селекции, наверно, можно было найти более адекватные и адаптированные стратегии политического поведения.

Эти хорошо знакомые нам несколько примеров и логика анализа заставляют думать, что концепция установки может служить основой для построения теории поведения человека в трансформационном обществе. Поэтому работа в этом направлении будет продолжена.

Дата представления статьи 09. 04. 2012

ЛИТЕРАТУРА

1. **Борщов Н. А.** Инофрмационное насилие в транформационном обществе. Российское общество: цивилизационные горизонты транформации. Саратов. 2005.
2. **Брушлинский А.В.** Проблема психологии субъекта. МГУ, 1994.
3. **Заславская Т.И.** Социальная транформаци российского общества: Деятельностно–структурная концепция. М.: Дело. 2002.
4. **Зиновьев А. А.** Запад. Феномен западизма. МГУ, 1995.
5. **Имедадзе И.** История психологии. Тбилиси: Изд–во «Мцигнобари», 2008. (на груз. яз.).
6. **Константиновский Д. Л.** Динамика неравенства. Российская молодежь в меняющемся обществе: ориентации и пути в сфере образования (от 1960–х годов к 2000–му). М.: Эдиториал УРСС, 1999.
7. **Сакварелидзе Р. Т.** Россия и Грузия: мифы и реальность. В сб.: Россия и Грузия: пути выхода из кризиса. Тбилиси. 2010.
8. **Узнадзе Д. Н.** Психологические исследования. М.: Наука. 1966.

ON THE THEORY OF HUMAN BEHAVIOR IN TRANSFORMING SOCIETY

IRAKLI IMEDADZE

Director of D. Uznadze Institute of Psychology, corresponding member of Georgian National Academy of Sciences, Doctor of psychological sciences.

RAMAZ SAKVARELIDZE

Head of psychological department of Tbilisi State Medical University, Doctor of psychological sciences.

The article refers to the problems of psychological theory of human behavior in transforming society; an attempt is made to explain the existing political reality from the point of view of the theory of Set.

Article submission date 09. 04. 2012

ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻՈՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ԻՐԱԿԼԻ ԻՄԵԴԱՁԵ

Թբիլիսիի բժշկական պետական համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌԱՄԱԶ ՍԱԿՎԱՐԵԼԻՁԵ

Վրաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, Դ.Ուզնաձեի հոգեբանության ինստիտուտի տնօրեն, հոգեբանական Գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հոդվածում դիտարկվում են տրանսֆորմացիոն հասարակության մեջ մարդկային վարքագծի հոգեբանական հիմնախնդիրները: Փորձ է արվում մեկնաբանելու առկա քաղաքական իրականությունը դիրքորոշման տեսության շրջանակներում:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 09. 04. 2012

ՍԱՄՎԵԼ ԽՈՒԴՈՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր

ՆԱՏԱԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի դասախոս

ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՀԱՅՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՀՏԴ 159.9

Հոդվածի մեջ վերլուծված է հայրական դաստիարակությանը նվիրված հոգեբանական գրականությունը: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ ընտանեկան դաստիարակության մեջ հոր դերն անփոխարինելի է, իսկ հայրական դաստիարակության բացակայությունը լուրջ բացասական հետևանքների է հանգեցնում: Ներկայացված են նաև սեփական փորձարարական հետազոտությունները, որոնք հաստատում են, որ դեռահասների դելինկվենտ վարքը մեծապես պայմանավորված է հայրական դաստիարակության հետ կապված խնդիրներով:

Հանգուցային բառեր՝ դելինկվենտ վարք, դեռահասություն, ընտանեկան դաստիարակություն, հայրական դաստիարակություն, առնականության մոդել:

Ժամանակակից հոգեբանության մեջ հոր դերը երեխայի դաստիարակության գործում հարաբերականորեն թույլ է հետազոտված հատկապես էմպիրիկ առումով, մինչդեռ երեխայի անձի զարգացման գործում հոր ահռելի դերը կարևորել են բազմաթիվ խոշոր գիտնականներ: Այսպես, Ա. Ադլերը գտնում էր, որ երեխայի եսակենտրոնության և անլիարժեքության բարդույթի հաղթահարման, ինչպես նաև հասարակական հետաքրքրության զգացումի առաջացման գործում հոր դերն անփոխարինելի է: Ըստ որում, հեղինակը գտնում է, որ երեխայի անձի վրա բացասաբար են ազդում հատկապես ավտորիտար դաստիարակությունն ու բարձիթողությունը [11]:

Մի շարք հետազոտություններով հաստատվել է, որ այն երեխաները ում դաստիարակությանը ակտիվորեն մասնակցել են հայրերը, մոտորային, ինտելեկտուալ և սոցիալական առումներով, ավելի զարգացած են լինում [17, 18]:

Ըստ Տ. Վ. Անդրեևայի [1]՝ հոր դաստիարակչական ներկայությունը կարևոր է հատկապես տղա երեխաների համար, քանի որ հենց հայրերն են երեխայի համար հանդես գալիս որպես առնականության մոդել, առանց որի սեռային նույնականության գործընթացը էական դժվարություններ կունենա. հենց հորից են երեխաները սովորում տղամարդկային վարքի ձևերը, արժեքային համակարգը, բնավորության գծերը [8]:

Ռուս գիտնական Ա.Ի. Զախարովը, հետազոտելով հոր ալկոհոլամոլության ազդեցությունը երեխայի բացասական հուզական զգայունության վրա, գրում է. «Հիմնական գործոնը, որով կարելի բացատրել այդ երևույթի առկայությունը տղաների և ոչ թե աղջիկների մեջ այն է, որ այդ երեխաները դերային նույնականացման տարիքային պահանջով միջնորդավորված յուրահատուկ ձևով հարմարվել են սպառնացող, իրեն անտրամաբանական պահող հարբած հոր կերպարին, ինչի համեմատությամբ վախը զանազան երևակայական հրեշների կամ ուրվականների հանդեպ ուղղակի խամրում է» [5, էջ 77]: Ըստ հեղինակի՝ երեխայի նևրոտիզացիային նպաստում են հոր անտարբերությունը դաստիարակության նկատմամբ, նրա թույլ բնավորությունը: Հեղինակը նաև նշում է, որ ընդհանրապես եթե կանացի, հատկապես տատիկների դաստիարակությունը գերակայում է տղամարդկային դաստիարակության վրա, ապա հաճախ է երեխայի մեջ նևրոզ զարգանում: Ըստ Զախարովի՝ հայրական անտարբերությունը բացասաբար է անդրադառնում նաև երեխայի ինտելեկտի զարգացման և ուսման վրա: Նա նաև նշում է. «Նույն սեռի ծնողի հետ ոչ բավարար կամ բացասական դերային նույնականացումը մանկության շրջանում լրացուցիչ դժվարություններ է առաջ բերում հասակակիցների հետ շփման ժամանակ և բացասաբար է անդրադառնում ընտանիքում երեխաների հարաբերությունների վրա: Նման բացասաբար գործող փոխհարաբերությունն ավելի բնորոշ է հայրերին, քանի որ իրենք էլ մանկության շրջանում հոր հետ համապատասխան փորձ չեն ունեցել, այսինքն իրենք էլ հոր զավակ չեն եղել, իսկ հիմա իրենք զավակի հայր չեն դարձել» [5, էջ 230]:

Ա.Ի. Զախարովի հետազոտությունները հաստատում են նաև այլ հեղինակների հետազոտություններ: Ըստ Լ. Գրեկոյի, Թ. Մորիսի՝ 8–13 տարեկան այն դեռահասները, ովքեր նևրոտիկ վարք, հուզական խանգարումներ, մասնավորապես դեպրեսիա ունեն, իրենց հայրերին գնահատում էին որպես ավտորիտար անձիք, ովքեր հազվադեպ են զբաղվել իրենց դաստիարակությամբ, ջերմություն չեն ցուցաբերել [16]: Մեկ այլ հեղինակի՝ Դ. Վիտկինի հետազոտությունները, վկայում են, որ հոր ակտիվ մասնակցությունը դաստիարակությանը, ասենք երեխայի հետ հաճախակի խաղալը, համատեղ զբոսանքները, ջերմ վերաբերմունքը և հոգատարությունը երեխայի նկատմամբ ձևավորում են մի շարք դրական գծեր՝ առնականություն տղաների և կանացիություն աղջիկների մեջ, ինքնավստահություն և այլն[2]: Հ. Բիլլերի հետազոտությունները վկայում են, որ հոր և զավակի ջերմ հարաբերությունները ձևավորում են ադեկվատ ինքնագնահատական, այս երեխաները միջանձնային հարաբերություններում ավելի քիչ խնդիրներ են ունենում, ուսման մեջ ավելի բարձր առաջադիմություն են դրսևորում[12]: Ըստ որոշ հեղինակների՝ երեխաների հետ մոր և հոր կողմից իրականացվող խաղերը էապես տարբերվում են, ըստ որում նկատվել է, որ այսպես կոչված հայրական խաղերը նպաստում են երեխայի ինտելեկտի զարգացմանը [15]: Ըստ որում՝ Վ. Ֆտենակիսի հետազոտությունները վկայում են, որ հոր դաստիարակչական ներգործությունը դրական ազդեցություն է ունենում (հատկապես տղաների վրա) ոչ միայն ինտելեկտի, այլև ընդհանուր կոգնիտիվ զարգացման վրա:

Ե.Պ. Իլյինի հետազոտությունները մեկ այլ հետաքրքիր երևույթ բացահայտեցին, որ այն երեխաները, որոնց դաստիարակությանը հայրերն ակտիվորեն մասնակցել են և ովքեր ջերմ, հուզական հարաբերությունների մեջ են իրենց հայրերի հետ, ֆիզիկական աճն ավելի արագ է տեղի ունենում, նրանք ավելի բարձր ինքնագնահատական և կայուն ես–կոնցեպցիա են ունենում, հաջող են ինքնահաստատվում

և հակառակը՝ այն երեխաները, որոնք հայրերից իրենց դաստիարակությանն ակտիվ մասնակցություն և ջերմություն չեն ստացել՝ ցածր ինքնագնահատական են ունենում [6]:

Ըստ Վ. Ն. Դրուժինինի՝ հոր դերը դաստիարակության մեջ կարևորվում է հատկապես ժամանակակից ընտանիքում [4]: Այդ կապակցությամբ Ն. Ա. Կորկինան գրում է. «...պետք է ասել, որ մեր ժամանակներում հայրական ամբիվալենտությունն ուժեղացել է: Հետազոտվող հիմնախնդրի մշակութափիլիսոփայական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու երկու համագոյակցող միտումներ. մի կողմից հոր դերի և ազդեցության թուլացումը (քողարկված անհայրություն, ոչ լիարժեք, մայրական ընտանիքներ), մյուս կողմից տղամարդկանց և կանանց կենսական դերերի փոփոխությունը, առնականության և կանացիության սոցիոմշակութային ստերեոտիպերի փոփոխությունը՝ պայմանավորված ժամանակակից պայմաններում մշակութային պարադիգմերի փոփոխությամբ» [7, էջ 118].

Մի շարք հեղինակներ հետազոտել են ընտանիքում հոր բացակայության ազդեցությունը երեխայի անձի վրա [3, 13, 14]: Բացահայտվել է, որ անհայր ընտանիքը նպաստավոր հանգամանք է զանազան վարքային խանգարումների համար:

Է. Հոֆմանի հետազոտությունները ցույց են տալիս որ պահեղի է հոր դերը նաև երեխայի բարոյական զարգացման գործում, իսկ հիմնական մեխանիզմը հեղինակը, հետևելով Ֆրոյդին, համարում է նույնացումը [ըստ՝ 15]:

Զ. Ֆրոյդից է գալիս այն գաղափարը, որ հայրը կարևոր դեր է խաղում տղաների սեռային նույնականության ձևավորման հարցում: Ժամանակակից հետազոտությունները հաստատում են այդ միտքը, վկայելով, որ անհայր մեծացած տղաները լուրջ դժվարություններ են ունենում սեռային նույնականացման հարցում [9]: Ըստ Օ. Բ. Չիրկովայի՝ հայրական դաստիարակությունը նպաստում է երեխայի ինքնուրույնության, ինքնավստահության և պատասխանատվության զարգացմանը [10]:

Մեր կողմից կազմակերպված և իրականացրած էմպիրիկ հետազոտությունները ցույց տվեցին, որ պահեղի է դեռահասության շրջանում հոր դաստիարակչական ներգործության դերը նաև դեռահասների դելինկվենտ վարքի ձևավորման գործում (Հետազոտությունն անց է կացվել 2011 թ. Վարդաշենի հակասոցիալական վարք դրսևորած երեխաների հանրապետական N 1 կրթահամալիրում և Երևան քաղաքի N 25 և N 4 հանրակրթական դպրոցներում զրույցի, հարցման և շարադրությունների մեթոդներով): Պարզվեց, որ դեռահասի համար հայրը հանդես է գալիս որպես կարգի, պատասխանատվության, «օրենքի» կրողև եթե այդ հայրական ֆունկցիան այս կամ այն պատճառով պատաշաճ ձևով չի իրականացվում (հայրական դաստիարակությունը բացակայում է՝ հայրն ամուսնալուծված է, մահացել է, կա, բայց չի մասնակցում երեխայի դաստիարակությանը, կամ իրականացվում է ոչ ադեկվատ դաստիարակություն՝ երեխային խրախուսում, երբեմն նույնիսկ դրդում է սոցիալապես անընդունելի, հանցագործ արարքների և այլն), դեռահասի մեջ հոր կերպարը, հետևաբար նաև ներքին օրենքը, կարգապահության, պատասխանատվության մասին պատկերացումներն աղավաղվում են՝ հանգեցնելով դելինկվենտ վարքի: Նման դեռահասները, չունենալով առնականության ադեկվատ մոդել տանը, այն փնտրում են դրսում՝ հաճախ հանցագործ աշխարհի ներկայացուցիչների մեջ, նույնանում են նրանց հետ՝ վերցնելով նրանց արժեքները, կյանքի փիլիսոփայությունը, մտածելակերպը և վարքի ձևերը:

Ամփոփելով շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ հայրական դաստիարակությունը պակաս կարևոր չէ քան մայրականը, մինչդեռ ժամանակակից հասարակության մեջ այս հանգամանքն անտեսվում է: Կարծիք է ձևավորվել, թե հայրը միայն պետք է ապահովի ընտանիքի նյութական հարցերը, իսկ դաստիարակությունը միայն մոր գործն է: Նման տեսակետ ունեցող և դաստիարակություն իրականացնող ընտանիքները վտանգում են իրենց երեխայի լիարժեք հոգեբանական զարգացումը և սոցիալականացումը, ինչը կարող է հանգեցնել աղետալի հետևանքների:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 02.05.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Андреева Т. В.** Психология современной семьи. Монография. — СПб.: Речь, 2005.
2. **Виткин Д.** Мужчина и стресс. – СПб., 1996.
3. **Горьковая И.А.** Медико–психологическое исследование формирования характера делинквентных подростков. Автореферат дис.канд. психол. наук : 19.00.04: Спб., 1992.
4. **Дружинин В. Н.** Психология семьи. – СПб.: Питер, 2005.
5. **Захаров А.И..** Происхождение детских неврозов и психотерапия. – Эксмо–Пресс, 2000.
6. **Ильин Е.П.** Дифференциальная психофизиология мужчины и женщины. – СПб., 2002.
7. **Коркина Н. А.** Отцовство в современной семье // Материалы второй Всероссийской научной конференции Психологические проблемы современной российской семьи в 3 ч. – Ч. 1 / под общ.ред. В. К. Шабельникова, А. Г. Лидерса. – М., 2003. – С. 117–123.
8. **Островская Л. Ф.** Педагогические ситуации в семейном воспитании дошкольников. – М.: Просвещение, 1990.
9. **Попова П.** Современный мужчина в зеркале семейной жизни. – М., 1989.
10. **Чиркова О. Б.** Роль детско–родительских отношений в развитии ответственности подростков // Психология XXI века: Тезисы Международной межвузовской научно–практической студенческой конференции. – СПб., 2000. – С. 193–195.
11. **Хьелл Л., Зиглер Д.** Теории личности: Пер. с англ. – СПб.: Питер–Пресс, 1997.
12. **Biller H.B. Father,** child and sex role. Lexington, 1971.
13. **Blum H.M., Boule M.N., Offord D.R.** Single–parent Families Child Psychiatric Disorder and School Performance // J. Amer.Acad.ChildAdolesc. Psychiatry. 1988. v.27. – IT 2.– p.214–219.
14. **Drake C.Y., McDougall D.** Effects of the absence of a father and other male models on the development of boy›s sex roles // Developmental Psychology. 1977. – v.13. – p.537–538.
15. **Fthenakis W. E. Väter,** Band II, ZurVater–Kind–Beziehung in verschiedenenFamilien–Strukturen. München, 1988.
16. **Greco L., Morris T.** Paternal child–rearing style and child social anxiety: investigation of child perceptions and actual father behavior // J. Psychopathology and Behavioral Assessment. 2002. – vol. 24, No 4. – p. 259–267.
17. **Pederson,F.,** et al. Infant development in father–absent families//Journal of Genetic Psychology, 135,1979.51–61.
18. **Parke R. D.** Perceptions of father–infant interaction. In J. Osofsky (Ed), Handbook of Infant development.NewYork: Wiley, 1979.

ПРОБЛЕМА РОЛИ ОТЦОВСКОГО ВОСПИТАНИЯ В ФОРМИРОВАНИИ ЛИЧНОСТИ РЕБЁНКА В ПСИХОЛОГИИ

САМВЕЛ ХУДОЯН

Заведующий кафедрой развития и прикладной психологии Армянского государственного университета имени Хачатура Абовяна, доктор психологических наук

НАТАЛЬЯ ГЕВОРКЯН

Преподаватель кафедры теории психологии и истории Армянского государственного университета имени Хачатура Абовяна

В статье анализируется психологическая литература, посвящённая проблеме отцовского воспитания. Многочисленные исследования показывают, что роль отца незаменима в семейном воспитании, а отсутствие отцовского воспитания приводит к серьёзным отрицательным результатам.

Представляются также результаты собственных эмпирических исследований, которые подтверждают, что делинквентное поведение подростков во многом обусловлено проблемами отцовского воспитания.

Дата представления статьи 02.05.2012

THE PROBLEM OF PATERNAL UPBRINGING ROLE IN CHILD'S PERSONALITY FORMATION IN PSYCHOLOGY

SAMVEL HUDOYAN

Head of the chair of development and applied psychology of Armenian State pedagogical university after Khachatur Abovyan, doctor of psychological sciences

NATALYA GEVORKYAN

Lecturer of the chair of theory and history of Psyhology of Armenian State pedagogical university after Khachatur Abovyan

Psychological literature devoted to the problem of father's participation in upbringing is analyzed in the article. Numerous researches show, that the role of the father is irreplaceable in family education, and absence of father's education brings to serious negative results. Results of own empirical researches are also represented. Our researches show, that the delinquent behavior of teenagers is determined by the problems with father's education.

Article submission date 02.05.2012

ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական որակավորման բարձրացման և միջբուհական համագործակցության կենտրոնի ղեկավար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՍԵԴԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի դասախոս

ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՐԺԵԶՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 159.923:316.6

Հոդվածում ներկայացվում են նոր տեխնոլոգիաների ներդրումը, անցումային հասարակությունը, խմբային պայմանների փոփոխությունը, սոցիալ–հոգեբանական մոբիլությունը՝ որպես անձի սոցիալական կարգավիճակի արժեզրկմանը նպաստող սոցիալական պայմաններ: Հետխորհրդային Հայաստանում՝ նոր շուկայական պայմաններում, աշխատաշուկայում առաջանում է նոր մասնագիտությունների պահանջարկ: Միջին տարիքի մեծ քանակությամբ մարդկանց սոցիալական կարգավիճակը դադարում է բավարարել նոր մասնագիտական պահանջներին: Առաջանում է սոցիալական կարգավիճակի արժեզրկման իրադրություն: Այդ երևույթի հիմնական ուղեկիցներն են դառնում սոցիալական մարգինալությունը և աղքատությունը: Անձի սոցիալական կարգավիճակի արժեզրկման հետևանք է դառնում անհարմարվածությունը, սոցիալական կյանքի մեջ ներգրավվելու դժվարությունը: Ուստի, անձի սոցիալական կարգավիճակի արժեզրկմանը նպաստող սոցիալական պայմանների հոգեբանական վերլուծությունը թույլ է տալիս այն առանձնացնել այլ իրողություններից և հրատապ է դարձնում դրա ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ ՝ սոցիալական կարգավիճակ, սոցիալական դեր, սոցիալական սպասում, արժեք, արժեզրկում, անցումային հասարակություն, սոցիալ–հոգեբանական մոբիլություն, նորմեր, չափանմուշային խումբ, մարգինալություն:

«Սոցիալական կարգավիճակ» հասկացությունը անձի կարևոր բնութագրերից է: Այս հասկացության վերաբերյալ գիտական գրականության մեջ եղած բնորոշումները խիստ բազմազան են, բայց մենք ավելի ամբողջական ենք համարում Ե. Ա. Անուֆրիևի հասկացումը. «Սոցիալական կարգավիճակը ցույց է տալիս անձի տեղը հասարակական հարաբերությունների համակարգում, բնութագրվում է իրավունքներով և ազատություններով, որոնք ամրագրված են Օրենսդրության մեջ՝ բազմակողմանի զարգացման և սեփական ընդունակությունները կիրառելու հնարավորություններով: Այն բացահայտում է անձի, որպես հասարակական հարաբերությունների սուբյեկտի հիմնական ֆունկցիաները կյանքի հիմնական ոլորտներում, անձի գործունեության գնահատումը հասարակության կողմից, որը արտահայտվում է քանակական և որակակն ցուցանիշներում, ինչպես նաև ինքնագնահատականը,

որը կարող է համընկնել կամ չհամընկնել հասարակության գնահատականի" հետ» [1,էջ 178]: «Սոցիալական կարգավիճակ» հասկացության նման մեկնաբանումը հաշվի է առնում և «սոցիալական դերը» որպես դրա ֆունկցիոնալ կողմ, և «սոցիալական հեղինակությունը»՝ իբրև գնահատողական կողմ: Հետևաբար, այն ավելի բարդ և լայն հասկացություն է և ոչ մի կերպ չի կարող հանգել միայն հասարակական կառուցվածքում անձի զբաղեցրած «տեղին»: Անձը սոցիալական կարգավիճակ է ձեռք բերում աշխատանքի միջոցով: Չնայած հարաբերական կայունության, այնուամենայնիվ, սոցիալական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերը լայն իմաստով ազդում են նաև կարգավիճակային տեղաշարժերի վրա: Նման դեպքերում նկատվում է անձի սոցիալական կարգավիճակի փոփոխություն, անկում կամ արժեզրկում:

Նախ և առաջ նպատակահարմար ենք գտնում հասկանալ «արժեզրկում» հասկացությունը: Արժեզրկում (դևալվացիա) թարգմանված է լատիներենից՝ de՝ իջեցում, valeo արժեք: Հոգեբանության մեջ «արժեզրկում» հասկացությունը հիմնականում կիրառվում է հասարակության մեջ այնպիսի երևույթներ քննարկելիս, ինչպիսին է սոցիալական որբությունը, անբարոյականությունը, հասարակական ճգնաժամեր և այլն՝ բնութագրելու դրանց հետ կապված անձի արժեզրկումը, սոցիալական կարգավիճակի արժեզրկումը, ընտանեկան արժեքների արժեզրկումը և այլն :

Վ.Կաննեն նշում է, որ մարդու յուրահատկությունը կայանում է աշխարհի նկատմամբ արժեքային հարաբերությամբ: Արժեք (արժևորված) է անձի համար այն ամենը, ինչը նշանակալի է նրա համար, ունի անձնային կամ հասարակական իմաստ [2,էջ152,153]: Նման արժեք կարող է լինել անձի համար աշխարհում իր տեղը, սոցիալական կառուցվածքում իր կարգավիճակը: Այս դեպքում «արժեզրկում» հասկացությունը հանդես է գալիս որպես «արժեք» բառի հականիշ, ցույց տալով դրա բացասական, ռեգրեսիվ միտվածությունը:

Մեր հասկացմամբ անձի սոցիալական կարգավիճակի արժեզրկումը սոցիալական փոփոխվող պայմաններում անձի սոցիալական կարգավիճակի կտրուկ անկումն է՝ որոշ դեպքերում ընդհուպ մինչև կորուստը, որն ունի դրսևորման իր սոցիալ–հոգեբանական մեխանիզմները և ուղեկցվում է անձի հոգեբանական այլափոխումներով, արժեքային համակարգի վերակառուցմամբ: Դրա տարբերակիչ գիծը նոր պայմաններում անձի նախկին կարգավիճակի անհամապատասխանությունն է խմբային սպասումներին, հասարակական պահանջներին և նոր՝ ավելի ցածր սոցիալական կարգավիճակի ձեռքբերումը: Դժգոհությունը, անլիարժեքության, անբավարարվածության, անհեռանկարայնության զգացումները դառնում են արժեզրկման պարագայում մեջ հայտնված անձի հոգեբանական բնութագրերը:

Սոցիալ–հոգեբանական այս երևույթի գենեզիսը հասկանալու համար պետք է վեր հանենք պայմանների այն ամբողջությունը, որը մեծապես նպաստում է արժեզրկման առաջացմանը:

- Դրանք են ժամանակակից աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները և դրանց ուղեկցող հոգեբանական երևույթները:

Մ. Վ. Զակոտվորնայան ժամանակակից պայմանների ծնունդ է համարում նույնության ճգնաժամը, ընդգծում է փոփոխություններին մարդկանց [3, էջ 1–11, 23]: Նա փոփոխվող պայմաններում առաջացած նույնության ճգնաժամի ուղեկիցներն են դառնում դեպրեսիան և ապաթիան, անօգնականության իրական աշխարհից փախչելու ձգտման մեջ, ավելորդ իշխանատենչության, դրսևորումներում, միստիցիզմի, ժխտողականության և նարգիզմի տարբեր ձևերում,

ալկոհոլամոլության, թմրանյութերի օգտագործման, սեռական այլասերումներում, այս երևույթը բերում է բացասական ինքնավարության, անժամանակ գաղափարաբանության և կենսական ծրագրերի բացակայության և նույնության կորստի: Հեղինակի կարծիքով գլոբալ փոփոխությունները մարդկանց դնում են նույնության ճգնաժամի իրադրության մեջ: Նույնության ճգնաժամը մենք համարում ենք սոցիալական կարգավիճակի արժեզրկման կարևոր բաղադրիչ, ուստի նկարագրված պայմանները կարևոր են նաև սոցիալական կարգավիճակի արժեզրկման հասկացման ենթատեքստում: Ժամանակակից աշխարհի հիմքում, ըստ նրա, ընկած է գլոբալի և լոկալի դիալեկտիկական հակասությունը, որն էլ ստեղծում է դինամիզմ, պրոգրեսիվ էֆեկտ տնտեսական, քաղաքական, մշակութային փոփոխականության: Վերջինս դնում է անհատին ամենօրյա ընտրության առջև: Փոփոխութունների արդյունքում առաջացող արժեքային կոնֆլիկտը համարում ենք սոցիալական կարգավիճակի արժեզրկման կարևոր բաղադրամաս: Արժեքային կոնֆլիկտը հասարակության գիտակցության կառուցվածքի տրանսֆորմացիայի պարտադիր բաղադրամաս է: Մ. Մ. Բախտինը պնդում էր, որ կյանքում գոյություն ունի երկու արժեքային ենթատեքստ՝ «կյանքն ամբողջությամբ, որը կարող է միայն օբյեկտիվորեն ճանաչված լինել և սեփական փոքրիկ անձնական կյանքը»: Այս երկու համակարգում առկա է հարաբերակցություն: Չէ՞ որ մարդկային արժեքները, այդ թվում սոցիալական կարգավիճակին ներկայացվող պահանջները վերցնում է հասարակությունից, իսկ հասարակական արժեքները, մարդկային արժեքների ընդհանրացում են: Ուստի հենց հասարակական արժեքների ձևափոխությունները մարդու համար ստեղծում են ապակողմնորոշվածության վիճակ, սոցիալական կարգավիճակի հետ կապված նույնությունից հրաժարվելու և նորը ձեռք բերելու անհրաժեշտություն: Սակայն հատկապես աճող պլյուրալիզմի պայմաններում նույնության տարբեր նմուշների առկայության պայմաններում խնդիրը բարդանում է:

20–րդ դարին բնորոշ է դառնում նոր պարադիգմա՝ պլյուրալիզմը, որի շրջանակներում անձին աշխարհում սեփական տեղը գտնելու հարցը դառնում է գոյաբանական խնդիր: Ընտրելու հնարավորությունների բազմազանությունը մարդկանց մոտ առաջացնում է ապակողմնորոշվածություն, լարվածություն, սեփական Ես–ը աշխարհի միասնական պատկերում ինտեգրելու անհնարինություն, քանի որ աշխարհում սեփական «տեղը» կարգավիճակը այլևս չի տեղավորվում նոր աշխարհի պատկերում: Ժամանակակից աշխարհի գլոբալիզմի պայմաններում հասարակության տարրերի միջև կապերը դառնում են անկայուն: Տեղեկատվական կապերի միջոցով հասարակական կապերի ինտեգրումը բարդացնում է սոցիալական համակարգի հիերարխիան: Դժվար չէ գուշակել, որ սոցիալական հիերարխիայի բարդացումը ենթադրում է կարգավիճակային վերակառուցումներ:

Անձը բարդ կառույց է, ուստի նման վերափոխումների դեպքում նկատվում են արժեքային համակարգի, վարքային մարտավարությունների փոփոխություններ: Զակռվորոտնայան նշում է, որ պլյուրալիզմի պայմաններում նորի ստեղծման իրադրությունում արդիական է դառնում սեփական արժեքների և նպատակների համակարգի իմաստավորման խնդիրը: Անձի արժեքային համակարգը կապված է նրա սոցիալական կարգավիճակի հետ: Անձը իր շրջապատին և ինքն իրեն ընկալում է սեփական կարգավիճակի դիրքերից: Ուստի ստեղծված պայմաններում կարգավիճակի «ուրվագծերը» դառնում են ոչ հստակ, անորոշ, անձը բախվում է

արժեքային կոնֆլիկտների, բազմաթիվ արժեքների արժեզրկման հետ:

Ֆ. Նիցշեն գրում է արժեքների արժեզրկման մասին, մարդու արժանապատվության անկման իր իսկ աչքերում: Նա դիմում է մարդուն, անձին, սուբյեկտին: Մարդը, որը չի տեսնում իր խնդիրների ռացիոնալ լուծումը ընկնում է անխուսափելիորեն հուսահատության մեջ, նրան բնորոշ են անօգնականության, հուսախաբության, վախի չարացվածության զգացումները [4էջ 384,392]: Այս զգացումները համակում են մարդուն հատկապես նոր տեխնոլոգիաների դարում:

Ժամանակակից աշխարհում նկատվում է մեկ այլ երևույթ՝ մասնագիտական գիտելիքի նեղացումը՝ որպես տեխնոլոգիական զարգացման անխուսափելի արդյունք: Անհատը մասնագիտացվում է և համարվում է փորձագետ նեղ գիտելիքի ոլորտներում: Մարդը հայտնվում է կախվածության մեջ բյուրոկրատական համակարգից, նրան բնորոշ է դառնում անվստահությունը սեփական ապագայի նկատմամբ, սեփական փորձի և ունակության մեջ, իրադրության վրա ազդելու ընդունակության մեջ՝ ծնելով խնդիրներ կապված նույնության պրոբլեմի հետ: Համակարգչ

Համակարգչային տեխնոլոգիաների համատարած ներդրումը ունի երկու կողմ, որոնք կարևորում ենք: Առաջին դրանք սահմանափակում են մարդու գործունեության դաշտը՝ տրամադրելով աշխատանքը մեքենաներին: Երկրորդ՝ աշխատաշուկայում հայտվում են ժամանակակից մասնագիտություններ, որոնց տիրապետելը բազմաթիվ միջին տարիքի մարդկանց կանգնեցնում է խնդրի առջև: Նրանց մասնագիտական դիրքը կորցնում է պահանջարկը նոր պայմաններում: Ստացվում է նորը միշտ չէ, որ հեշտությամբ ընդունվում է անձի կողմից, և երբեմն նման պայմաններում նկատվում է անձի մոտ կարոտախտի զգացում դեպի հինը: Ի. Կոնը գտնում է, որ ներկայումս հիասթափված և ապագայի նկատմամբ անվստահ մարդիկ հենարան են որոնում անցյալում, հասարակական գիտակցության ավելի խորը և հին-շերտերում [4, էջ 352]: Հնի և նորի բախումը, ճիշտ է, ընդարձակ երևույթ է, բայց հաճախ ընդգրկում է սոցիալական կյանքի շատ ոլորտներ, օրինակ, մասնագիտական և կապվում դերադիրքային վարքին առաջադրվող նոր պայմանների հետ: Հեղինակի կարծիքով, եթե աշխատողը գոհ չէ իր կյանքից, ապա կարելի է օգնել նրան հարմարվել դրան, բայց չի կարող խոսք գնալ հենց սոցիալական իրականության փոփոխության մասին:

Այսպիսով, ժամանակակից աշխարհը իր զանազան ձևափոխություններով, նոր պահանջներով, որոնք առաջադրվում է են անձի սոցիալական կարգավիճակին, կարող են նպաստել կարգավիճակային վարընթաց տեղաշարժերի, արժեզրկման, ինչը հետևանք է սոցիալական կարգավիճակի անհամապատասխանություն ներկայումս առաջադրվող պահանջներին:

- Անցումային հասարակությունը, որը բնորոշվում սոցիալական կառույցների փոփոխությամբ արժեզրկման կարևոր ցուցիչ է:

Լ. Գորդոնը ճշմարտացիորն նշում է, որ անցումային փուլում յուրաքանչյուր մարդու համար կարևոր է հարմարման հնարավորությունը: Ադապտացիան ենթադրում է ոչ թե առանձին տարրերի ընդունման, որքան հասարակական հարաբերությունների փոփոխվող տիպի, արժեքային համակարգի, սոցիալական և հոգեբանական յուրացման (նոր կարգի յուրացման), ինչպես նաև մի հասարակարգից մյուսին անցման արտակարգ իրադրության (ադապտացիա անցումային ճգնաժամին) ապրման հոգեբանական սոցիալական ընդունակության մեջ [5, էջ 41]: Անցումային շրջանի ծնունդ է նաև անձի սոցիալական կարգավիճակի արժեզրկումը, որպես սոցիալ–հոգեբանական երևույթ, որի վերջնական արդյունքը հաճախ դառնում է սոցիալական մարգինալությունը: Ն. Հակոբյանը նշում է, որ անցումային հասարակությունը ծնունդ է համարում մարգինալությունը: Մարգինալությունը, խմբերի, անհատների վիճակն է այնպիսի պայմաններում, որոնք արտաքին գործոնների ազդեցությամբ՝ կապված հասարակության սոցիալ–տնտեսական և սոցիալ մշակութային վերափոխումների հետ, հարկադրում են իրենց սոցիալական դրությունը՝ հանգեցնելով նախկին կարգավիճակի, սոցիալական կապերի, սոցիալական միջավայրի, արժեքային կողմնորոշումների կորստի կորստին [6, էջ40–42]: Բնակչության մարգինալ շերտերին (գործազուրկներ, աղքատներ, բոմժեր) բնորոշ են դառնում անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ սեփական վիճակի անելանելիության զգացում, բարոյական և հոգևոր դեգրադացիա, սոցիալական վախ և այլն [7, էջ218]: Մարգինալությունը, սակայն, ավելի ընդարձակ, բազմաշերտ երևույթ է, իսկ կարգավիճակի արժեզրկումը մենք համարում ենք դրա առանձին՝ սոցիալական մարգինալության հանգեցնող երևույթ: Ճգնաժամային իրադրությունում հայտվում են մարդիկ, ովքեր արդեն նախկին կառույցում ունեցել են դիրք և տառապում են անցյալի կարոտախտով: Որոշ մարդիկ բնորոշվում են հիմնական, մասնագիտական կարգավիճակի կորստով, այլ նոր պայմաններում ավելի ցածր կարգավիճակի զբաղեցմամբ և համալրում են հիմնականում սպասարկման ոլորտը և ավելի ցածր դիրքեր: Սոցիալական կարգավիճակի անկումը կամ կորուստը, որը հաճախ տեղ է գտնում ղեկավար սուբյեկտների գործունեության մեջ, բերում է անբարեհարմարության, իջեցնում է ինքնգնահատականը, վստահությունն ինքն իր նկատմամբ և այլն:

- Կարևորություն է ձեռք բերում անցումային հասարակության և մասնավորապես անցումային Հայաստանի մասին պատկերացումների ամբողջացումը:

Ա. Հովսեփյանը բազմակողմանի վերլուծության է ենթարկում, անցումային Հայաստանում սոցիալ–հոգեբանական տեղաշարժերը՝ կարևորելով այդ փոփոխությունների ազդեցության հոգեբանական կողմը, որը շատ հաճախ անտեսվում է [8 էջ7,18,30, 51–65]: Փոփոխությունների անմիջական ուղեկից են դառնում բոլոր ոլորտներում արժեքների վերարժևորումը, կարծրատիպերի փոփոխությունը, կյանքի իմաստի վտանգումը, մարդկային հարաբերությունների ապաուրբանիզացումը, մարդկանց կարգավիճակների և սոցիալական դերերի տեղաշարժերը և այլն: Նախկին փորձը և դրա հետ կապված արժեքային համակարգը դադարում են կողմնորոշող դեր կատարել: Անխուսափելի հետևանքներն է համարում տհազնացող անձային տվայտանքները, ներանձային հակասություններն ու երկատվածությունը, բարոյահոգեբանական «սարդոստայնի» մեջ հայտնվելը, անպաշտպանվածությունը, տհաբեկվածությունն ու «մենակության ձանձրույթը», այսինքն՝ հենց հոգեբանական ասպեկտը: Անցումային հասարակությունը բնորոշվում է գաղափարախոսության արժեզրկմամբ: Նախկին սոցիալական հարաբերությունները դադարում են համապատասխանել տարբեր ոլորտներում առկա նորմերին ու արժեքներին: Ուստի կարևորվում է նոր շուկայական պայմաններում արժեքների վերաարժևորման հարցը, առանց որի մարդը չի կարող հարմարվել այդ պայմաններին: Ստեղծված պայմաններում նշանակալի փոփոխության կամ «արժեզրկման» է ենթարկվնում անձի նախկին կարգավիճակը: Նոր շուկայական պայմաններում, ըստ Հովսեփյանի, անձի սոցիալական կար-

գավիճակը մեծապես որոշվում է գործարար հաջողություններով, այսինքն՝ նյութական կողմով, որը հավասարության նշան է դնում ձեռներեցների, կամ օրինակ քաղաքական գործիչների միջև: Կորցնելով այս փոփոխությունների հորձանուտում անվտանգության պահանջմունքը, կողմնորոշիչ արժեքների բացակայությունը, առաջացնում են այնպիսի հոգեբանական իրողություններ, ինչպիսիք են՝ միայնակության, օտարվածության և ձանձրույթի զգացումների հաղթահարումը: Ստեղծված իրավիճակում, երբ կյանքում սեփական «տեղի» սահմանները դառնում են անորոշ, անձի առջև հառնում է գոյաբանական հիմնախնդիր: Խնդիրը բարդանում է մեկ միասնական արժեքային համակարգի բացակայության, չձևավորվածության պատճառով: Առաջանում է հակասություն նոր և հին արժեքային համակարգերի միջև: Նորի ընդունումը անպայմանորեն ենթադրում է մարդու վերասոցիալականացվելու, հենց նոր պայմաններում ենք դիտարկում անձի սոցիալական կարգավիճակի արժեզրկման երևույթը, որը տվյալ դեպքում ծնունդ է հնի և նորի հակասության և հերթափոխման: Նոր պայմաններում կայուն սոցիալականացում ձեռք է բերվում որոշակի կարգավիճակի հասնելու, սոցիալական և միջանձնային դերակատարության կայուն դաշտ ունենալու միջոցով:

Հովսեփյանը նշում է, որ անցումային հասարակություններում առկա են երեք սերունդ, որոնք գտնվում են տարբեր կարգավիճակներում, հոգեբանական ու բարոյական առումով տարբեր պայմաններում՝ ավագ, միջին և կրտսեր: Անձի սոցիալական կարգավիճակի արժեզրկման խնդրի ենթատեքստում մեզ ավելի հետաքրքրում է միջին սերունդը, որոնց կյանքի մի մասը անցել է խորհրդային հասրակարգում, որոնք ունեցել են կայուն աշխատանք և յուրացրած արժեհամակարգ: Նոր պայմաններում, սոցիալական կարգավիճակի անհամապատասխանության դեպքում հենց նրանց առջև է ավելի սուր ձևով է ծառանում վերահարմարվողականության և վերասոցիալականացման անհրաժեշտությունը, որը մեծապես կախված է մարդկանց անձնային առանձնահատկություններից, հարմարման գերակա մարտավարություններից: Անցումային հասարակությունը դժվարություն է ստեղծում գործունեության մեջ ներգրավվելու առումով, ինչը իհարկե, դժվարացնում է մարդու կայուն կարգավիճակ ունենալու հարցը: Տնտեսական կյանքի վերափոխումները արտադրության գործընթացի տեխնոլոգիական վերազինման միտումները, խորհրդային շրջանում գործունեության մեջ հաջողությամբ ներառված շատ տարբերի մոտ մասնագիտական թերարժեքության խնդիր է առաջ բերել, քանի որ նրան գիտելիքներն ու հմտությունները, աշխատանքային փորձը այլևս կիրառելի չեն նոր պայմաններում: Արդյունքում ստեղծվում է պարադոքսալ վիճակ. մի կողմից ակնհայտ է զանգվածային գործազրկությունը, մյուս կողմից առկա են բազմաթիվ աշխատատեղեր, որոնք թափուր են մնում գիտելիքներ ու հմտություններ ունեցող մասնագետների բացակայության պատճառով: Բոլոր դեպքերում ճիշտ է հեղինակի միտքն այն մասին, որ կարևոր է փոփոխությունների նկատմամբ մարդկանց հոգեբանական պատրաստականությունը:

Անցումային հասարակությունը վերագնահատումների փուլ է, երբ կորսվում են հին ստադարտները և հիմք դրվում նորի ձևավորման համար: Այս պայմաններում կարգավիճակի արժեզրկում ասելով հասկանում ենք անձի նախկին կարգավիճակի անհամապատասխանություն նոր պայմաններին, արևի տակ իր «տեղի» գոյաբանական որոնումներ: Սեփական «Ես»–ի և արժեքային համակարգի անորոշություն, անկայուն կամ ցածր կարգավիճակի

պատճառով: Իհարկե, մարդը դրանց ձգտում է իր զբաղեցրած կարգավիճակի դիրքերից: Բայց երբ սոցիալական պայմանները դառնում են անորոշ է սեփական կարգավիճակի նկատմամբ սպասումները փոխվում են, մարդու համար անկայուն, անորոշ դրության մեջ այդ նպատակները դառնում են շատ հեռավոր, իսկ երբեմն էլ անիրականանալի՝ սահմանափակելով ինքնաիրացման հնարավորությունները:

Հասարակության մեջ սոցիալական մոբիլության առկայությունը:

Սոցիալական մոբիլությունը մարդկանց տեղաշարժն է մի խմբից դեպի մյուսը, որը կարող է կապված չլինել համակարգի կառուցվածքային փոփոխությունների հետ [6, էջ 38]: Սոցիալական մոբիլությունը հանգեցնում է կադրային փոփոխության և ապահովում է համակարգի բացվածությունը բոլոր ցանկացողների համար: Սա բնութագրում է մոբիլությունը դրական տեսանկյունից, որը անձի առջև բացում է իր նվաճման մոտիվացիան իրականացնելու, ինքնաիրացվելու կարգավիճակային ինքնահաստատման հնարավորություն: Սոցիալ–մասնագիտական մոբիլությունը տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխությունների, նյութական դրության փոփոխություն է և տեղեկատվական հարթության մեջ մարդու դրության փոփոխությունների արտացոլումը [5, էջ 307]: Էրիքսոնը ճշմարտացորեն նշում է, որ ավելի մոբիլ հասարակության մեջ կարգավիճակը ոչ թե նպատակ է, այլ միջոց [9, էջ 131]: Այս տեսանկյունից, սոցիալական կարգավիճակը միջոց է ոչ միայն նյութական բարեկեցության, այս սեփական Ես–ի, կայուն նույնության ամրապնդման, կենսական նպատակներին հասնելու: Մ. Բորիսովը համակարգի այնպիսի բնութագրիչ, ինչպիսին մասնագիտական առաջխաղացման (կարյերայի համար) հնարավորությունների ապահովումը, ամբողջությամբ վերցրած համարում է սոցիալական մոբիլության, ցուցանիշ [5, էջ 303]:

Սոցիալական կարգավիճակի արժեզրկումը գլխավորապես վարընթաց սոցիալական մոբիլության արդյունք է, որի դեպքում նկատվում է անձի սոցիալական կարգավիճակի անկում:

- Սոցիալական կարգավիճակին ներկայացվող սպասումների, նորմների փոփոխություն:

Ռ. Մերթոնը նշում է, որ ոչ մի հասարակություն չի կարող գոյատևել առանց նորմների, որոնք վերահսկում են մարդու վարքը: Նորմերը վարքի համընդհանուր նմուշներ են, պատրաստի պատասխաններ: Ռ. Լինտոնը նշել է, որ նորմերը կազմված են դերերից, իսկ դերերը՝ նորմերից [5, էջ 47,67]: Խումբը, որից անձը վերցնում է իր նորմերը, արժեքները և դիրքերը սոցիոլոգիայում անվանում են ռեֆերենտային /չափանմուշային/ (լատ. Refero – հարաբերակցում եմ): Անձի դիրքային վարքը համահարաբերակցվում է չափանմուշային խմբի արժեքների հետ: Այդ պահանջները անձի կողմից ներքնայնացվում է են և դառնում են նրա Ես–հիմանդրույթի բաղադրիչ: Հետևաբար, անձի համար ավելի մեծ հեղինակություն կներկայացնի այն էտալոնային խումբը, որի հետ նույնացումը ավելի մեծ է: Այդ է պատճառը, որ ոմանց համար մասնագիտական դիրքի կորուստը անձնական ողբերգություն է, իսկ մյուսների համար՝ ոչ: Տ. Շիբուտանիի կարծիքով, մարդը կառուցում է իր վարքը սպասումներին համապատասխան [10 էջ 202, 246, 248]: Մարդկանց դերերը որոշված են, նրանք հետևում են հիմնական վարքային շաբլոններին, դրանք համաձայնեցված են իրենց դիրքի հետ և ինչի շնորհիվ է, որ հասարակությունը չի նմանվում անկազմակերպ քաոսի: Երբ կյանքի պայմանները փոխվում են, հին խմբերը քանդվում են ստեղծվում են նորերը: Տեղի է ունենում չափանմուշային խմբերի տեղաշարժ: Նրանք,

ովքեր պաշտպանում են ավանդական արժեքները տագնապով են նայում նորույթներին: Ավելի շատ լարվածություն է ստեղծվում նրանց մոտ ում դիրքերը հնացել են, այսինքն՝ այլևս չեն համապատասխանում էտալոնային խմբի սպասումներին: Այստեղ ավելի տեղին է 'արժեզրկվել են' հասկացությունը: Նման իրադրությունում մարդը դեռ որոշ ժամանակ շարունակում է վարքային նախկին ռազմավարությունների գործադրումը՝ ամբողջովին չհամակերպվելով նոր իրադրության հետ: Անձի դիրքային վարքը հասարակական, խմբային սպասումներին ուղղված մեխանիկական պատասխան չէ: Այն հարաբերակցվում է անձի մեջ իր առաջատար հոգեբանական որակների, արժեքային համակարգի հետ, ուստի հնարավոր է սպասումների փոփոխության դեպքում չնկատվի վարքային ամբողջական շաբլոնի փոփոխություն: Արտաքին սոցիալական փոփոխությունների ենթատեքստում անձի կարգավիճակին ուղղված սոցիալական սպասումների համակարգի փոփոխությունը օրինաչափ երևույթներ են: Ուստի, գտնում ենք, որ անձի սոցիալական կարգավիճակի արժեզրկումը սկսվում է դերային վարքի նորմերի համակարգի ձևափոխություններից:

Այսպիսով, անձի սոցիալական կարգավիճակը «գծում է» այն սահմանները, որի ներսում անձը զգում է իր կայունությունը, որոշակիությունը, ձևավորում է իր արժեքային համակարգը և ընդհանուր առմամբ սոցիալական միջավայրին իր հարմարվածությունը: Սակայն երբ սոցիալական պայմանների փոփոխության հարկադրմամբ դադարում են բավարարել առաջադրվող պահանջները, այդ սահմանները դառնում են, թափանցիկ, անկայուն: Խնդիրը զուտ սոցիալական, հոգեբանական դաշտից անցնում է նաև ավելի լայն՝ գոյաբանական դաշտ՝ կրկին հարմարվել փոփոխվող իրականությանը: Առաջանում է արժեզրկման սոցիալ–հոգեբանական իրադրություն, որի գլխավոր վեկտորը ապակողմնորոշվածությունը, անորոշությունը, դժգոհությունը, չհարմարվածությունն է, իսկ հետևանքներից է դառնում համատարած աղքատությունը, գործազրկությունը, մարգինալ երևույթները: Աղքատությունը այսօր կարելի է սահմանել անձի կարգավիճակի արժեզրման դիրքերից: Աղքատությունը ստիպում է մարդկանց զբաղվել գործունեության որոշ տեսակներով, քանի որ ոչ մի հնարավորություն նրանց չի մնացել :

Այսպիսով, սոցիալական կարգավիճակի արժեզրկման պայմանների լուսաբանումը և վերլուծությունը թույլ է տալիս սահմանազատել այս երևույթը այլ իրողություններից, իսկ դրա հոգեբանական մեխանիզմների ուսումնասիրությունը դառնում է հրատապ խնդիր, քանի որ սոցիալական կարգավիճակի արժեզրկման հետևանքն է դառնում անձի սոցիալ–հոգեբանական չհարմարվածությունը:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 16.05.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ануфриев Е. А.** Социальный статус и активность личности как обьект и субьект социальных отношений. М.: Изд–во Московского университета, 1984. С.176–177.
2. **Канке В. Философия. М.**: Логос, 2001, с. 152–153.
3. Заковоротная М.В. Идентичность человека. Социально–философские аспекты. Ростов–на–Дону, изд–во СКНЦ ВШ 1999. С. 1, 23, 43, 45, 90, 91, 100.
4. **Кон И. С.** Социологическая психология. М., НПО «МОДЭК», 1999. С. 352, 366–367, 384, 393.
5. **Кравченко А. И** Социология. Хрестоматия. М., 1997. С. 41, 72–74, 303;307, 342–348.
6. **Ն. Լ. Հակոբյան,** Մարգինալության դրսևորման սոցիալ- հոգեբանական առանձնահատկությունները փոխակերպվող հասարկություններում, Երևան 2006, էջ 38, 40–42:
7. **Крысько В. Т.** Социальная психология. М., 2006. – 218 с.
8. Արամայիս Հովսեփյան, Սոցիալ–հոգեբանական տեղաշարժերը վերափոխվող Հայաստանում, Երևան, Դե–Ֆակտո, 2006, էջ 8, 18, 30, 44, 46, 51, 65:
9. **Эриксон Э.** Детство и общество. DOCErik Erikson «Childhood and Society», 2nd ed. 1963. –131с.
10. **Шибутани Т.** Социальная психология. М., Прогресс, 1969. С. 202, 246–248.

ТЕОРЕТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ УСЛОВИЙ ОБЕСЦЕНИВАНИЯ СОЦИАЛЬНОГО ПОЛОЖЕНИЯ ЛИЧНОСТИ

НАИРА АКОПЯН

Доктор психологических наук, профессор, руководитель центра повышения профессиональной квалификации и межвузовского сотрудничества Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

ВАРДАНЯН СЕДА

Соискатель кафедры теории психологии и истории Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна

В статье представлены социальные условия, которые способствуют обесцениванию социального статуса личности, а именно: внедрение новых технологий, переходное общество, изменение групповых норм, социально–психологическая мобильность. Проводится психологический анализ этих условий. В новых рыночных условиях постсоветской Армении формируется спрос новых профессий. Социальный статус большинства людей среднего возраста перестает удовлетворять новым профессиональным требованиям. Формируется ситуация обесценивания социального статуса личности, чему сопутствуют социальная маргинальность и бедность. Последствиями обесценивания социального статуса личности становятся социально–психологическая дезадаптация и трудности в интеграции к социальной жизни. Психологический анализ социальных условий, способствующих обесцениванию социального статуса личности, позволяет разграничить его от других явлений и делает срочным его изучение.

Дата представления статьи 16.05.2012

THEORETICAL ANALYSIS OF THE CONDITIONS OF PERSON'S SOCIAL STATUS DEPRECIATION

NAIRA HAKOBYAN

Doctor of Psychological Sciences, Professor,
Head of Centre of Professional
Qualification Improvement and Intercollegiate Cooperation
ASPU aft. Khachatur Abovyan

VARDANYAN SEDA

Applicant Of The Chair Of Theory And History Of Psychology, Armenian State Pedagogical University After Khachatur Abovian

The article represents the investment of new technologies, transitional society, changes of group conditions, socio-psychological mobility as social conditions contributing to depreciation of person's social status. In the new terms of the Post-Soviet Armenian market there is a demand for new specializations in the labor market. The social status of middle-age people doesn't satisfy the demands of the new professional standards. Accordingly, a depreciation of the social status comes forward. This phenomenon is mainly accompanied with social marginality and poverty. The basic consequence of person's social status depreciation becomes negligence, difficulties in social life integration.

Hence, the psychological analysis contributing to the person's social status depreciation allows to separate it from other realities and makes the necessity of its investigation urgent.

Article submission date 16.05.2012

ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պարիքային և մանկավարժական հոգեբանություն ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԻՎԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնի ավագ դասախոս, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պարիքային և մանկավարժական հոգեբանություն ամբիոնի հայցորդ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ–ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ՀՏԴ 159.923:31:30

Հոդվածում ներկայացված է տեղեկատվական–հոգեբանական պայքարի գործընթացներում անձի, սոցիալական խմբի և ամբողջ հասարակության հոգեբանական պաշտպանության ամբողջական մի համակարգ: Այն հենվում է անձի, սոցիալական խմբի և հասարակության համար հիմնային պաշտպանական դիրքորոշումների վրա: Դրանց մշակման համար հիմք են հանդիսացել բնության որոշակի օրինաչափությունները, այստեղ՝ արտաքին աղբյուրից իրականացվող քայքայիչ ներգործությանը դիմագրավելու եղանակների ուսումնասիրման արդյունքները:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ հոգեբանական պատերազմ, տեղեկատվական–հոգեբանական պայքար, տեղեկատվական–հոգեբանական ներգործություն, հոգեբանական պաշտպանություն, հիմնային պաշտպանական դիրքորոշումներ:

Արտաքին աղբյուրից իրականացվող ապակառուցողական (քայքայիչ) ներգործության կիրառումը և դրա նկատմամբ անձի տեղեկատվական–հոգեբանական անվտանգության ապահովումը, վաղնջենական ժամանակներից սկսած, գնահատվել է որպես ռազմավարական–մարտավարական կարևոր հանգամանք՝ ինչպես մարտի դաշտում, այնպես էլ միջպետական լարված փոխհարաբերություններում [1, էջ 12–22, 4, էջ 8–44, 5, էջ 6–18]:

Արդի ժամանակներում այս ուղղությամբ հարցադրումները պայմանավորված են ներկա գլոբալիզացիոն զարգացումների և հեռահաղորդակցության նորագույն տեխնոլոգիաների զանգվածային կիրառման և, դրանց հետ կապված, մեր հասարակությանը նետված նոր մարտահրավերների, այստեղ առկա վտանգներից ու դրանցից բխող սպառնալիքներից անձի և հասարակության տեղեկատվական–հոգեբանական պաշտպանության ապահովման հետ:

Նշենք, որ ներկայումս աշխարհի շատ երկրների առաջատար գիտահետազոտական կենտրոններում մշակվում են անձի և հասարակական խմբերի վրա տեղեկատվական–հոգեբանական ներգործության ժամանակակից՝ առավել արդյունավետ եղանակներ ու ձևեր, ինչպես նաև դրանցից պաշտպանվելու ուղիներ ու միջոցներ [1, էջ 76–88,107]:

Վերոհիշյալ հիմնախնդրի լուծման համար այս ոլորտի առանձին առաջատար գիտնականներ առաջ են քաշել բավական հետաքրքիր մոտեցումներ, որոնք հենվում են ինչպես վիճակագ-

րական հետազոտությունների և գիտափորձերի արդյունքների, այնպես էլ ֆիլոգենեզում[1] առկա ընդհանուր օրինաչափությունների վրա:

Այսպես, ուսումնասիրելով բնության մեջ կենդանական աշխարհի արտաքին ապակառուցողական ներգործությանը դիմագրավելու եղանակները՝ Ե.Լ. Դոցենկոն դրանց էվոլյուցիայի ճանապարհով ձևավորել է բավականաչափ հետաքրքիր պաշտպանական դիրքորոշումների համակարգ, որը կիրառելի է ինչպես անձի, այնպես էլ ամբողջ հասարակության մասշտաբներով հոգեբանական պաշտպանության իրականացման համար [3, էջ 199–204]:

Արտաքին աղբյուրից իրականացվող ագրեսիվ-քայքայիչ ներգործության նկատմամբ այստեղ առանձնացվում են ելակետային հինգ հիմնային պաշտպանության եղանակներ՝

1. փախուստը և դրա տարատեսակները՝ նահանջը, խուսափումը, հապաղումը.

2. քողարկումը, այսինքն՝ հակառակորդի համար աննկատ դառնալու ձգտումը.

3. հեռանալը դեպի թաքստոց, այդ նպատակով բնական արգելքների օգտագործումը և արհեստական արգելապատնեշների ստեղծումը (հակառակորդի համար անմատչելի դառնալու ձգտումը).

4. հարձակման կիրառումը որպես ակտիվ պաշտպանություն («լավագույն պաշտպանությունը հարձակումն է»).

5. իրական կամ պոտենցիալ հակառակորդի վարքագծի, մասնավորապես նրա մտադրությունների կառավարումը (սպառնալիքների, սիրաշահումների, խորամանկությունների, խաբուսիկ տեղաշարժումների և այլ հնարքների ճանապարհով):

Պաշտպանության այս ելակետային հինգ ձևերն ընդունվում են որպես հիմնային պաշտպանական դիրքորոշումներ, որոնք կարող են կիրառվել ինչպես անձի, այնպես էլ հասարակական խմբի կամ էլ հասարակության ամբողջական հոգեբանական պաշտպանության միջոցառումներում:

Սույն նպատակով դրանք կարող են, համապատասխանաբար, ձևափոխվել անձի (սոցիալական խմբի, հասարակության) հոգեբանական պաշտպանության այնպիսի տիպական ձևերի, ինչպիսիք են՝ **հեռանալը, արտամղումը, պատնեշումը (շրջափակումը, սահմանափակումը, մեկուսացումը), կառավարումը (մանիպուլյացիան), թաքնվելը (անշարժացումը, քողարկումը) և անտեսումը**:

Այս դիրքորոշումների ուսումնասիրման հիման վրա Դոցենկոն առաջարկել է ըստ հակադիր, բայց փոխլրացնող և, դրանով իսկ, ամբողջությունն ապահովող հատկանիշների դրանք զույգավորել հետևյալ կարգով. **հեռանալ–արտամղել** (ըստ օբյեկտ–սուբյեկտ հեռավորության հատկանիշի), **պատնեշել–կառավարել** (ըստ ներգործության հոսքի կառավարման հատկանիշի), **թաքնվել–անտեսել** (ըստ տեղեկատվական ուղու կառավարման հատկանիշի):

Եթե հակամարտությունը դիտարկենք պարզեցված սխեմայով՝ **հարձակում–պաշտպանություն** (իսկ տեղեկատվական–հոգեբանական պայքարում դա նաև երկկողմանի բնույթ է կրում), ապա այստեղ արտամղումը կարող է իրականացվել հակառակորդի վրա ներգործման ձևով, ինչը Դոցենկոն ներկայացնում է որպես **հակառակորդի կառավարում**:

Ինչ վերաբերում է հարձակմանը, ապա այն կարելի է դիտարկել նաև որպես անվտանգության ապահովում՝ այլ ձևերի, եղանակների, մեթոդների, մոտեցումների կիրառմամբ[2]: Երբեմն գործունեության ոճը կարող է լինել հարձակողական, ակտիվ:

[1] Ամբողջ օրգանական աշխարհի զարգացման գործընթացը:

[2] Ընդհանրապես հարձակումը դիտարկվում է որպես ոչ պաշտպանական, այլ զուտ ագրեսիվ-նվաճողական մարտաոճ: Պաշտպանությանն

Հարկ է նշել, որ այստեղ, որպես հիմնային պաշտպանական դիրքորոշում, չի դիտարկվում այնպիսի էական դիրքորոշումներ, ինչպիսիք են այդ պաշտպանությանը **նախապատրաստվելը**, հակառակորդին **դիմադրություն ցույց տալը** կամ **ենթարկվելը (հանձնվելը)**:

Բնության մեջ գոյություն ունեցող հակամարտություններում, որտեղից իր ելակետային դրույթներն է քաղել Դոցենկոն, որպես դիմադրության ունակության ծանրակշիռ ու կարևոր փաստարկներ կարող են հանդես գալ ուժը, զինվածությունը, հարստությունը, խելքը, ինչպես և վտանգի նկատմամբ (օրինակ՝ հիվանդությունների և բարդ հոգեբանական վիճակների կրկնվելու դեպքում) բնական կամ արհեստական ճանապարհով իմունիտետի ձևավորումը: Տարբեր մակարդակներով և ձևերով այն իր դրսևորումներն է գտնում ֆիլոգենեզում, մասնավորապես՝ մարդու մոտ:

Դիմադրությունը, իհարկե, որոշակի ունակությունների, հոգեկան ամրության կամ վարքի կայունության հիմնապաշարի առկայություն է ենթադրում, ինչպես նաև դրանց ուժեղացում, օրինակ՝ ինքնակատարելագործման, ինքնաներազդման կամ արտաքին կառուցողական ներազդման ճանապարհով: Դիմադրությունը, որպես գործողություն, հիշյալ ունակությունների կամա թե ակամա կիրառումն է:

Տեղեկատվական–հոգեբանական պայքարի տեսանկյունից կայունությունն արտաքին ներգործության արդյունքում ստեղծված տագնապներին, արտաքին մարտահրավերներին ու դրանց փաստարկներին ընդդիմացող ներքին դիրքորոշումների ամբողջությունն է, այն հավասարակշռող կշռաքարը, որ նետվում է այդ պայքարի նժարին:

Սույն հիմնային դիրքորոշման ներառումով պայքարի (հոգեբանական պաշտպանության կազմակերպման) տրամաբանական շղթան ամբողջացվում է և ներկայացվում որպես **հեռավորության պահպանում (մեծացում)–ներգործության հոսքի կառավարում–տեղեկատվության ուղու կառավարում–ներգործության հակակշռում (դիմադրություն)–կայունության պաշարի ստեղծում (դրա մեծացում)**:

Որպես շղթայի եզրային հանգույցներ՝ այստեղ անուղղակի՝ դիմադրության ունակության, դրա զարգացման և կիրարկման տեսանկյուններից, արտացոլված են հոգեբանական պաշտպանության սուբյեկտը և հակառակորդը՝ որպես հոգեբանական ներգործության ճանապարհով կառավարման օբյեկտ [1, էջ 250]:

Փորձենք ավելի մատչելի ներկայացնել վերոհիշյալ հիմնային պաշտպանական դիրքորոշումները:

Բնական է, որ, դրանց կիրառմանը կարող է նախորդել այս իրադրության վերաբերյալ **ելակետային տվյալների վերլուծությունը** և դրա զարգացման **կանխատեսումը**: Շատ դեպքերում այն կարող է, պլանների և գործողությունների մեջ հետագա ուղղորդումների ձևով, որակապես փոխել իրադրության հետագա ընթացքը:

Եթե դիտարկենք բնության մեջ՝ կենդանիների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունները, ապա կարող ենք ասել, որ այստեղ նույնպես առկա է կանխատեսման տարրը: Օրինակ՝ գազանները, ելնելով նախկին փորձից, շրջապատում որոշակի հոտերի առկայությունից, արտաքին այլ նշաններից, ընկալում և գնահատում են իրավիճակը (այլ գազանների հնարավոր ներկայությունը մոտակայքում, դրանց կողմից նկատվելու վտանգը) և, ըստ դրա, պլանավորում ու իրականացնում են իրենց հետագա քայլերը:

Որպես մեկ այլ նախնական դիրքորոշում կարելի է դիտարկել հակամարտու-

ուղղված կարելի է համարել հակահարձակման, կանխակալող հարձակման մարտաոճերը:

թյանը **նախապատրաստվելը**: Այն կապված է ոչ թե որևէ կոնկրետ, այլ հնարավոր հակամարտության մեջ մտնելու հետ և ներառում է մինչ այդ հակամարտությունը եղած ժամանակահատվածում անձի ու նրա հնարավորությունների, մասնավորապես՝ հոգեկան կայունության ձևավորմանն ու զարգացմանը ուղղված գործողությունները:

Նախապատրաստվելը կարող է ներառել նաև կանխիչ միջոցների ստեղծումը՝ հետագայում որոշակի դիրքորոշումներ իրացնելու նպատակով: Այսպես, բնության մեջ գազաններն իրենց կենսատարածքը նշագրում են և, դրանով իսկ, զգուշացնում են հնարավոր հակառակորդներին (ապահովում են նրանց վրա հեռակա ներգործություն) ու փորձում նրանց հեռացնել այդ սահմաններից: Մեկ այլ նախապատրաստական գործունեության ձև. նրանք իրենց հոտից պահակներ են կարգում, որոնք հեռվից նկատելով վտանգավոր հակառակորդի մոտենալը՝ զգուշացնում են ամբողջ հոտին: Դրան, իհարկե, հետևում է պաշտպանական որոշակի մարտավարության (դիրքորոշման) ընտրությունը:

Նախապատրաստվելը որոշակիորեն կապված է կանխատեսման հետ: Այն կարող է դրան ինչպես նախորդել (կանխատեսման նախապատրաստություն), այնպես էլ հաջորդել (կանխատեսման իրացում): Այս երկու պաշտպանական դիրքորոշումները կարելի է դիտարկել որպես առավել ընդհանուր՝ նախնական դիրքորոշման տարր:

Նշենք, որ այս նախնական դիրքորոշումն առանձին հանդես չի գալիս, այլ ունի իր տրամաբանական շարունակությունը՝ արդեն կոնկրետ դիրքորոշման ձևով:

Վերը ներկայացված ցանկացած դիրքորոշում ունի ինչպես իր պասիվ, այնպես էլ ակտիվ արտահայտումը (տես՝ աղյուսակ): Օրինակ՝ հանձնվելը կարող է արտահայտվել ինչպես պասիվ վարքագծի (նախնական ակտիվ դիրքորոշումների մարում, նահանջ՝ դեպի Մասլոուի բուրգի հիմնամաս), այնպես էլ ակտիվ գործողությունների (դիրքորոշումների փոփոխում, հակադիր դիրքորոշումների անվերապահ ընդունում, քծնանք և այլն) դրսևորմամբ:

Ըստ էության, կանխատեսման համար այն կարող է արտահայտվել ակտիվ՝ գիտակցված և պասիվ՝ ենթագիտակցական–ինտուիտիվ տեսքերով:

Որպես նախապատրաստման պասիվ արտահայտում՝ կարելի է ներկայացնել գենետիկ ժառանգությամբ (անձի խառնվածք, ուղղվածություն, հուզականություն և այլն), նախկին փորձով, արժեքային համակարգով պայմանավորված և բնականոն ձևավորվող վարքային դրսևորումների կայունացնող համակարգը: Ի հակառակ դրան՝ որպես տվյալ դիրքորոշման ակտիվ արտահայտում կարելի է ընդունել հնարավոր հակամարտությանն ակտիվ նախապատրաստվելը, այս նպատակով իրականացվող կառուցողական ներազդումը (ինքնաներազդումը):

Միջանձնային հարաբերությունների, հասարակական խմբերի և ամբողջ հասարակության կտրվածքով արտահայտումների ձևով ներկայացնենք պաշտպանության վերը հիշատակված դիրքորոշումները:

Հեռանալը, ավելի շուտ, պաշտպանվողի կողմից հակառակորդից ունեցած հեռավորության (դիստանցիայի) մեծացումն է (նահանջը, խուսափումը, ծայրահեղ իրավիճակներում՝ փախուստը[1]), շփման ընդհատումը, որպես ապակառուցողական ընկալվող ներգործության հասանելիության սահմանագծից դուրս գալը:

Պատնեշումը (շրջափակումը, սահմանափակումը, մեկուսացումը[2]) դիտարկվում է որպես արտաքին աղբյուրից իրականացվող ներգործության կասեցում, ներգործության աղբյուրի հնարավորությունների սահմանափակում, դրա օբյեկտի հոգեկանի մեկուսացում:

[1] Համաձայն չինական «Տանուլ տրվող մարտերի ստրատագեմներ»–ի՝ «Փախուստը՝ որպես լավագույն հնարք» [5, էջ 181–184]:

[2] Համաձայն «Հավասար ուժերով ճակատելու ստրատագեմներ»–ի՝ «Հակառակ ափից դիտել հրդեհը» կամ «Երրորդ կողմի հետ համատեղ մարտի ստրատագեմներ»–ի՝ «Բարձրանալ տանիք և հեռացնել սանդուղքը» [5, էջ 64–67, 147–150]:

Կառավարումը ներազդումն է տեղեկատվական–հոգեբանական ներգործությունն իրականացնող կողմի, նրա գնահատումների մեխանիզմների ու բնութագրերի վրա և, դրանով իսկ, հակամարտության մեջ վերջինիս վարքագծի կառավարումը:

Արտամղումը հակամարտող կողմի հաշվին դիստանցիայի (հեռավորության) մեծացումն է[1]: Հաճախ արտամղումն իրականացվում է հոգեբանական, ֆիզիկական կամ այլ ներգործության ճանապարհով:

Թաքնվելը (անշարժացումը, քողարկումը[2]) նպատակ է հետապնդում աչքի չընկնել (հարվածի տակ չընկնելու նպատակով), թաքցնել սեփական իրական նպատակադրումները, հնարավորությունները, քողարկել սեփական ուժերը, ակտիվություն չցուցաբերել, դրանով իսկ՝ թուլացնել պոտենցիալ հակառակորդի ուշադրությունն ու զգոնությունը [2, էջ 36–44]:

Անտեսումը ներգործության աղբյուրի, սպառնալիքի կամ դրա բնույթի վերաբերյալ տեղեկատվության վերահսկումն է, դրա սահմանափակումը կամ աղավաղված ընկալումը՝ որպես ոչ կարևոր, անլուրջ և ուշադրության ոչ արժանի:

Որպես անտեսմանը մոտ գործունեության ձև կարելի է դիտարկել նաև **հետաձգումը**: Այն կարող է կիրառվել, եթե անհրաժեշտ է լինում հաղթահարել տվյալ դժվարին պահը (ինչպես անտեսման ժամանակ), միաժամանակ երևալ օբյեկտիվ (մեկ է, վաղ թե ուշ այդ մասին կիմանան): Հետաձգումը կարող է պայմանավորված լինել ավելի արդյունավետ (փաստարկված) պատասխանի նախապատրաստման, դրա համար ավելի ընդունելի իրավիճակի ստեղծման անհրաժեշտությամբ:

Դրան համապատասխան, կարելի է ներկայացնել անձի (հասարակական խմբի, հասարակության) հոգեբանական պաշտպանության մեկ այլ տիպական ձև՝ **դիմադրումը**:

Դիմադրության համար հիմնային է անձի ներքին՝ հոգեկան կայունության համակարգի, այլ հնարավորությունների ձևավորումը կամ առկա պաշարի մեծացումը[3]: Մնացածը դրա կիրառման գործընթացն է:

Ներքին կայունությունն ապահովող գործոնները կարող են դինամիկ փոփոխությունների ենթարկվել. կարևոր է դրանց պաշարի մեծացումը տեղեկատվական–հոգեբանական պայքարի ընթացքում՝ օգտագործելով ինչպես դրա իրական արդյունքները, այնպես էլ առաջ քաշելով նոր փաստարկներ:

Ենթարկվելը կարող է ընդունել **համակերպվելու** գործելակերպ, երբ անհրաժեշտ է կարևորը պահպանելու նպատակով զիջել մասը[4]: Լավագույն դեպքում այն կարող է ընդունելի լինել՝ պահպանելու ապագայի, ավելի լավ ժամանակների հույսը:

Անուղղակի գործողությունների ռազմավարության և մարտավարության տեսանկյունից այն կարող է նպատակ հետապնդել ժամանակ շահել, այդ

[1] Համաձայն «Հարձակողական մարտերի ստրատագեմներ»–ի՝ «Ստիպել վագրին թողնել սարը» [5, էջ 87–90]:

[2] Համաձայն «Մի քանի մասնակցի հետ մարտի ստրատագեմներ»–ի՝ «Ոսկյա ճպուռը դեն է նետում թեփուկները» [5, էջ 113–116]:

[3] Եթե ուշադրություն դարձնենք, սույնը հակադարձումն է հոգեբանական պատերազմի միջոցառման՝ անձի, սոցիալական խմբի կամ ընդհանուր հասարակության ներքին կայունացնող գործոնների (ավանդույթներ, սովորույթներ, վարքային մոդելներ, արժեքային համակարգ և այլն) քայքայմանը [1, էջ 31–69]:

[4] Համաձայն «Հավասար ուժերով ճակատելու ստրատագեմներ»–ի՝ «Զոհաբերել սալորը՝ փրկելու համար ծիրանը» [5, էջ 71–74]:

ընթացքում ձևափոխել հակառակորդի հոգեվիճակը և, վերջին հաշվով, քայքայել նրա կամքն ու հզորությունը [1,էջ 12–31, 4,էջ 6–23]:


Երբեմն ընդունելի կարող է լինել գործունեության այնպիսի ձևը, ինչպիսին է **համաձայնումը**: Որքան էլ զարմանալի լինի, այն կարող է բավականին արդյունավետ լինել, հատկապես, երբ տարածվող փաստերն ակնհայտ են, իսկ տեղեկատվության աղբյուրները՝ բազմաթիվ: Առանձին դեպքերում նման (հիմնականում՝ երկրորդական, ոչ սկզբունքային հարցերում) համաձայնողական մարտավարությունը կարող է բավարարել և շոյել դիմացինի ինքնասիրությունը և թուլացնել նրա հարձակման տեմպը (հակառակորդի կառավարման էֆեկտ), հասարակության մեջ բարձրացնել սեփական վարկը՝ որպես օբյեկտիվ և սկզբունքային: Ներկայացվող տեղեկույթի հետ համաձայնելուն, իհարկե, կարող են հետևել բազմաթիվ արդարացնող մեկնաբանություններ՝ «բայց»–եր և «որովհետև»–ներ, որոնց արդյունքում կարող է ի չիք դարձվել ներգործությամբ պլանավորված արդյունքը (վնասը):

Տեղեկատվական–հոգեբանական պայքարում անձի վերոհիշյալ պաշտպանական դիրքորոշումները ներկայացված են հետևյալ աղյուսակում.

Աղյուսակ. *Արտաքին աղբյուրից իրականացվող քայքայիչ ներգործության նկատմամբ պաշտպանական դիրքորոշումների համակարգը*

		01	11
	Գործընթաց	**Պասիվ ձև**	**Ակտիվ ձև**
1	*Նախնական.* կանխատեսում	*Ենթագիտակցական*–ինտուիտիվ արդյունք	Գիտակցված գործողություններ
	Նախնական. նախապատրաստում	Հենվում է անձի վարքի կայունացնող, այլ պաշտպանական հատկանիշների վրա	Կառուցողական ներգործություն, պաշտպանական ներուժի նպատակային մեծացում
2	Հեռավորության պահպանում	Նահանջ, հետ քաշվել, փախուստ	Հականերգործում՝ հակառակորդի կառավարում, հեռացում, արտաքսում, արտամղում
3	Ներգործության բնույթի վերծանում	Անտեսում (հակառակորդին ուշադրություն չդարձնելը)	Արգելափակում՝ արգելքների ստեղծում, էկրանավորում, թաքստոցի որոնում
4	Տեղեկատվության արգելափակում	Քողարկում, անշարժացում	Մարում՝ ռադիոէլեկտրոնային ճնշում, «աղմկում»
5	Դիմադրում	Արտաքին գործոնների դեմ ներքին դիրքորոշումների հակադրում	Հակառակորդի ներգործության միջոցների վերացում
6	Ենթարկվում	Համակերպվում, ակտիվ դիրքորոշումների մարում, հնազանդվում	Դիրքորոշումների փոփոխում, հակադիր դիրքորոշումների անվերապահ ընդունում, քծնանք

Ավելի դիտարժան է արտաքին աղբյուրից իրականացվող ներգործության նկատմամբ անձի պաշտպանական դիրքորոշումների համաչափ («բյուրեղաձև») ներկայացումը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Պաշտպանական դիրքորոշումների «բյուրեղաձև» ներկայացումը

Գծապատկերով ներկայացված բյուրեղի գագաթների համարակալումները համապատասխանում են աղյուսակում ներկայացված հիմնային դիրքորոշումներին, կողերը՝ դրանց արտահայտումներին (անմիջական գործընթացներին): Վեկտորներն արտացոլում են նախնական դիրքորոշումներից անմիջական դիրքորոշումներին անցնելու հնարավորությունը, իսկ **2–3–4–5–6–7–2** փակ բեկյալը՝ անմիջական դիրքորոշումների ամբողջությունը:

Տեղեկատվական–հոգեբանական պայքարում էական է նաև արտաքին միջավայրի հետ կապված գործոնների համակարգը: Արտաքին միջավայրի պայմանները անձի, սոցիալական խմբի և ամբողջ հասարակության նկատմամբ տեղեկատվական–հոգեբանական ներգործության, ինչպես և դրանից պաշտպանվելու համար կարող են լինել չեզոք, նպաստող կամ խոչընդոտող [1, էջ 258]: Այս վերջին երկուսը, որակական կամ քանակական առումով, կարող են ունենալ գնահատման որոշակի աստիճանակարգ կամ միավորների համակարգ:

Սակայն այստեղ հաշվի պետք է առնել, որ այս արտաքին պայմանները մի միասնական գործոն չի կարելի համարել, ինչպես հակառակորդի գործունեությունը: Այստեղ նաև հաշվի է առնվում, որ դրանք չունեն պաշտպանության օբյեկտ հանդիսացող անձին, հասարակական խմբին կամ ամբողջ հասարակությանը վնասելու ներքին դիտավորություն (ուղղվածություն): Դրանց նկատմամբ հակազործողությունները էլ միասնական բնույթ չեն կրում: Մասնավորապես, արտաքին որոշ պայմաններ կարելի է օգտագործել կամ անտեսել, ուրիշներից՝ պատնեշվել: Առանձին պայմանների կարելի է հարմարվել, իսկ ուրիշների՝ ակտիվորեն հակադրվել:


Ակտիվ պաշտպանությունն այստեղ առանձնահատուկ դեր ունի: Այն կարող է լինել ինչպես միջավայրի բացասական գործոնների նկատմամբ անձի, հասարակական խմբի կամ ամբողջ հասարակության կայունության պաշարի ավելացման, այնպես էլ միջավայրի պայմանների փոփոխմանն ուղղված ակտիվ գործողությունների տեսքով: Այս դեպքում, հոգեբանական պաշտպանության ապահովման նպատակով, պահանջ է առաջանում արտաքին պայմանների հետ կապված ու բացասաբար ազդող գործոնների կասեցման և, ընդհակառակը, նպաստող գործոնների խթանման:

Այստեղ, իհարկե, պետք չէ մոռանալ, որ վերը հիշատակված արտաքին պայմանները կարող են ձևավորվել ինչպես բնականոն, այնպես էլ հակառակորդի կողմից՝ որպես օբյեկտի վրա վերջինիս անուղղակի ներգործության արդյունք:

Արտաքին միջավայրի գործոնների հետ հաշվի նստելու ենթահամակարգն

իրենից ներկայացնում է հոգեբանական պաշտպանության առավել ընդհանուր համակարգի մի տարրը (գծապատկեր 2): Այն կարելի է ձևավորել՝ ելնելով վերը ներկայացված պաշտպանական դիրքորոշումների համակարգի անալոգիայից:

Իրական կյանքում պաշտպանության այստեղ ներկայացված դիրքորոշումները կարող են կիրառվել ինչպես առանձին, այնպես էլ զուգորդված կամ համալիր: Այսպես՝ արգելափակման դեպքում անտեսումը կարող է հանդես գալ որպես դրա տարր, իսկ դրանց ակտիվ և պասիվ ձևերը կարող են կիրառվել որպես փոխլրացնող:



Գծապատկեր 2. Հոգեբանական պաշտպանության ընդհանուր պատկերը

Իմանալով անձի պաշտպանության հիմնային դիրքորոշումները՝ կարելի է կառուցել մի քանի հատկանիշներ ունեցող (համալիր) դիրքորոշում: Համանման ձևով, որևէ անձի վարքագծի ուսումնասիրման ժամանակ կարելի է առանձնացնել նրա դիրքորոշման բնութագրիչ հատկանիշները: Օրինակ՝«հեռանալ՝ դուռը շրխկացնելով» վարքային մոդելի մեջ տեսանելի են ինչպես հեռանալու, այնպես էլ հակառակորդի (մնացողի) վրա ներգործելու, վախեցնելու հիմնային դիրքորոշումները: Ակնհայտորեն այստեղ առկա է նաև ինքնահանգստացման, ինքնաբավարարման (հոգեկան կայունության ստեղծման կամ պահպանման) դիրքորոշման դրսևորումը: Որոշակի իրավիճակներում չի բացառվում և «զայրույթով» իր փախուստը քողարկելու, շրջապատի համար իր արժեքը ցուցադրելու վարքագծի դրսևորումը:

Հարկ է նշել, որ քննարկված յուրաքանչյուր հիմնային դիրքորոշում, բացի իր սեռային հատկանիշից, կարող է ունենալ նաև դրա նմանակման հատկանիշ: Դրա իրացումը հակառակորդի վրա հոգեբանորեն ներգործելն է, նրան մոլորեցնելը [1, էջ 12–22, 3, էջ 113, 4,էջ 16–18, 5, էջ 46–121]: Այսպես, օրինակ՝ նահանջը կարող է լինել ոչ թե հակառակորդի հետ հեռավորության պահպանման (մեծացման), այլ հակառակորդի վրա ներգործման ձև՝ նպատակ ունենալով վերջինիս մոտ խղճահարություն առաջացնել կամ, ընդհակառակը, նրա մոտ մոտալուտ հաղթանակի պատրանք ստեղծել և քաշել–տանել դեպի մոտակա դարանը:

Հակառակորդի դեմ պայքարում, որպես ակտիվ պաշտպանության միջոց, հատկապես արդյունավետ են վերջինիս նկատմամբ իրականացվող ապակառուցողական (քայքայիչ) և պաշտպանության օբյեկտի նկատմամբ կիրառվող կառուցողական տեղեկատվական–հոգեբանական ներգործությունները [1, էջ 160] :

Այսպիսով, տեղեկատվական–հոգեբանական պայքարի գործընթացներում կարևորելով անձի, հասարակական խմբի և ամբողջ հասարակության հոգեբանական պաշտպանության հիմնախնդիրը՝ առաջադրվում է հոգեբանական պաշտպանության ամբողջական համակարգ: Դրա մշակման համար հաշվի է առնվել ինչպես այս ոլորտում առկա նախկին փորձը, այնպես էլ ուսումնասիրվել են բնության մեջ առկա և այս հիմնախնդրին առնչվող օրինաչափությունները:

Հոդվածի ներկայացման պարեթիվը՝ 29.05.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ի. Բ. Պողոսյան** Հոգեբանական պատերազմ. հիմնական գործոնները.– Եր.: Զանգակ–97», 2009:
2. **Ի. Բ. Պողոսյան, Վ. Ս. Կարապետյան, Ա. Ս. Գաբրիելյան,** Լռության գործոնը, Երևան, ԿԳՆ ԿԱԻ Ընտանիք և դպրոց», 4.2009, էջ 36–44:
3. **Доценко Е. Л.** Психология манипуляции: феномены, механизмы и защита.–М.: ЧеРо, изд. МГУ, 1997г.
4. **Лиддел–Гарт Б. Х.** Стратегия непрямых действий,– М.: 1957.
5. Тридцать шесть стратагем. Китайские секреты успеха.–М.: Белые альвы, 1999.

УСТАНОВКИ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ЗАЩИТЫ В ПРОЦЕССЕ ИНФОРМАЦИОННО–ПСИХОЛОГИЧЕСКОЙ БОРЬБЫ

ВЛАДИМИР КАРАПЕТЯН

Заведующий кафедрой возрастной и педагогической психологии Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, доктор психологических наук, профессор

ИВАН ПОГОСЯН

Преподаватель научно–учебного центра СНБ РА, соискатель кафедры возрастной и педагогической психологии Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

В статье представлена целостная система психологической защиты личности, социальной группы и общества в процессе информационно–психологического противостояния. Она опирается на базовые защитные установки для личности, социальной группы и общества. Эти установки были сформированы на основе учета определенных закономерностей в природе, изучения существующих здесь способов противостояния внешнего воздействия.

Дата представления статьи: 29.05.2012г.

ATTITUDES OF PSYCHOLOGICAL DEFENCE IN THE PROCESS OF INFORMATIONAL–PSYCHOLOGICAL STRUGGLE

VLADIMIR KARAPETYAN

Head of the Chair Age–Specific and Pedagogical Psychology at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Doctor of Psychology, Professor

IVAN POGHOSYAN

Lecturer of the Scientific–Educational Center of SNS of RA, Aapplicant of the Chair Age–Specific and Pedagogical Psychology at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

The article represents a complete system of defence for individuals, social groups and the whole society in the process of informational–psychological struggle. It is based on defensive attitude for individuals, social groups and the society. Their development has been based upon results of a research on conformities to natural laws, methods of confronting the destructive impact of an external source.

Article submission date: 29.05.2012

ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

AELITA DOLUKHANYAN

Head of the Chair of Armenian Literature and its Teaching Methods of the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Professor, Ph.D. Corresponding Member of the National Academy of Sciences of the Republic of Armenia

ARMENIAN PHILOSOPHER OF THE 5TH CENTURY EZNIK KOGHBATSI IN THE APPRECIATION OF FRENCH ARMENOLOGISTS

UDKC 1/14:891.981.0

Many ancient subjects were preserved in the work *Refutation of Sects* by Eznik Koĕbatsi, founder of the Armenian philosophical thought. Still in 1853 this work was translated into French by Le Vaillant de Florival. His task was continued by new translators: Victor Langlois (1869) and Louis Mariès (1959). The latter became the author of the most remarkable research on Eznik's work and he published in 1924 a voluminous study about the person and work of Eznik Koĕbatsi. The English and Italian translations of the *Refutation of Sects* by Eznik Koĕbatsi are based on the critical edition of Louis Mariès.

Key words: French, philosopher, writer, sect, Zoroastrianism, refutation, good, evil, theology, style.

After the creation of Armenian alphabet by Mesrop Mashtots the Armenian spiritual and intellectual life got a sudden rise. National literature, which essence was Christian, started to develop in several directions. Those were: historiography, hagiography, patristic and dogmatic works, philosophy, sacred chants, as well as numerous and various translations mostly done from two languages related with Christianity: Greek and Syriac. Some Armenian translations done in the 5th century are nowadays found to be very valuable, as their originals were lost during centuries; thus, their Armenian translations got the value of originals and, moreover, of primary sources. Precisely this circumstance contributed to the development of Armenian studies in Europe and especially in France.

From long ago, Eznik Koghbatsi is know as the founder of the Armenian philosophical thought which had later such prominent representatives as David the Invincible, Hovhan Vorotnetsi and Grigor Tathevatsi.

The work *Refutation of Sects* by Eznik Koghbatsi was translated for the first time into French by Le Vaillant de Florival [1]. This translation was not considered to be a success in Armenian studies [2, p. 22]. For the second time, the Chapter II of Eznik's work, devoted to the refutation of the Persian religion of Zoroaster, was translated by Victor Langlois and published in the Appendix of the second volume of his *Collection of Armenian Ancient and Modern Historians* [3, p. 371].

Works by Eznik Koghbatsi were fundamentally studied by well known French armenologists Antoine Meillet and Louis Mariès, disciple of Frédéric Macler; Mariès devoted all his life to study the *Refutation of Sects* by Eznik Koghbatsi, discussing the subject in numerous articles and two monumental works. The first one was published in 1924 and it is entirely devoted to the study and philological interpretation of Eznik Kołbatsi's masterpiece; this was a real innovation in Armenian studies [4]. The second work is the translation into French of Eznik Kołbatsi's work from the precise critical text, with commentaries and indexes. This book was published in 1959, one year after the death of Louis Mariès, by his disciple Charles Mercier [5]. This French translation became the base of the English translation published in London in 1998. "Our English translation of Eznik Koghbatsi's *On God* is based on the critical edition of Louis Mariès and Charles Mercier. We have followed Mariès' division of the text into 432 numbered paragraphs" [6, p. 31].

Eznik Koghbatsi's work was translated several times into German. The first complete translation was done by J.M. Schmidt [7] with the help of G. Galamkiarian. It was published in Vienna in 1990.

In 1996 Alexander Orengo translated Eznik Kołbatsi's *Refutation of Sects* into Italian, adding to it new and interesting commentaries [8]. The complete translation into Russian of Eznik's work was done by V. Chaloyan [9] in 1968 and published in Yerevan.

The *Refutation of Sects* by Eznik Koghbatsi has been studied by many researchers, either Armenian or foreign. His masterpiece has been the subject of a great variety of voluminous works [6, p. X–XXIV].

Those French armenologists who spoke about Eznik Koghbatsi scientifically studied his biography as well, especially paying attention to our two authors: Koriun and Movses Khorenatsi. Most probably, the latter used to know personally this important figure of Armenian cultural world who was translator, theologian, philosopher and writer.

Let us cite Eznik's life evidence according to Koriun and Movses Khorenatsi:

Koriun: "After a while a few brethren came to the region of the Greeks, the name of the first one of which was Ghevondes, and the second, was I, Koriun. And as they drew near Constantinople they joined Eznik, and as most intimate companions, together they performed their spirituals tasks [that is the work of translation]. Then they came to the land of Armenia, having brought authentic copies of the God–given book and many subsequent traditions of the worthy church fathers, along with the canons of Nicaea and Ephesus, and placed before the fathers the testaments of the Holy Church which they have brought with them.

Yet blessed Sahak, who had rendered from the Greek language into Armenian all the ecclesiastic books and the wisdom of the church fathers, once more undertook, with Eznik, the comparison of the former random, hurriedly done translations from then available copies with the authentic copies, and they translated many commentaries of the Bible" [6, p. 14].

Movses Khorenatsi: "Then Mesrop/ Mashtots and Sahak the Great came and took the same pupils, Joseph and his other companion from the village of Kolb who was called Eznik, and sent them to Mesopotamia, to the city of Edessa. Whatever books of the holy early fathers they might find there they were to translate into our language and bring back without delay, so that afterwards they might be sent to Byzantium for the same purpose. But they received seductive letters from some importers to the effect that Sahak the Great and Mesrop/ Mashtots were preparing to send others to Byzantium, so without the permission of their own teachers they straightway set out from Byzantium, being zealous for good learning. And as they were very competent in Greek letters they sat to translating and writing. But jealous of them, their fellow pupils, whose names were Leontius and Koriun, departed of their own accord to them in Byzantium... All of them received an

honorable welcome from Maximianos, the bishop of Byzantium (d. 434)" [6, p. 14–15].

Victor Langlois, who was perfectly acquainted with Armenian Middle Ages and in the first place with Armenian authors of the 5th century, praises very much in his Preface the work by Eznik which apparition had a great political significance in Armenian life. He reminds us about the important role played by Eznik during the Artashat council of 449, so that the collective answer given to Yazdegerd II by the Armenian people should be exhaustive and that the Persians would be convinced that Armenians would never step back from monophysitism to pantheism and that Zoroastrianism was inadmissible for true Christians who had chosen their confession once for ever.

V. Langlois severely criticized the translation done by Le Vaillant de Florival noting that: "Unfortunately, this translation is very inaccurate and can give but an imperfect idea of the value of Eznig's book" [3, p. 373]. He translated paragraphs 1 to 11 of the part dealing with the refutation of Zoroastrianism, because other paragraphs of this part did not contain important data about this religion. The sacred book of Zoroastrianism, Avesta, became known to European scientists thanks to Anquetil Du Perron (1731–1805) who lived ten years among Indian Farsi people, learned their language, translated the Avesta into French and published its text in 1771. In 1881 Professor Harley published in Paris the critical text of the Avesta, in the preface of which he speaks about the great value of data communicated about Zoroastrianism by Armenian authors of the 5th century, especially Eznik and Movses Khorenatsi, such data that don't exist in the text he published. It concerns in the first place the part about Zurvan, which exists in the works by Eznik and Eghishe, but is absent from the text published by Harley. By the way, Eznik narrates this part according to the passage *About Refutation* (*About Critic*) of *the Book of Chries*. Eznik was acquainted with the history of Avesta and knew that during the ruling of Sassanids the texts of Avesta were restored according to the oral tradition and because of that he called them "patched up absurdities and legends" [2, p. 92]. According to Langlois the work of Eznik is very valuable as a philosophical one and it can entirely be considered as worthy to be included in a collection of philosophical works with those by David the Philosopher and other Armenian thinkers. "In fact, we cannot include in this collection the entire work by Eznig, because his book is not a historical work, but a philosophical treatise of great value which must have its choice place in another collection with the works by David the Philosopher and other Armenian thinkers" [3, p. 373]. V. Langlois notices that the part he translated contains such data that are difficult to find in other sources [3] and the passage of Eznik's work will adjust this gap which is so important for scholars studying Avesta.

Connoisseurs of Armenian medieval philosophy have noticed that among French armenologists it was Langlois who praised Eznik most of all. "The simplicity and entity of this small work put it in the rank of the most important apologetic works of that period literature, either Greek or Armenian" [10, p. 9]. In the opinion of L. Mariès, Eznik Ko⊠batsi wrote his work before 449, before the Council of Artashat and the Avarayr battle of 451. It was the *Refutation of Heresies* by Eznik of Ko⊠b, Bishop of Bagrevand, which was written in 441 (445) and 448" [4, p. 9]. Considering the work by Eznik as "a singular work" in the Armenian literature of the 5th century, Mariès investigates philosophical and theological works which are in the base of the Armenian author's work. These sources are Hippolytus, Epiphanius, Origen, Achileus, Statius, Diodore of Tarsus, Eranius, Adamantius and Ephrem. In the opinion of Mariès, a meticulous study of Eznik's work will show that among its

sources there can also be works by first Armenian Christian authors, as well as such facts, connected with the early period of Armenian reality, which influenced the author and were indirectly estimated [4, p. 11].

The principle of dividing Eznik's work into four chapters or four books is adopted in Armenian philology. Mariès doesn't agree with it and divides the work of the Armenian philosopher into numerous parts. He writes that three years ago, when he started to study Eznik's work it was divided in four books: "Three years ago, when I started to especially study the book by Eznik, I followed the given division into four books: *Against Pagans, Against Persians, Against Greeks, Against Marcion*" [4, p. 17]. Nevertheless, the first publication of Eznik's work, which was printed in 1762 in Smyrna, had not such a division, but was divided into 76 homilies or chapters [4, p. 18]. The armenologist proposes a new division which is able to accentuate the exceptional knowledge of the author and the concreteness of each part.

Here is a sample of the subdivision and titles of the *Refutation of Persian Religion*, done by Mariès:

2. Adversaries in view: Persians [4, p. 25].
A. Zurvanism:
a. Account …………………113.4–115.24
b. Answer: preamble: they say like *Mani* whom they have skinned …………… 115.25–117.19
α. First refutation …………………… 117.20–127.22
β. Second refutation …………………… 127.23–143.18
Conclusion of A. Eznik sets the thesis of Deo Vero …. 143.19–144.8
B. Nor creature evil by nature: question ……………. 44.8–15
a. Nor reasonable beings ……………… 144.16–145.6
b. Nor beasts without reason ………… 145.7–149.15
c. Nor Satan …………………………… 149.16–153.9

Eznik Koghbatsi examines the philosophical problem of the being from the viewpoint of the Bible and the Christian Church, adopting exclusively monotheism and severely denying any other doctrine opposite to it, known to him through Greek philosophers, Zurvanism and Zoroastrianism. All specialists having deeply studied Eznik's work are unanimous to insist on the encyclopedic knowledge of the Armenian philosopher who knew several foreign languages: Greek, Syriac, Persian and Hebrew; he was able to read works written in those languages in the original text. When he was sent to Edessa or Byzantium, on the order and with the support of Mesrop Mashtots and Sahak Parthev, to improve his knowledge he was able to read works written in those languages in the original texts. Eznik denies the position of Zoroastrianism in the matter of good and evil interrelation, according to which evil was brought to the earth by Ahrmn and good by Ormizd. He affirms very logically that there is no absolute evil or absolute good without true God. Just as in the Bible, in Eznik's work the theory of the four elements is in the base of God's creation. This theory was so canonic that it existed in the medieval Synaxaries. In this ritual book of feasts calendars we can read under the title *Days of Creation*:

"Heaven 2, with its Air and Fire
Earth 2, with its Ground and Water
Enemies irreconcilable and beloved inseparable; four material elements by which God created the world, as without ground it wouldn't be tangible hardness, nor without water it would be hardening and coagulating, nor without air, movement, nor without fire, seeing….That is how elements were brought about, as light and heavy, weak and sharp, opposites and unanimous" [11].

All French armenologists who studied Eznik are unanimous to stress the richness

of the Armenian philosopher's language: eloquent and precise, picturesque and very original. Eznik explains the unity of four elements only by the fact of God's existence which is able to rule and keep united these opposite forces. At the very beginning of his work Eznik cites this picturesque comparison: "Every chariot is yoked with horses of the same kind, except only this chariot which is yoked with a different kind. And those which are yoked with the same kind are unsteady at times; sometimes the horses separate and they put themselves and the driver in danger, sometimes they cause a break of the chariot. But when the chariot and the driver are sound and the horses are experienced, they run, paying attention only to what is in front of them. And that wonderful chariot that is the world, yoked with dissimilar and contrary horses and steered by a hidden hand, races not only straight ahead in one direction, but in all directions, and it is capable of every one. And when it races along the east there is no obstacle to keep it from running along the west, and when it races along the north there is no obstacle to keep it from running along the south; because the hand of the driver is competent to steer to every side and to race along the four corners of the universe" [6, p. 41].

Philosophical and theological approaches of Eznik's book are of course conditioned by the decisions of ecumenical councils of Nicaea and Ephesus, which severely denied any kind of sects' movement, and the Armenian Church adopted these decisions.

Louis Mariès, who is the author of several hypotheses about the sources Eznik used of, stresses more than once that he is amazed by the originality of the philosopher's thought, because of which his work is considered to be of the first rank in literature: "This plan is so simple and so great, this choice of capital philosophical objections is so perspicacious and so sound that they will be enough to establish forever his originality and to preserve for his literary personality a first rank value" [4, p. 33].

Article submission date 17.05.2012

BIBLIOGRAPHY

1. Le Vaillant de Florival, *Réfutation des différentes sectes des Païens, de la religion des Perses, de la religion des Sages de la Grèce, de la secte de Marcion*, par le Docteur Eznig, auteur arménien du V[e] siècle, Paris, 1853.
2. **See Eznik Kołbatsi**, *Refutation of Sects*, translation into Modern Armenian, Introduction and Commentaries by A.A. Abrahamian, Yerevan, 1970, p. 22.
3. **Eznig de Goghp**, *Réfutation des sectes*, Extrait du chapitre II : *Réfutation de la religion des Perses*, Nouvelle traduction (see : *Collection des historiens anciens et modernes de l'Arménie*, Published in French by Victor Langlois, vol. 2, Paris, 1869, p. 971).
4. **Le De Deo d'Eznik de Kołb**, connu sous le nom de *Contre les Sectes*, Etudes de critique littéraire et textuelle par Louis Mariès, docteur ès lettres, Paris, 1924.
5. **Eznik de Kołb**, *De Deo*, Traduction française, notes et tables par Louis Mariès et Charles Mercier, Paris, 1959.
6. A Treatise *On God* written in Armenian by **Eznik of Kołb** (floruit c. 430 – c. 450), an English translation, with Introduction and Notes by Monica J. Blanchard and Robin Darling Young, Peters Publishers, Leuven, 1998, p. 31.
7. **J.M. Schmidt**, Des Wardapet Eznik von Kołb *Wider die Sekten*. Aus den Armenischen übersetzt und mit Einleitungen, Wien, 1900.
8. **A. Orengo, Eznik di Kołb**, Confutazione delle sette (Ełc' Ałandoc'), Introduzione, traduzione e note, Pisa, 1996.

9. **Езник Кохбаци**, Книга опровержений (о добре и зле), Перевод, предисловие и примечания В.К. Чалояна, Ереван, 1968.
10. **С. С. Аревшатян**, Формирование философской науки в древней Армении (V–VI вв.), Ереван, 1973, с. 81.
11. **Synaxary**, Constantinople, 1706, p. 626 (in Armenian).

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱ ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻՆ ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայ գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հինգերորդ դարի հայ մատենագրությունը հայտնի է որպես համընդհանուր քրիստոնեական գրականության հնագույն տեսակներից մեկը, որը մաշտոցյան գրերի գյուտից հետո շատ արագ իր զարգացումն ապրեց՝ ճյուղավորվելով քրիստոնեական մատենագրությանը հատուկ ազգային ամենատարբեր ժանրերի՝ պատմագրություն, փիլիսոփայություն, դավանաբանական, աստվածաբանական գրականություն, հոգևոր երգ, վկայաբանություն, վարքագրություն և այլ ժանրեր: Այդ մշակութային նոր շարժման մեջ մեծ տեղ զբաղեցրեց հատկապես թարգմանչական գրականութունը՝ առաջին հերթին հունարենից և ասորերենից, նաև այլ լեզուներից՝ պարսկերեն, եբրայերեն և այլն: Այդ թարգմանությունների մի մասը ստացավ համաշխարհային արժեք, որովհետև անհետ կորել էին դրանց բնագրերը, և հայերեն թարգմանությունները մեր օրերում ստացան բնագրի արժեք: Բավական մեծ թվով հնագույն նյութեր պահպանված են հայ փիլիսոփայական մտքի հիմնադիր Եզնիկ Կողբացու "Եղծ աղանդոց" երկում, որը դեռ 1853 թ. Լը Վայան դը Ֆլորիվալի կողմից թարգմանվեց և հրատարակվեց ֆրանսերեն: Նրա կատարածը շարունակվեց և հանդես եկան նոր թարգմանություններ՝ Վիկտոր Լանգլուա (1869) և Լուի Մարիես (1959): Եզնիկի ստեղծագործության մեծագույն գիտակ դարձավ Լուի Մարիեսը, որը 1924 թ. ծավալուն հետազոտություն նվիրեց Եզնիկի անձին և երկին: Մարիեսի հրատարակած «Եղծ աղանդոցի» քննական բնագիրն ընկած է անգլերեն և իտալերեն թարգմանությունների հիմքում:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 17.05.2012

АРМЯНСКИЙ ФИЛОСОФ V ВЕКА ЕЗНИК КОХБАЦИ В ОЦЕНКЕ ФРАНЦУЗСКИХ АРМЕНОВЕДОВ

ДОЛУХАНЯН АЭЛИТА

Член–корреспондент Национальной Академии наук Республики Армения, заведующая кафедрой армянской литературы и методики её преподавания Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор филологических наук, профессор

Армянская литература V века известна как одна из древнейших среди всеобщей христианской литературы. После создания Маштоцем армянской письменности она получила очень быстрое развитие, разветвляясь на самые разные национальные жанры, присущие христианской литературе: историография, философия, догматические и богословские труды, духовные песни, агиография, жития святых и другие. В этом новом культурном движении огромное место заняла переводная литература, сделанная, в первую очередь, с греческого и с сирийского, но также и с других языков – персидского, древнееврейского и т.д. Часть этих переводов получила всемирное значение, поскольку оригиналы были бесследно утрачены в течение веков, а их армянские переводы в наши дни приобрели ценность оригиналов. Большое количество древнейших материалов сохранилось в труде «Опровержение ересей» основоположника армянской философской мысли Езника Кохбаци. Еще в 1853 г. это произведение было переведено и опубликовано на французском языке Ле Вайяном де Флориваль. Его инициатива была продолжена и появились другие переводы – Виктора Ланглуа (1869 г.) и Луи Мариеса (1959 г.). Крупнейшим знатоком произведения Езника стал Луи Мариес, который в 1924 г. издал объемное исследование, посвященное личности и произведению Езника. Опубликованный Мариесом критический текст «Опровержение ересей» лег в основу английского и итальянского переводов.

Дата представления статьи 17.05.2012

ԱՇՈՏ ԱՄԼԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնի ամբիոնի պետ, տեխնիկական գիտությունների թեկնածու

ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնի դասախոս

ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՏԴ 355/359:316.6:159.9

Սոցիալական, բարոյական, հոգևոր ճգնաժամը, որը բնորոշ է փոխակերպվող հասարակությանը, առավել ևս, անցումային փուլում գտնվող պետություններին, անխուսափելիորեն բերում է հասարակության անկայուն բարոյահոգեբանական վիճակի: Տարբեր չարիքների՝ հարբեցողության, թմրամոլության տարածումը, կրոնական–դավանաբանական հայացքների վերագնահատումը և ինքնակողմնորոշման թվյացյալ ճշմարտացիությունը, եսասիրության և շահամոլության միալար աճը բերում են բարոյական նորմերի և սոցիալական արժեքների խեղաթյուրմանը: Դրանից չի կարող զերծ մնալ զինվորական ծառայության ոլորտը, որը նշված բոլոր գործոնների օբյեկտիվ կրողներից է:

Հանգույցային բառեր և արտահայտություններ՝ բարոյահոգեբանական մթնոլորտ, զինվորական գործունեության օբյեկտ, սուիցիդ, կրոնական ուղղություն, աղանդ:

Ռազմական մանկավարժության և հոգեբանության՝ որպես զինվորական գործունեության հետ առնչվող տեսական և կիրառական հասարակական գիտությունների զարգացման արդի փուլի հիմնախնդիրներից մեկը, կարծում ենք, մանկավարժական և հոգեբանական ներգործության հիմնական օբյեկտների՝ զինծառայող–անհատի և զինվորական կոլեկտիվի կենսագործունեության վրա այնպիսի ազդեցությունն է, որը կոչված է նպաստելու այն իրավախախտումների և բացասական երևույթների կանխարգելմանը, որոնք առաջանում են պետության և հասարակության ներսում ճգնաժամային երևույթների, հին արժեքները փոխակերպվող հասարակության նոր արժեհամակարգով փոխարինելու գործընթացի խորացման կապակցությամբ:

Այդ տեսանկյունից՝ զինծառայության որպես զինվորական գործունեության ոլորտի կառավարման մարմինները, անձնակազմի բազմակողմանի ուսումնասիրությամբ զբաղվող պետական, գիտահետազոտական, հասարակական կազմակերպությունները պետք է մշակեն այնպիսի կոնցեպտուալ ծրագրեր, գիտական մեթոդներ, որոնց մեխանիզմները և գործնական կիրառությունը հնարավորություն ընձեռի բացահայտելու իրավախախտումների ծագման և բացասական երևույթների առաջացման նախապայմանները,

պատճառները, շարժառիթները, գտնելու գիտականորեն հիմնավորված ուղիներ՝ կանխարգելելու դրանց տարածումն ու, առավել ևս, արմատավորումը զինծառայողների տարբեր կատեգորիաների մոտ և զինվորական կոլեկտիվներում:

Գիտականորեն հիմնավորված մեթոդների ստեղծագործական կիրառումը զինծառայության ոլորտում թույլ է տալիս նաև կատարել կանխատեսում՝ ծառայության սուբյեկտների կողմից հնարավոր իրավախախտումների և բացասական երևույթների դրսևորման մասին:

Հիմնախնդրի հաղթահարման իրական և հուսալի ուղին առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումն ու պահպանումն է՝ զինվորական կոլեկտիվի համախմբման, անհատական և կոլեկտիվ դաստիարակության, կոլեկտիվում դրական տրամադրվածության ձևավորման և պահպանման միջոցով:

Պետության և հասարակության փոխակերպումը հղի է կոնֆլիկտային իրավիճակներով՝ գաղափարների, արարքների, սոցիալական շահերի բախումներով: Ժողովրդավարական հասարակությունը շահերի հավասարակշռման հասարակություն է, որում առաջացող կոնֆլիկտները պետք է կարգավորվեն կառուցողական, մարդասիրական, քաղաքակիրթ եղանակներով; Կոնֆլիկտային իրավիճակներից անմասն չէ զինվորական գործունեության ոլորտը որպես պետության և հասարակության մի օղակ, որտեղ ևս ընթանում են բարեփոխումներ:

Զինվորական գործունեությունը զինծառայության նպատակից բխող գործունեություն է, որը բաժանվում է երեք տեսակների. ամենօրյա, ուսումնամարտական և մարտական: Ռազմական հոգեբանության տեսանկյունից զինծառայության ներգրավված անձը, զինվորական կոլեկտիվը, զինվորական գործունեության խաղաղ և պատերազմական պայմանները, ինչպես նաև ռազմական պայմաններում հայտնված քաղաքացիական բնակչությունը հանդիսանում են հետազոտման օբյեկտներ [1, էջ 11]:

Սույն աշխատանքում մենք կանգ կառնենք հատկապես զինծառայողների և նրանց՝ զինվորական գործունեության նպատակն իրագործող, այդ գործունեության բովանդակությունն ու ձևերը համախմբող հանրույթի՝ զինվորական կոլեկտիվի որպես մանկավարժական և հոգեբանական լուրջ ներգործության ենթակա, զինվորական միավորի վրա:

Զինվորական կոլեկտիվը առանձնահատուկ սոցիալական խումբ է, որի գործունեությունը պայմանավորված է պետության, հասարակության շահերով և այդ շահերի պաշտպանությամբ: Զինվորական կոլեկտիվը անընդհատ համալրվում է, այսինքն՝ ստեղծվում են նոր սոցիալական կապեր՝ պայմանավորված պաշտոնական հարաբերություններով (ստորադասության առկայության պայմաններ) մի կողմից, և ոչ պաշտոնական (ստորադասության բացակայության պայմաններ) հարաբերություններով՝ մյուս կողմից: Այստեղ է, որ բախվում են իրավական դրույթներով սահմանված պաշտոնական փոխհարաբերությունները նույնատիպ դիրքորոշումներով, հայացքներով, վարքով, անհատական շահերով տարբերայնորեն ձևավորվող ոչ պաշտոնական փոխհարաբերությունների հետ, այսինքն՝ ստեղծում են միջանձնային փոխհարաբերություններ ներկոլեկտիվային կապերի հիման վրա [2, էջ 95–97,120–122]:

Զինվորական գործունեության հիմնական սուբյեկտը՝ զինվորը, իրականացնում է այդ գործունեությունը (պարտականությունների կատարում՝ իրավունքների և անձի արժանապատվության պահպանմամբ)՝ իրավական ակտերով (Հայաստանի Հանրապետությունում զինծառայությունը կանոնակարգող օրենսդրական և ենթաօրենսդ-

րական ակտեր) սահմանված կարգով: Զինծառայությունը որպես գործունեության առանձին ոլորտ մշտապես գտնվում է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Սակայն, եթե պարտադիր ժամկետային ծառայության գիտական հետազոտությունները երկար տարիների պատմություն ունեն, ապա նույնը հնարավոր չէ ասել պայմանագրային հիմունքներով զինծառայության կազմակերպման մասին, որն, ի դեպ, մեր պետության զինված ուժերի բարեփոխման ծրագրի հիմնախնդիրներից մեկն է [3, էջ 23, կետ 2.5ա]:

Պայմանագրային զինծառայությանը բնորոշ են իր յուրահատկությունները. օրինակ՝ սպան պետք է աշխատի առավել պատրաստված, մարտական տեխնիկային ավելի լավ տիրապետող ծառայողների հետ՝ դրսևորելով առավել խորը մանկավարժական հմտություններ: Տվյալ պայմաններում մարտական պատրաստության պարապմունքների վարման պատմություն–զրույց մեթոդը բավարար չէ. անհրաժեշտ են, մասնավորապես, համակարգչային տեխնիկայով հրամցվող դիդակտիկ նյութեր: Անհատական դաստիարակչական աշխատանքի համակարգը պահանջում է սպաներից անհատական–հոգեբանական առանձնահատկությունների խոր իմացություն: Պահանջվում է նաև իրավաբանական պատրաստվածության ավելի բարձր մակարդակ:

Պայմանագրային զինծառայությունը ի հայտ է բերում նաև լուրջ սոցիալական խնդիրներ, որոնց լուծումից կախված է նրանց դրական տրամադրվածությունը ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ: Սոցիալական խնդիրների շարքում առանցքային է բնակարանային ապահովման հարցը. առանձին բնակարանի (տան) կամ հանրակացարանում սենյակի հատկացումը ծառայության վայրից հեռու բնակվող զինծառայողին կապված է որոշակի դժվարությունների հետ: Առաջանում են նաև զինծառայողի նյութական խրախուսման կամ պայմանագիրը դադարեցնելու, ինչպես նաև թեկնածուի հա–մար փորձաշրջանի նշանակման խնդիրներ: Այստեղ է, որ անհրաժեշտ է մանկավարժության մեթոդաբանությանը և հոգեբանական հմտություններին տիրապետող սպա–դաստիարակ:

Պայմանագրային զինծառայողների հետ տարվող աշխատանքը վկայում է, որ նրանց մի մասի մոտ (համեմատաբար երիտասարդների) դեռևս ձևավորված չէ աշխարհայացքը, արժեքների համակարգը, առկա է չհիմնավորված ռիսկի և արկածախնդրության նկատմամբ հակումը, գայթակղությունների նկատմամբ անկայուն վերաբերմունքը: Դրա հետ մեկտեղ, թեկնածուների նախնական անորակ ուսումնասիրությունը, որպես կանոն, տալիս է դառը պտուղներ (դժգոհություն, զինվորական կոլեկտիվի տրոհում, դրական տրամադրվածության բացակայություն, կարգապահական զանցանքներ):

Պայմանագրային զինծառայողը հիմնականում գիտի իր պարտականությունները, պատասխանատվության և իրավունքների շրջանակները: Սակայն զինվորական ծառայության ընթացքում առաջանում են նաև պրոբլեմներ՝ կապված տեղի բնակիչներով (հատկապես սահմանամերձ բնակավայրերում) համալրման հետ: Քանակական և որակական տեսանկյունից՝ ընտրության հնարավորությունը նեղանում է: Լավ կրթությամբ և ինտելեկտով երիտասարդները հիմնականում ձգտում են դեպի մասնավոր–առևտրական կառույցներ: Ծառայելու ցանկություն հայտնող երիտասարդների մեծ մասը ցածր կենսա–մակարդակով, աշխատատեղերի զգալի պակաս ունեցող բնակավայրերի (հիմնականում գյուղական) բնակիչներ են: Դրա համար էլ պայմանագրային զինծառայողների ակտիվությունը գերազանցապես ուղղված

է իրենց իրավունքների և արտոնությունների վրա: Փոխարենը՝ պայմանագրային ծառայությունը նպաստում է սուիցիդի դեպքերի, զինծառայողների փոխհարաբերությունների, կանոնադրային կանոնների խախտումների նվազմանը, որոնց մակարդակը համեմատաբար բարձր է պարտադիր ժամկետային զինծառայողների մոտ:

Պայմանագրային զինծառայության ներդրումը պահանջում է կառավարման մարմիններից լուրջ ջանքեր գործադրել պայմանագրային ծառայողների՝ զինվորական կյանքին հարմարվելու, նրանց մտածելակերպի և իրավագիտակցության վերակառուցման, բարոյական բարձր որակների ձևավորման ուղղությամբ: Կախված համալրման սկզբունքներից՝ վարձկանության և հնազանդության, խաղաղ ժամանակ գերիշխում են սահմանադրական կամ քաղաքացիական պարտքի կատարման և զինծառայության, որպես գոյության ապահովման աղբյուրի կամ եկամուտ ստանալու միջոցի, ընկալումները: Ելնելով նշվածից՝ խաղաղ ժամանակ պայմանագրային զինծառայությունը հասարակության կողմից կարող է ընկալվել որպես պատվաբեր աշխատանք:

Պայմանագրային ծառայողների ճնշող մեծամասնությունը այն բնակավայրերի բնակիչներ են, որտեղ տեղակայված են զորամասեր և ստորաբաժանումներ: Այստեղից էլ ծագում է բնորոշ գործոնների մի շարք.

1. Տեղաբնակ պայմանագրային զինծառայողները քաջատեղյակ են տեղի ժողովրդագրական վիճակին, ավանդույթներին և սոցիալական խնդիրներին: Ազգակցական կապերի առկայությունը տեղանքը ճանաչելու հետ միասին ստեղծում են որակյալ ծառայության պոտենցիալ (լավ, բարձր ցուցանիշներով): Մյուս կողմից՝ պայմանագրային զինծառայողները որոշակիորեն կաշկանդվում են՝ զինվորական գործունեության ընթացքում ապօրինի գործողություններ կանխելիս՝ ելնելով ազգակցական և դրացիական հարաբերություններից.

2. Պայմանագրային զինծառայողների ամենօրյա գործունեության մեջ առանցքային տեղը զբաղեցնում են ընտանեկան–տնտեսական խնդիրները: Դրանք լրջանում են, հիմնականում, գյուղատնտեսական աշխատանքների ակտիվացման շրջանում.

3. Պայմանագրային զինծառայությունը, որպես կանոն, ինքնադրսևորման կայուն միջոց է՝ սոցիալական բնույթի առանձին խնդիրներ լուծելու հնարավորությամբ: Բայց երբ, օրինակ՝ պայմանագրային զինծառայողը կացարան է վարձում, խիստ պակասում են նրա դրամական եկամուտը: Այն քչերին է ձգում որպես կոչում:

4. Պայմանագրային զինծառայողների տարիքը հիմնականում 25–35 տարեկան է. նրանք մի կողմից՝ հասուն մարդիկ են, մյուս կողմից՝ չունեն կյանքի անհրաժեշտ փորձ: Տարբեր ուժային կառույցներում պարտադիր ժամկետային զինծառայություն անցած քաղաքացիները, համալրելով պայմանագրային կազմը, զինծառայության ոլորտ են ներմուծում արմատացած սովորություններ ու հայացքներ:

Պայմանագրային զինծառայության ընդունվելու և ծառայելու ընթացքում, բացի թվարկված գործոններից, պետք է հաշվի առնել նաև պայմանագրային ծառայության կամավորության և սթրեսային իրավիճակներում պայմանագրի պայմանները կատարելու անհրաժեշտության հարաբերակցությունը, իրենց արհեստավարժությունն ի ցույց դնելու ձգտումը (հնարավոր բացասական դրսևորումներով և հետևանքներով): Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ ոչ միշտ է, որ պայմանագրային զինծառայության համար դիմում են ամենանախընտրելի թեկնածուները: Շատերի մոտ զգացվում է անձնական հետաքրքրությունների և շահի առաջնությունը, զինծառայության և զինվորական կոլեկտիվի նկատմամբ որոշակի անտարբերությունը, մասնագիտական կարողությունների և հմտությունների գերագնահատումը, տեղի ավանդույթներին սերտորեն կապված լինելու և հետևելու բարդույթը, ծառայողական ակտիվությունը զուտ սեփական իրավունքների և արտոնությունների իրականացմանն ուղղորդելը, կրթական ոչ բարձր մակարդակը, անկայուն արժեհամակարգը և ցածր կենցաղային մշակույթը, մասնագիտական թույլ պատրաստվածությունը, կարգապահական զանցանքների և բացասական երևույթների (օրինակ՝ հարբեցողության) նկատմամբ հակումը: Այս հանգամանքները առաջին պլանի վրա են մղում անհատական դաստիարակչական աշխատանքը [4, էջ 4–13. 5, էջ 3–9]:

Ի տարբերություն պարտադիր ժամկետային զինծառայության՝ պայմանագրային զինծառայությունն ուղեկցվում է նաև որոշակի վտանգներով՝ պայմանավորված հանցավոր խմբերի և կրոնական աղանդների հնարավոր ներգործության հետևանքով աշխարհայացքի, տեսակետների ու հայացքների վերագնահատման հետ, վարքագծի, ի վերջո՝ զինծառայության պարտականությունների կատարման ցուցանիշների որակական անկմամբ: Սրա համար կան օբյեկտիվ պատճառներ՝ պայմանավորված վերը նկարագրված սոցիալական շարժառիթներով, ինչպես նաև պայմանագրային զինծառայության կազմակերպման գործընթացով (15–օրյա արձակուրդ՝ 15–օրյա ծառայությունից հետո): Նշված հոգեբանական ներգործությանը ենթակա են նաև սպայական և ենթասպայական կազմերի զինծառայողները, որոնք ունեն ավելի լայն հնարավորություն շփվելու արտաքին աշխարհի հետ: Եթե սավածին ավելացնենք նաև զանգվածային լրատվամիջոցներով մատուցվող տարաբնույթ մեկնաբանությունները զինծառայության անցուդարձի վերաբերյալ, պարզ կդառնա զինծառայության ոլորտ իրավախախտումների և բացասական երևույթների ներթափանցման հիմնական ուղին: Եթե պայմանագրային զինծառայությամբ նվազել են սուիցիդալ բովանդակություն պարունակող արարքները (դրանք ամեն դեպքում որակվում են որպես զինծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ), ապա աճում է հարբեցողության, թմրամոլության, աղանդավորության դրսևորումների հավանականությունը: Սա անշուշտ պետք է բացատրել նաև զինծառայող–անհատի սուբյեկտիվ հատկանիշներով՝ իրավիճակային ռեակցիաներով: Այստեղ ճիշտ է առանձնացնել հոռետեսական իրավիճակային և բացասական անհավասարակշռության ռեակցիաները: Դրանք կարող են արտահայտվել կոլեկտիվ կարծիքի մեջ կամ կոլեկտիվ կարծիքի ձևով:

Բացասական երևույթների բացահայտման իրատեսական ուղին մանկավարժական մեթոդների համալիր կիրառումն է: Մանկավարժական դիտարկումը զինծառայողի՝ սուբյեկտիվ հատկանիշներ պարունակող փաստերի պարբերաբար, նպատակասլաց հավաքումն է, որը թույլ կտա եզրակացնել ուսումնասիրվողի անհատական հոգեկան առանձնահատկությունների մասին: Մանկավարժական դիտարկմամբ հնարավոր է բացահայտել ռիսկային գործոնը, դրա՝ արտաքնապես երևացող հատկանիշների վերլուծության արդյունքում: Քիչ տվյալների դեպքում նպատակահարմար է անցնել արհեստական փորձարարության մեթոդին, ապա հոգեբանական թեստերի կիրառմանը [6, էջ 21–24. 7, էջ 5–10]:

Զինծառայության ոլորտի կառավարման մարմինների և ենթակառուցվածքների կարևոր խնդիրներից է հակաալկոհոլային քարոզչության անցկացումը: Անհրաժեշտ է զինծառայողների գի-

տակցությունից արմատախիլ անել ոգելից խմիչքների գործածման անվնասակարության պատրանքը, առավել ևս՝ ծառայության ժամանակ: Ակնհայտ է, թե ինչ վտանգավոր հետևանքներ կարող է թողնել ծառայողական պարտականությունները կատարելիս զինված զինծառայողների կողմից ոգելից խմիչք օգտագործելու անհատական և խմբակային երևույթը, մասնավորապես, տեղի բնակչության անվտանգության և բարոյահոգեբանական իրավիճակի վրա: Դա հատկապես վտանգավոր է մշտական վերահսկողությունից դուրս մնացած վերակարգերում և պահակակետերում ծառայության ժամանակ: Չեն բացառվում նաև վերակարգերի, առանձին զինծառայողների շփումները ոգելից խմիչքը չարաշահող անձանց հետ: Զինծառայողների ոչ ֆորմալ խմբային շփումները ակտիվորեն ձևավորում և խորացնում են սոցիալ–հոգեբանական հատկանիշները՝ կոլեկտիվ սոցիալական կապերի անհամատեղելիության ախտանիշը, որն էլ անխուսափելիորեն հանգեցնում է միջանձնային հարաբերությունների սրմանը:

Զինծառայության ոլորտում առավել վտանգավոր է թմրամոլության երևույթը: Անձի ազատությունների և իրավունքների՝ զինծառայությանը բնորոշ սահմանափակումը, սթրեսային իրավիճակները չեն բացառում, նույնիսկ բարձրացնում են թմրամիջոցների (թմրանյութեր, թմրանյութ պարունակող պատրաստուկներ, հոգեմետ դեղորայք) գործածման հավանականությունը: Անբավարար ֆիզիկական զարգացածության, հոգեկան անհավասարակշռության ախտանիշով տառապողների մոտ, ինչը սովորաբար անմիջապես նկատելի չէ, ներառյալ արտաքին տեղեկատվական դաշտի ներգործությունը, չի բացառվում ձգտումը առժամանակյա էյֆորիկ վիճակի: Թմրամիջոցի օգտագործման հետևանքը անկանխատեսելի և անկառավարելի վարքագիծն է, երբեմն նաև համասեռամոլության և ՄԻԱՎ տարածումը:

Զինվորական գործունեության ընթացքում հարբեցողության և թմրամոլության կանխարգելման միջոցառումները, որ համալիր բնույթ են կրում, ընդհանուր առմամբ, հայտնի են [8, էջ 477–509. 9, էջ 131–147]: Թե հարբեցողությունը, թե թմրամոլությունը առաջացնում են կախվածություն, դրանից բխող ծանր հետևանքներով: Սակայն դրանց տարածման դեմ կա կանխարգելման թերապևտիկ միջամտության հնարավորություն: Այլ է խնդիրը ծայրահեղական գաղափարների, հայացքների, դեստրուկտիվ համոզմունքների և պատկերացումների փոփոխության դեպքում:

Փոխակերպվող հասարակությունում անխուսափելի է կրոնական ուղղությունների ներթափանցումը, ձևավորումը և տարածումը, որը բերում է հոգևոր և բարոյական արժեքների վերափոխմանը, հասարակության անդամների աշխարհայացքի վերանայմանը:

Կրոնական ուղղություններն ու միավորումները մեկ բառով կոչվում են աղանդներ: Աղանդի հոմանիշը «հերձվածն» է, որ նշանակում է հերետիկոսություն, քայքայիչ ազդեցություն հիմնական դավանանքի նկատմամբ: Վաղ ժամանակներում աղանդ ասելով հասկացվում էին առհասարակ բոլոր ոչ քրիստոնեական կրոնները: Հետագայում նկատվեց այդ երկու մոտեցումների մերձեցում:

Հայ առաքելական եկեղեցու տեսաբաններն աղանդները բաժանում են երկու հիմնական դասի և ենթադասերի.

Ա. Քրիստոնեության հետ անմիջական առնչություն ունեցող աղանդներ.

1) քրիստոնեական աղանդներ, այդ թվում՝ «Հայ հոգևորականներ», «Ադվենտիստներ», այլ շարժումներ.

2) մերձքրիստոնեական ուղղություններ, որոնցից են մորմոնները, «հոգեգալստականները» և «Եհովայի վկաները».

3) նորագույն ուղղություններ, որոնցից են մունիստները (Միավորված եկեղեցի).

Բ. Քրիստոնեության հետ անմիջական առնչություն չունեցող աղանդներ, որոնց մի մասը ձգտում է ներկայանալ որպես ոչ կրոնական շարժում.

1) արևելյան կրոնական հոսանքները՝ իրենց տարատեսակներով. Հարե Կրիշնա (հինդուիզմի տարատեսակներից), բահայիստներ (իսլամական ծագում ունեցող աղանդ, որը դատապարտվեց իսլամի կողմից), վահաբիզմ (ռադիկալ իսլամական ուղղություն, որը սկսեց լայնորեն տարածվել Հյուսիսային Կովկասում ռուս–չեչենական պատերազմի ժամանակ).

2) օկկուլտ ուղղություններ, որոնք ակտիվացել են հատկապես վերջին ժամանակներում՝ աստղագուշակություն, սպիրիտիզմ կամ ոգեպաշտություն (ոգեկանչություն), սատանայապաշտություն (Համացանցը հեղեղված է այդ թեմաներով էլեկտրոնային գրքերով, գրքույկներով, գրքացանկով):

Ա դասին, մասամբ նաև Բ դասին բնորոշ հատկանիշներն են.

1) էկլեկտիզմը՝ այս կամ այն կրոնական ուղղության, դավանանքի ձևափոխված տարբերակի ստեղծումը, երբեմն ուղղակի կրկնօրինակումը.

2) սինկրետիզմը՝ տարբեր կրոնական համակարգերի միախառնումից նոր ուղղությունների ծնունդը.

3) պարզունակ մեկնաբանությունը. իրենք միակ ճշմարիտն են, ամեն ինչ հասկանում, ճանաչում են (ցայտուն օրինակը՝ «Եհովայի վկաներ» աղանդն է).

4) հանդգնությունը՝ իրենք բացառիկ են և ընտրյալ.

5) հեղինակությունը. բոլոր աղանդները հանդես են գալիս անհատների տեսքով, որոնք համարվում են տվյալ ուղղությունների հիմնադիրներ (օրինակ՝ Ջորջ Ռասսելը՝ «Եհովայի վկաներ» աղանդի, Սմիթը՝ մորմոնների և այլն), ինչպես նաև ներկայացնում են խոշոր կազմակերպչական կառույցներ՝ գրասենյակներ, դրանց մասնաճյուղեր (օրինակ՝ Եհովայի վկաների Բրուքլինյան գրասենյակը կամ Սանկտ–Պետերբուրգի մասնաճյուղը).

6) վախճանաբանական ախտանիշը՝ աշխարհի կործանման մասին ուսմունքի տարածումը, ներառյալ դրա ժամանակագրությունը.

7) նոր հայտնությունները՝ Աստվածաշունչը լրացնող և ինչ–որ տեղ շրջանցող թեզերի շրջանառումը, «Նոր աստվածաշնչի» ստեղծումը.

8) նախնական կամ Առաքելական եկեղեցու իրավահաջորդ ինքնահռչակվելը.

9) գործունեության տարածումը սկսում են առավելապես 18–25 տարեկան անձանց շրջապատում [2, էջ 197–203. 10, էջ 17–24, 53–90, 127–228, 240–258, 261–270]:

Զինվորական կոլեկտիվներում աղանդավորությանը հակված ծառայողներին կարելի է ի հայտ բերել հատկապես զինծառայության ոլորտում կանոնադրական կարգից դժգոհողների շրջանում: Բացի այս, որոշ աղանդների ներկայացուցիչներ խուսափում են զենքով ծառայություն տանելուց կամ ընդհակառակն՝ ընդգծված, երբեմն հիվանդագին հակում ունեն հրազենի, պայթուցիկ նյութերի նկատմամբ: Նրանցից կարելի է լսել աշխարհի մոտալուտ կործանման, ահեղ դատաստանի (արմագեդոնի), շուտափույթ ապաշխարելու մասին ակնարկներ: Որոշ աղանդների ներկայացուցիչներ ձգտում են ընգրկվել միայն տնտեսական աշխատանքներում, սպասարկող վերակարգերում, մասնակցել անզեն միջոցառումների:

Աղանդավորության տարածումը զինվորական կոլեկտիվներում, առանձին դեպքերում նույնիսկ սպաների և ենթասպաների շրջանում (հիմնակա-

նում, այն պատճառով, որ նրանք ավելի շատ են շփվում արտաքին աշխարհի հետ) աստիճանաբար կարող է բերել հաստատված, ճանաչված արժեքների, հատկապես հայրենասիրության վերագնահատման, արժեզրկման, զինծառայության համար անհրաժեշտ՝ անձնակազմի հոգեկան, բարոյակամային հատկանիշների թուլացման, անկման, ամենօրյա ծառայողական պարտականություններում թերացման, անգամ զինծառայությունից խուսափելուն: Հնարավոր են անդամախեղության և նույնիսկ ինքնասպանության փորձեր: Այս բոլորը հանգեցնելու է անկայուն, անառողջ բարոյահոգեբանական վիճակի, որն էլ հանդիսանալու է զինծառայության խնդիրների լուծման մոտիվացիայի խզման պատճառ: Դժվար չէ պատկերացնել, թե ինչ հետևանքների կարող է հանգեցնել մարտական առաջադրանք կատարելուց խուսափելը կամ հրաժարվելը, մարտական իրադրությունում արյան մեծ կորստի դեպքում արյան ներարկումից կամ արյունաքամ եղող ծառայակցին արյուն տալուց հրաժարվելը:

Աղանդավորության բացասական հետևանքների չեզոքացման գործում առանցքային դեր պետք է ունենան վաղ կանխարգելիչ միջոցառումները:

Դրանք սկսվում են զինվորական կոլեկտիվ զինծառայողների մուտքի պահից: Այդ միջոցառումները ներառում են փաստաթղթերի մանրակրկիտ ուսումնասիրությունը, պարտադիր անհատական զրույցը: Անհատական զրույցի ժամանակ պետք է մանրակրկիտ ուսումնասիրել կրոնի նկատմամբ վերաբերմունքը. պարզել մկրտված է անձը, թե ոչ, եթե ոչ, ապա ինչ պատճառներով (ընտանիքի սոցիալական վիճակ, գաղափարական համոզմունք, որտեղ է մկրտվել և ինչ արարողակարգով), մասնակցությունը հոգևոր ժողովներին, հավաքներին կամ ներկայությունը նման հավաքատեղերում որևէ հարազատի, ազգականի, ընկերոջ, հարևանի հորդորներով և ուղեկցությամբ, կարդացած հոգևոր և եկեղեցական գրականությունը: 18–23 տարեկան երիտասարդին աղանդավորության մեջ հիմնականում կարող է ներքաշել մոտ հարազատը, կամ մեկ ուրիշ անձ, որին նա վստահում է բոլորից շատ, որը որոշակի հեղինակություն է վայելում նրա մոտ: Վաղ կանխարգելիչ միջոցառումներ կազմակերպելիս պետք է հաշվի առնել տարածքային գործոնը՝ նպատակաուղղելով մանկավարժության և հոգեբանության մեթոդաբանական զինանոցը աղանդավորության համեմատաբար լայն տարածում գտած բնակավայրերից պարտադիր ժամկետային զինծառայության զորակոչված կամ պայմանագրային զինծառայություն անցնող անձանց վրա:

Մշտական կամ ամենօրյա կանխարգելիչ միջոցառումները ներառում են զինծառայողների մասնագիտական գործունեության, կենցաղի, հանգստի և ժամանցի կազմակերպման աշխատանքները: Այստեղ մեծ դեր ունի աղանդավորության դեմ ագիտացիոն և քարոզչական աշխատանքը: Կարելի է կազմակերպել Հայ առաքելական եկեղեցու հոգևոր առաջնորդների և հոգևորականների մասնակցությամբ աղանդավորության դեմ հեռուստահաղորդումների դիտում, հրավիրել տեղի թեմական եկեղեցու հոգևոր սպասավորներին անձնակազմի հետ հանդիպման: Վերջինը չպետք է սահմանափակվի Հայ առաքելական եկեղեցու հոգևոր արժեքներին նվիրված զրույցներով և անձնակազմին Նոր Կտակարան նվիրաբերելու արարողություններով (որոշ հրամանատարներ համարում են ստորաբաժանումում աղանդավորության դեմ պայքարի բավարար պայման անձնակազմին Նոր Կտակարանով ապահովելը, հաճախ յուրաքանչյուր զինծառայող իր ծառայության ավարտին ունենում է Նոր Կտակարանի 5–6

օրինակ, որը սակայն ազատ ժամանակ չի ընթերցում, անհասկանալի հարցերի մասին չի դիմում ստորաբաժանման հրամանատարին), այլ ուղեկցվի աղանդավորության և դրա տարածման դեմ գիտական տեղեկությունների, վիճակագրական տվյալների հրապարակմամբ:

Աղանդավորության կանխարգելման աշխատանքը պահանջում է մանկավարժական և հոգեբանական ուսումնասիրությունների արդյունքում բացահայտված աղանդավոր կամ աղանդավորական քարոզի ենթարկված զինծառայողների վերադաստիարակում՝ հայրենասիրական, բարոյագիտական սկզբունքների քարոզչությամբ, իրավագիտակցության ձևավորման, հայ ժողովրդի պատմության, անցյալի և ներկայի փառավոր էջերի, քրիստոնեական հավատքի համար մղված հերոսական պայքարի օրինակներով:

Զինծառայության ոլորտում իրավախախտումների և բացասական երևույթների կանխարգելման փորձված և հուսալի ուղին առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծումն ու պահպանումն է՝ զինվորական կոլեկտիվների համախմբման, օրինականության և սոցիալական արդարության հաստատման, կոլեկտիվներում դրական տրամադրվածության ձևավորման և պահպանման, ինչպես նաև անձնակազմի կոլեկտիվ դաստիարակության միջոցով:

Համախմբվածությունը՝ որպես զինվորական կոլեկտիվի որակական հատկանիշ, բնութագրվում է հայացքների համատեղելիությամբ, գործողությունների համաձայնեցվածությամբ, ինչպես նաև դրական տրամադրվածությամբ: Սակայն կենսագործունեության նման ներդաշնակություն ստեղծվում է ոչ միանգամից և ինքնաբերաբար, քանի որ միշտ առկա են տարանջատման մեծաթիվ գործոններ:

Ելնելով վերոգրյալից՝ հնարավոր է կանխատեսել զինվորական կոլեկտիվի կայացման և զարգացման բացասական հետևյալ դրսևորումները.

– ներկոլեկտիվային հակասությունների ուժեղացում, որը կարող է արտահայտվել միջանձնային, միջխմբային հակասությունների և անգամ հակամարտությունների թվի աճով.

– զինվորական կոլեկտիվում շերտավորման առաջացում՝ համախմբվածության և միասնության աստիճանի նվազումով.

– սոցիալական և հոգեբանական լարվածության ուժեղացում.

– զինվորական կոլեկտիվում կենսագործունեության տարբեր ոլորտներում իրավիճակի սրում, այդ թվում իրավակարգի, զինվորական կարգապահության և այլն:

Հաշվի առնելով հասարակության բարոյահոգեբանական իրական վիճակը, բացասական գործոնների ազդեցությունը, բոլոր աստիճանների հրամանատարները (պետերը) իրենց ենթակա ստորաբաժանումների շրջանակներում պետք է ստեղծեն պայմաններ՝ զինծառայողների կողմից իրենց պարտականությունների օպտիմալ և արդյունավետ կատարման համար: Հայտնի է, որ հասնել այդ նպատակին առանց լավ համաձայնեցված և համախմբված զինվորական կոլեկտիվի՝ գործնականում անհնար է:

Իդեալական առումով՝ զինվորական կոլեկտիվը զինծառայողների՝ կազմակերպվածության բարձր մակարդակ ունեցող հանրույթն է, որը բնութագրվում է կառավարման, կամքի, կարգապահության և փոխադարձ պատասխանատվության, արմատական շահերի, հայացքների, համոզվածության միասնությամբ, այդ հանրույթի անդամների ընկերական փոխօգնությամբ՝ ուղղված ազգային անվտանգության ապահովմանը:

Հասնել զինծառայողների մոտ հայացքների միասնության հնարավոր է՝

– կոլեկտիվի ընդհանուր խնդիրների լավագույնս լուծման նպատակով դրական ուղղվածությամբ անհատական հայացքների (կարծիքների) միացումով.

– կոլեկտիվի պաշտպանությամբ նրա միասնությունը քայքայող քարոզչությունից՝ մերկացնելով դրա բացասական իմաստը և պայքարելով դրա դեմ օրինական մեթոդներով.

– զինվորական գործունեության առանցքային հարցերում ընդհանուր կարծիքից տարբերվող կարծիք ունեցողների հանդեպ պատշաճ վերաբերմունքի ապահովմամբ:

Կարևոր է ոչ միայն պաշտոնական փոխհարաբերությունների՝ որպես զինվորական ծառայության ոլորտի կենսագործունեության նորմի, այլև կոլեկտիվ կարծիքի ձևավորումը: Այս պրոցեսը կարող է ընթանալ երեք փուլերով.

1–ին փուլ. զինծառայողների միկրոկոլեկտիվներում ընթանում է նոր ստացված տեղեկատվության ոչ պաշտոնական, նախնական քննարկում: Տեղեկատվության տարածումը մանր խմբերի շրջանակներից դուրս՝ անխուսափելի է: Ոչ պաշտոնական քննարկմանը սկսում են մասնակից դառնալ ավելի մեծ թվով զինծառայողներ՝ նույն զինվորական կոլեկտիվի անդամներ: Ձևավորվում է ինչ–որ նոր իրադարձության սպասողական հոգեբանական վիճակ, տեղի է ունենում նախնական կողմնորոշում:

2–րդ փուլ. կատարվում է ավելի ընդարձակ, բայց նույնպես ոչ պաշտոնական քննարկում նոր լուրերի շուրջ, որոնք հաստատում կան հերքում են սկզբնական տեղեկույթի հավաստիությունը: Ընթանում է ստացված տեղեկատվության ինչպես անհատական, այնպես էլ խմբակային համադրում (ճիշտ է, թե ճիշտ չէ, իմաստ ունի, թե չունի, դրությունը կփոխի, թե չի ազդի կոլեկտիվի կյանքի վրա):

3–րդ փուլ. որպես կանոն, բնութագրվում է զինվորական կոլեկտիվի պաշտոնական և ոչ պաշտոնական կարծիքի արտահայտությամբ (ձևավորմամբ): Այդ գործընթացին ճիշտ զարգացում հաղորդելու համար զինծառայության ոլորտի կառավարման մարմինները պետք է ձգտեն քաջատեղյակ լինել միկրոկոլեկտիվներում գոյություն ունեցող նախնական կարծիքներին, ինչպես նաև գերակա տրամադրություններից:

Ամփոփելով զինծառայության ոլորտում առկա հիշյալ հիմնահարցերի վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ փոխակերպվող հասարակությունում տիրող իրավիճակում զինվորական ծառայության ոլորտի բնականոն գործունեության համար անհրաժեշտ է հիմնարար արժեքների նկատմամբ հայացքների, գաղափարների այնպիսի միասնություն, որը հիմնված է ոչ թե անհատական կամ կոլեկտիվ մոտեցումների պարզ մաթեմատիկական հանրագումարի (որի գումարելիները առանձին գաղափարական հոսանքներն են կամ ուղղությունները որքան էլ առաջին հայացքից թվան միակն ու ճշմարիտը), այլ ազգային–պետական, այսինքն՝ սահմանադրաիրավական և ժողովրդավարական ճանապարհով ընդունված պետական ռազմավարական այլ նպատակադրումների վրա:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 11.06.2012թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ա. Յալանուզյան,** Վերահսկեք ինքներդ ձեզ / Հայ զինվոր, №10, 15-21.03.2012թ. 16 էջ:
2. Գաղափարադաստիարակչական պատրաստության և հասարակական-պետական պատրաստության ձեռնարկ / ՀՀ ՊՆ. Երևան, 2010թ., 232 էջ:
3. Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին. ՆՀ–308–Ն. Երևան, 25.12.2007թ., 27 էջ:
4. Вестник Границы России / Вып. 6, ноябрь–декабрь 2004. –128 с.
5. Вестник Границы России / Вып. 2, март–апрель 2007. – 80 с.
6. Методические рекомендации по проведению психологической работы в органах и войсках ФПС России. ФПС РФ. М., Граница, 2000. – 40 с.
7. Группа риска / Информационно–методическое пособие для командиров подразделений по профилактической работе с подчиненными. ФПС РФ. М., Г., 1994. – 55 с.
8. Морально–психологическое обеспечение служебно–боевой деятельности ФПС РФ. М., Граница,1999. –584 с.
9. Զինվորական կարգապահության ղեկավարման համակարգը. հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղիները // Մեթոդական ձեռնարկ. ՀՀ ՊՆ. Երևան, 2002թ. 150 էջ:
10. **Ս. Մայիլյան.** Ժամանակակից աղանդները Հայաստանում // Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոն. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2000թ. 320 էջ:

ОБ ОТДЕЛЬНЫХ ПРОБЛЕМАХ ПРОХОЖДЕНИЯ ВОЕННОЙ СЛУЖБЫ В УСЛОВИЯХ ТРАНСФОРМИРУЮЩЕГОСЯ ОБЩЕСТВА

АШОТ АСЛАНЯН

Начальник кафедры научно–учебного центра службы национальной безопасности РА, кандидат технических наук

ГАГИК ХАЧАТРЯН

Преподаватель научно–учебного центра службы национальной безопасности РА

Социальный, нравственный и духовный кризис, присущий трансформируемому обществу, тем более в переходный период государственного строительства, непременно приводит к неустойчивости морально–психологического состояния общества. Социальные недуги современности – алкоголизм, наркомания, переоценка традиционных религий и догматов вероисповедования, а также кажущаяся правота в самоориентации, монотонный рост эгоизма и корыстолюбия приводят к деформированию норм нравственности и социальных ценностей в обществе. Военная сфера как объективный носитель вышеуказанных факторов не может оставаться непричастной к этим явлениям.

Дата представления статьи 11.06.2012г.

ON SEPARATE PROBLEMS OF MILITARY SERVICE IN THE TRANSFORMING SOCIETY

ASHOT ASLANYAN

Chef of the Chair of Scientific-Educational Centre of SNS of RA,
Candidate of Technical Sciences

GAGIK KHACHATRYAN

Lecturer of Scientific-Educational Centre of SNS of RA

Social, moral and devotional crisis, which is characteristic for transforming society, especially in the transforming period of governmental construction, definitely leads to instability of moral-psychological status of the society. Modern social problems – alcoholism, drug addiction, revaluation of traditional religious and devotion dogmas, as well as seeming rightness in self-orientation, monotonic increase of egoism and self-interest leads to the deformation of moral norms and social values in society. Military sphere as the carrier of objective factors stated above, can't be not involved in those phenomenon.

Article submission date 11.06.2012

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Գավառի պետական համալսարանի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր

ՓՈԽԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՏԴ 342:30

Հոդվածը նվիրված է փոխակերպվող հասարակության և անցումային պետաիրավական համակարգի առանձնահատկություններին: Նշվում է, որ հասարակության պատմական զարգացման ընթացքն օրինաչափորեն և պարբերաբար հանգեցնում է սոցիալական համակարգի փոխակերպումների: Փոխակերպման ընթացքում և արդյունքում անկասելի փոփոխություններ են կրում ոչ միայն սոցիալական համակարգի բաղադրիչ տարրերը և դրանց փոխադարձ կապերը, այլև հասարակության պետական կազմակերպման ձևն ու սոցիալական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգերը: Փոխվում են պետության կառավարման ձևը, քաղաքական ռեժիմը, իրավական համակարգի կառուցվածքն ու բովանդակությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ փոխակերպվող հասարակություն, անցումային պետություն, իրավական համակարգ, նորմատիվ կարգավորում, արժեքային կողմնորոշումներ, սոցիալական զարգացում և առաջընթաց:

Հասարակությունը բարդ կառուցվածք ունեցող համակարգ է, որը պատմական էվոլյուցիայի ընթացքում ձեռք է բերում նոր որակներ, ենթարկվում էական փոփոխությունների: Զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների թելադրանքով անկասելի փոփոխություններ են կրում սոցիալական համակարգի բոլոր բաղադրիչ տարրերը, տեղի է ունենում փոխակերպում կամ տրանսֆորմացիա [1], որը սահմանվում է որպես ներքին և արտաքին գործոնների ազդեցությամբ հասարակական համակարգի վերափոխում որոշակի չափով և խորությամբ [2]:

Դևիդ Ալբերտսը «Փոխակերպումը տեղեկատվական դարաշրջանում» գրքում փոխակերպումը համարում է «վերածննդի, միջավայրին հարմարվելու գործընթաց» [3, էջ 7]: Հասարակության վերափոխումն օբյեկտիվորեն ընթանում է որոշակի սոցիալ–պատմական պայմաններում, իր վրա կրում է վերջիններիս ազդեցությունը և, միաժամանակ, հանդես գալիս որպես սոցիալական առաջընթացի աղբյուր և շարժառիթ: Փոխակերպումը կոտրում է կարծրատիպերը, ավանդական աշխարհընկալումը և սերմանում նոր արժեքներ, ձևավորում նոր աշխարհայացք, վարքագծի նորմեր և ուղենիշներ: Սոցիալական արժեքային կողմնորոշումները կորցնում են իրենց երբեմնի կայունությունն ու անբեկանելի բնույթը, փոփոխվում են, դառնում առավել «ճկուն», «հարմարվողական» կամ դադարում են գոյություն ունենալ՝ չհամապատասխանելով նոր արժենորմատիվային համակարգին: Ռուս պատմաբան Տ. Ն. Գրանովսկին նշել է, որ իր ուշադրությունը միշտ գրավել են հասարակության անցումային վիճակները՝ իրենց «ողբերգական գեղեցկությամբ»: Միաժամանակ, ըստ նրա, հենց հասարակության պատմության անցումային շրջաններում է, որ կարելի է «լսել հեռացողի վերջին խոսքը» և որսալ «նորածին համակարգի սկզբնա-

կան միտքը»: Միայն այս պատմական պահերին է հնարավորություն ընձեռվում զգալու պատմության խորհրդավոր աճը [4, էջ 315]: XX դարը լեցուն էր տարաբնույթ փոխակերպումներով: Փլուզվեց խորհրդային սոցիալիստական հասարակարգը, փոխվեց աշխարհակարգը, ինտեգրացիայի միջոցով անցում կատարվեց դեպի գլոբալիզացիա: Փոխակերպման գործընթացներն ուղեկցվեցին տնտեսական, սոցիալական, քաղաքական, իրավական, գաղափարական ճգնաժամերով, առաջացավ կաթվածահար վիճակ բոլոր ոլորտներում: Աստիճանաբար ձևավորվեցին նոր ինստիտուցիոնալ և արժենորմատիվային համակարգեր, անցումային հասարակությունը մուտք գործեց կայունության շրջան, որին պետք է հաջորդի զարգացման փուլը: Այս շղթայում կարևորն այն է, որ փոխակերպումն ընթանա ռացիոնալի տիրույթում և չվերածվի իռացիոնալ գործընթացի, որը զերծ է կառուցողական անհրաժեշտ ներուժից: Փոխակերպվող հասարակության առանձնահատկություններից է արմատացած սոցիալական ինստիտուտների և նոր պարտադրվող արժեքների բախումը, ինչի արդյունքում տեղի է ունենում անցում դեպի նոր որակի հասարակական հարաբերություններ [5, էջ 160]:

Հասարակության փոխակերպման հաջորդ առանձնահատկությունը նրա համակարգային բնույթն է: Այն ներառում է սոցիալական փոփոխությունների ողջ համակցությունն ու շարժընթացը, հասարակությանը պարտադրում վերափոխել պետական կազմակերպման և հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ինստիտուտներն ու կառուցակարգերը, հանգեցնում պատմական նոր տիպի սոցիալական կենսագոյի ձևավորմանը: Մարքսիստական մոտեցմամբ հասարակության, պետության և իրավունքի պատմական տիպը որոշվում է հասարակական–տնտեսական ֆորմացիայով կամ կացութաձևով [6, էջ 442]: Անգլիացի պատմաբան Առնոլդ Թոյնբին հասարակության, պետության և իրավունքի տիպաբանական դասակարգումը կատարել է՝ հիմք ընդունելով քաղաքակրթության չափանիշը [7, էջ 39]: Կառլ Պոպերի տեսության համաձայն՝ տարբերակվում են տոտալիտար (ամբողջատիրական, փակ) և բաց հասարակություն ու պետություն [8], իսկ Էլվին Թոֆֆլերը տարանջատել է երեք ալիքի հասարակություն՝ առաջին ալիքի հասարակություն համարելով ագրարային կամ մինչարդյունաբերական հասարակությունը, երկրորդ ալիքի հասարակություն՝ արդյունաբերական հասարակությունը, իսկ զարգացման երրորդ ալիքը, ըստ Թոֆֆլերի հանգեցնում է «հետարդյունաբերական» կամ «վերարդյունաբերական» տիպի ի հայտ գալուն [9, էջ 784]: Յուրաքանչյուր ալիքի հասարակությանը համապատասխանում է պետաիրավական համակարգի որոշակի տիպ: Մասնագիտական գրականության մեջ հանդիպում են արդի հասարակության բազմաթիվ այլ բնորոշումներ՝ «բաց, բազմակարծիք հասարակություն», «համընդհանուր զարգացում պահանջող և անհատական հնարավորություններն իրացնող հասարակություն», «քաղաքացիական հասարակություն» [10]: Դանիել Բելլը, Ֆրից Մախլուպը և այլոք ժամանակակից հասարակությունը բնորոշել են որպես «տեղեկատվական հասարակություն» [11]: Այն անվանում են նաև գիտելիքահեն, գիտատար, նորարարական (ինովացիոն) հասարակություն: Այսօր տարածված են Է. Հիդդենսի գլոբալ հասարակության [12], Մանուել Կաստելսի «ցանցային հասարակության» տեսությունները [13] և այլ հայեցակարգեր: Բացի պոզիտիվ բնորոշումներից, հանդիպում են նաև բացասական կամ չեզոք դիրքորոշում բովանդակող սահմանումներ, Օրինակ, Ու. Բեկը արդի հասարակությունը բնորոշել է որպես «ռիսկի հասարակություն» [14], Յու. Հաբերմասը նշում է, որ հասարակությունը մուտք է գործել «նոր անորոշության դարաշրջան», Է. Հիդդենսը արդի իրականությունն անվանում է «հոսուն, սորացող աշխարհ» [15, էջ 25], Ի. Վալլերշտայնը՝ «ծանոթ աշխարհի ավարտ» [16, էջ 305–322], Զ. Բաումանը՝ «ընթացիկ արդիականության աշխարհ» [17, էջ 14] և այսպես շարունակ: Կարծում ենք, որ փոխակերպումը չպետք է պիտակավորել որպես «նեգատիվ» կամ «պոզիտիվ», քանի որ այն ուղեկցվում է և՛ բացասական և՛ դրական երևույթներով: Առաջանում է սոցիալական լարվածություն, տեղի է ունենում բնակչության շարժ, ակտիվանում են միգրացիոն գործընթացները, մեծանում է հասարակության տագնապայնության աստիճանը՝ կապված աշխատատեղերի կրճատման, գործազրկության, աղքատության, վաղվա օրվա նկատմամբ անվստահության, այլ սոցիալ–տնտեսական և բարոյա–հոգեբանական երևույթների հետ: Միաժամանակ, փոխակերպման շնորհիվ անցում է կատարվում դեպի հասարակության զարգացման նոր շրջափուլ, ձևավորվում է պետաիրավական նոր համակարգ: Ա. Ա. Բոգդանովան առաջադրել է համակարգերի շարժընթացի (դինամիկայի) տեսությունը, Ն. Դ. Կոնդրատևը և Յ. Շումպետերը՝ պարբերաշրջանների (շրջափուլերի) տեսությունը [18]: Նրանք ուսումնասիրել են փոխակերպման պարբերական օրինաչափությունները: Պատմական առումով փոխակերպումն ուսումնասիրել է Պիտերիմ Սորոկինը՝ կարևորելով հասարակության սոցիալական և մշակութային շարժընթացը: Առնոլդ Թոյնբին փոխակերպումը բացատրել է քաղաքակրթությունների հերթագայությամբ, Սամուել Հանտինգտոնը նույնպես կարևորել է նոր քաղաքակրթության ծնունդը պայմանավորող փոխակերպումը, Ֆերնան Բրոդելը առաջադրել է ճգնաժամերի, գեների ու պարբերաշրջանների (շրջափուլերի) տեսությունը [19]: Հասարակության փոխակերպումներում արտահայտվում են սոցիոգենետիկայի օրինաչափությունները՝ սոցիալական համակարգի շարժընթացում ժառանգականությունը, փոփոխականությունը և ընտրելու ազատությունը: Ընդհանրապես համակարգը գոյություն ունի այնքան, որքան նրա ժառանգական միջուկը՝ գենոտիպը: Փոխակերպումը, վերափոխելով հասարակության կառուցվածքը, պահպանում է նրա գենոտիպը, թարմացնում ու հարստացնում այն: Իսկ սոցիալական համակարգերի հերթափոխի դեպքում գենոտիպը, նրա որակական ամբողջականությունը խախտվում է և նրա տարրերը օգտագործվում են նոր համակարգի գենոտիպը ձևավորելիս, ինչպես եղավ հետխորհրդային ժամանակաշրջանում: Փոփոխականության օրինաչափությունն արտահայտվում է նրանում, որ հասարակական համակարգի որոշ տարրեր կերպարանափոխվում են, հարմարվում արտաքին միջավայրի փոփոխություններին, նոր ազդակներին կամ ընդհանրապես փոխարինվում նորերով և արդյունքում՝ սկսվում է համակարգի կենսագործունեության նոր շրջափուլը, որակական նոր վիճակը: Ընտրության օրինաչափությունը նշանակում է, որ մարդիկ և հասարակական կազմավորումներն ունեն ընտրության իրավունք և իրականացնում են սոցիալական էական փոփոխություններ՝ ելնելով իրենց նպատակներից, շահերից, պահանջմունքներից, արժեքային կողմնորոշումներից, գիտակցական մակարդակից, սպասումներից: Սակայն, միշտ չէ, որ փոխակերպման գործընթացի արդյունքն ու սոցիալական ակնկալիքները համընկնում են: Իսկ չափելի՞ են արդյոք փոխակերպման ծավալն ու խորքը, մարդակենտրոն բնույթը, օգտակարությունն ու վնասակարությունը…

Կամ փոխակերպումը միայն որա-

կական բնութագիր ունեցող, թե՛ նաև քանակական չափումների ենթակա երևույթ է: Ուսումնասիրությունները վկայում են, որ կատարվել են փոխակերպումները չափման երթարկելու փորձեր: Օրինակ, Պիտերիմ Սորոկինը օգտագործել է փորձագիտական գնահատման մեթոդը հասարակական կյանքի այն ոլորտներում, որոնց փոխակերպումները հնարավոր է քանակական չափանիշներով արտահայտել: Նա հիմք է ընդունել սոցիալ–մշակութային ոլորտը և անդրադարձել այն էական փոփոխություններին, որոնք կատարվել են պատմական դարաշրջանների հերթագայության ընթացքում (օրինակ, տեխնիկական գյուտերի և գիտական հայտնագործությունների թիվը, աշխարհիկ և կրոնական ստեղծագործությունների՝ գլուխգործոցների փոխհարաբերությունը, էմպիրիզմի և ռացիոնալիզմի հարաբերակցությունը, բացարձակ և հարաբերական (ռելյատիվիստական) արժեքային համակարգերի հարաբերակցությունը): Յու. Յակովեցն առաջարկել է փոխակերպման ինտենսիվության գործակցի հաշվարկ տնտեսության մեջ, կապված տնտեսական համակարգի տարբեր կառուցվածքային մասերում կատարվող փոփոխությունների հաշվարկի հետ [20]: Աշխարհում ընդունված կանոր տնտեսական չափանիշ են համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ–ի) հաշվարկը և դրա շարժընթացը՝ աճը կամ նվազումը, կենսապահովման նվազագույնի հաշվարկը՝ ըստ շնչի կամ ընտանիքի: Փոխակերպվող հասարակության չափումների մի ոլորտը կապված է ժողովրդագրական (դեմոգրաֆիական) շարժի հետ, որը բնութագրում է հասարակության բնական և մեխանիկական աճը կամ նվազումը, արտագաղթը կամ ներգաղթը և այլ չափանիշներ: Այսպիսով, մեկ համընդհանուր չափանիշ գոյություն չունի, փոխարենը կան համալիր ցուցանիշներ: Այսօր կարևոր խնդիր է կանխատեսել հնարավոր փոխակերպումները ինչպես առանձին պետության, տարածաշրջանի, այնպես էլ գլոբալ առումով: Թեև նման հաշվարկներն ու կանխատեսումները խիստ հարաբերական են, սակայն ողջ պայմանականությամբ հանդերձ դրանք թույլ կտան բացահայտել փոխակերպման հնարավոր միտումները և ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ փոխակերպման գործընթացը հնարավորինս անցավագին դարձնելու համար: Ա. Ն. Դանիլովն իր «Անցումային հասարակություն. համակարգային փոխակերպման հիմնախնդիրները» գրքում [21] համակարգային առումով հասարակության փոփոխությունը ներկայացնում է որպես փոխակերպման գործընթաց՝ նպատակաուղղված երևույթի կամ համակարգի նոր որակին և բաղկացած հետևյալ փուլերից.

– հասարակության առկա վիճակի գնահատում, համակարգային բնույթ կրող ճգնաժամի խորության և մասշտաբի ըմբռնում,

– սոցիալական ախտորոշում, այսինքն՝ առկա իրավիճակի ուսումնասիրում և անաչառ, օբյեկտիվ բնութագրում, դրա արմատների բացահայտում, ճգնաժամային իրավիճակից դուրս գալու հնարավորությունների և ուղիների նախանշում,

– իր դարն ապրած համակարգի և հասարակության զարգացման պահանջների ու միտումների ակնհայտ անհամապատասխանության գիտակցում և հասարակության նորովի ինքնորոշում, սոցիալական համակարգի փոխակերպման և նոր որակով հետագա զարգացման ուղիների որոնում,

– հասարակության պետաիրավական համակարգի բարեփոխում:

Փոխակերպվող հասարակությանը բնորոշ են անցումային տնտեսությունը, քաղաքական անկայունությունը, սոցիալական լարվածությունը, օրենքների «պատերազմը», անցումային ժամանակաշրջանի մշակույթը, մտածողությունը, արժեքային կողմնորոշումները, մի խոսքով՝ անցումային իրականությունը բոլոր ոլորտներում:

Մի կողմից, փոխակերպվող հասարակությունում կատարվում են արմատական տեղաշարժեր, մյուս կողմից՝ հասարակությունը ձգտում է կայունության և հավասարակշռության, գործում են սոցիալական հարմարման կառուցակարգերը, կանոնակարգումը տեղի է ունենում ինչպես «վերևից», այնպես էլ «ներքևից»: «Վերևից» հրամայական կանոնակարգման գործառույթն իրականացնում են պետության օրենքները՝ որպես համապարտադիր վարքագծի ընդհանուր կանոններ՝ իրավանորմեր բովանդակող ակտեր և «ներքևից»՝ հասարակության ինքնակազմակերպման ձևով և կառուցակարգերով: Աստիճանաբար կայանում են հասարակության սոցիալ–տնտեսական, քաղաքական, իրավական համակարգերը, ստեղծվում են հասարակության կենսագործունեության նոր պայմաններ: Փոխակերպվող հասարակությունում տեղի է ունենում պետաիրավական կառուցակարգերի, պետական ինստիտուտների, իրավական նորմերի էական փոփոխություն: Ժամանակակից հասարակության և միաժամանակ պետաիրավական համակարգի փոխակերպումն իր առանձնահատկություններով զգալիորեն տարբերվում է նախորդ հարյուրամյակներին բնորոշ անցումային շրջաններից: Այդ փոխակերպումները կրում են ոչ թե լոկալ, ինչպես նախկինում, այլ գլոբալ բնույթ: Մի տիպի պետաիրավական համակարգից անցումը մի այլ տիպի՝ բարդ ու հակասական գործընթաց է, որը ներառում է պետական ապարատի վերակազմակերպում, պետաիրավական ինստիտուտների բովանդակության, գործառույթների, գործունեության ձևերի ու մեթոդների, կառուցվածքի որակական փոփոխություններ, հասարակության մեջ ուժերի վերադասավորում, նոր պաշտոնական գաղափարախոսության ձևավորում, նոր օրենսդրական համակարգի մշակում, ներքին և արտաքին նոր քաղաքական կուրսի որդեգրում և այլն: Անցումային է տոտալիտար քաղաքական ռեժիմից դեպի ժողովրդավարական ռեժիմ անցում կատարող պետությունը: Անցումային պետությունը դադարեցնում է ամբողջատիրական վերահսկողությունը հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների նկատմամբ: Պետությունը և իրավունքը ձեռք են բերում սոցիալական կողմնորոշում, կարևորվում է մարդը՝ որպես բարձրագույն արժեք, արմատավորվում են շուկայական տնտեսական հարաբերությունները, ձևավորվում են լիբերալ կամ ազատական արժեքների վրա խարսխված տնտեսական հիմնաշենք և պետաիրավական վերնաշենք:

Անխուսափելի փոփոխություններ է կրում փոխակերպվող հասարակության քաղաքական համակարգը: Խորհրդային Միության փլուզումից հետո դադարեց միակուսակցական քաղաքական ռեժիմը: Կոմունիստական գաղափարախոսությանը փոխարինեց գաղափարախոսական բազմակարծությունը, պլանային տնտեսությանը՝ շուկայական տնտեսությունը, հանրային և համաժողովրդական սեփականությանը՝ բազմաձև սեփականությունը: Նորանկախ պետություններում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցան սոցիալ–տնտեսական, քաղաքական բնույթի արմատական փոփոխություններ, ստեղծվեցին նոր ինստիտուտներ, որոնք իրավական ամրագրման ու նորմատիվ կարգավորման՝ մինչ այդ անհայտ կառուցակարգեր էին պահանջում: Այսպիսով, ձևավորվեց փոխակերպվող հասարակությանը բնորոշ անցումային տիպի պետաիրավական համակարգ, փոխվեց պետության կառավարման ձևը: ՀՀ Սահմանադրությունը Հայոց պետությունը հռչակեց որպես ինքնիշխան,

ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն: Հասարակական գիտակցության բոլոր ձևերում, իրավաընկալման ու պետաիրավական մտածողության մեջ տեղի ունեցած էական փոփոխություններն արտացոլվեցին օրենսդրական ակտերում: Աստիճանաբար ստեղծվեց նոր օրենսդրական համակարգ, իհարկե, պահպանելով ժամանակի փորձությունն անցած և իրենց կենսունակությունն ապացուցած իրավական նորմերն ու ինստիտուտները: Խորհրդային պետությանը բնորոշ էին վերից վար խորհուրդների իշխանությունը, դեմոկրատական ցենտրալիզմը, ժողվերահսկողության համակարգը: Հետխորհրդային պետությունում կատարվում է իշխանության բաժանում օրենսդիր, գործադիր և դատական մարմինների միջև, գործում են «զսպումների և հակակշիռների» կառուցակարգերը, ստեղծվում են նոր տիպի մարմիններ: Օրինակ, հետխորհրդային պետություններին բնորոշ ինստիտուտներ են սահմանադրական արդարադատության մարմինները (ՀՀ սահմանադրական դատարանը), վերահսկիչ մարմինները (օրինակ, ՀՀ վերահսկիչ պալատը), մարդու իրավունքների պաշտպանի, Ֆինանսական հաշտարարի և մյուս ինստիտուտները, որոնք հայտնի չէին խորհրդային պետական համակարգին: Խորհրդային իրավունքի կարևոր ճյուղ էր կոլտնտեսային իրավունքը, որն այսօր օբյեկտիվ պատճառներով դադարել է գոյություն ունենալ, փոխարենը նույնքան օբյեկտիվ պատճառներով ձևավորվել և զարգանում են հողային իրավունքը, բնապահպանական իրավունքը և իրավունքի այլ ճյուղեր: Խորհրդային Միությունում չկար մասնավոր բանկային համակարգ, և օրինաչափորեն գոյություն չուներ ոչ պետական բանկերի գործունեությունը կարգավորող իրավունքի ճյուղ: Այսօր իրողություն է բանկային իրավունքը: ԽՍՀՄ-ում հռչակագրային բնույթ էին կրում շատ հասկացություններ, օրինակ, «տեղեկատվության ազատությունը», ազատ խոսքի, քաղաքական, կրոնական ազատ կողմնորոշման իրավունքը, իսկ ժողովրդավարական հասարակությունը հիմնված է հենց ազատական արժեքների վրա, ուստի, պատահական չէ, որ հետխորհրդային պետություններում ընդունվել և գործում են հենց այդ արժեքները ճանաչող, պաշտպանող ու երաշխավորող իրավանորմեր: Այսօր իրավունքի կարևոր ճյուղեր են տեղեկատվական իրավունքը, ձեռնարկատիրական իրավունքը: Իրավունքը սոցիալականորեն խիստ պայմանավորված արժեք է, և հասարակության կյանքում ընթացող բոլոր փոփոխություններն օրինաչափորեն հանգեցնում են իրավունքի համակարգի փոփոխության: Իրավունքը կոչված է պաշտպանելու անձի, հասարակության ու պետության համար կարևոր արժեքները, կարգավորելու հասարակական հարաբերությունները: Համապատասխանաբար, այն ամենը, ինչը արժեք է հանդիսանում հասարակության ու պետության համար, ենթակա է իրավական կանոնակարգման ու պաշտպանության: Խորհրդային իրականության համար արժեք էին նախ պետական շահերը, պետական անվտանգությունն ու սեփականությունը, ապա հանրային շահերը և ի վերջո մարդու իրավունքներն ու ազատությունները: «Պետություն-հասարակություն-անձ» արժեքային աստիճանակարգության տրամաբանությամբ էր կառուցված խորհրդային իրավունքը, այդ թվում՝ Հայաստանի երկրորդ Հանրապետության իրավունքը: Հետխորհրդային իրավունքի համակարգը ձևավորվել է հակառակ տրամաբանությամբ: Նախ կարևորվել են մարդը, նրա իրավունքներն ու ազատությունները, ապա հանրային բարիքները, հետո միայն՝ պետության շահերը: Համաձայն ՀՀ բարեփոխված Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք [22, էջ 3]: Այսինքն, հասարակության պետաիրավական համակարգի փոխակերպման արդյունքում առաջնային արժեք է ճանաչվել մարդը: Համապատասխանաբար, պետության կարևոր խնդիրն է մարդու իրավունքների երաշխավորումը և համալիր պաշտպանությունը: Պետությունն իրավունք չունի անհիմն սահմանափակելու մարդու ազատության ոլորտը, ընդհակառակը՝ պետությունն է սահմանափակված մարդու իրավունքներով և ազատություններով: Եթե նախկինում գործում էր պետության առջև անձի պատասխանատվության սկզբունքը, ապա այժմ կարևորվում է անձի առջև պետական մարմինների պատասխանատվության ինստիտուտը [23, էջ 516]: Եթե խորհրդային պետությունում ընդունված Սահմանադրությունն ուներ հռչակագրային բնույթ և նրա նորմերը կարող էին գործել միայն ընթացիկ օրենսդրական ակտերով նախատեսվելու դեպքում, ապա հետխորհրդային պետությունների, մասնավորապես, Հայաստանի երրորդ Հանրապետության Սահմանադրության՝ որպես բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող հիմնական օրենքի նորմերը գործում են անմիջականորեն: Ժողովրդավարական հասարակությունում կարևորվում է ոչ միայն Սահմանադրությունը՝ որպես փաստաթուղթ, այլ կենդանի գործող Սահմանադրությունը և ընդհանրապես սահմանադրականության ռեժիմը [24, էջ 308], ոչ միայն օրենքը, այլև օրինականությունն ու իրավակարգը, ոչ միայն պառլամենտը՝ որպես օրենսդիր իշխանության մարմին, այլև պառլամենտարիզմը [25, էջ 708], ոչ միայն դատական իշխանության մարմինները, այլև արդարադատությունը:

Այսպիսով, փոխակերպվող հասարակությանը բնորոշ է անցումային պետաիրավական համակարգը, որը աստիճանաբար կայունանում է, ձեռք բերում որակական որոշակիություն՝ վերածվելով իրավական պետության և նորովի իրականացնելով իր սոցիալական առաքելությունը:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 24. 02. 2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Տրանսֆորմացիա» հասկացությունը ծագել է լատիներեն «trans-formare» բառից, որ նշանակում է փոխել, փոխակերպել, վերածել:
2. Տես **Яковец Ю. В.** Закономерности трансформации общества в ритме циклично-генетической динамики // Экономическое возрождение России, СПб//www.ekvr.narod.ru.
3. Տես **Alberts David S.** Information Age: Transformation: Getting to a 21-st Century Military. Washington, DC: DOD Command and Control Research Programm (CCRP), Publication-Series, 2007.
4. Տես **Грановский Т. Н.** Лекции по истории Средневековья. М., 1986.
5. Տես Mach Z. Symbols, Conflict and Identity: Essays in Political Antropology, State University of New York Press, 1993.
6. Տես **Маркс К., Энгельс Ф.** Сочинения. Т. 6.
7. Տես **Тойнби А.** Цивилизация перед судом истории. М., 1995.
8. Տես www.logos/ovo.ru
9. Տես **Тоффлер Э.** Третья волна. М.: АСТ, 2010.
10. Տես **Полюшкевич О. А.** Социальные представления как показатель общественной трансформации/ Феноменология социальных трансформаций/ /www.fst.my1.ru.
11. Տես **Д. Белл** Грядущее постиндустриальное общество. М.: Академия, 1999; Bell D. The Coming of Post-Industrial Society: A venture of social lorecasting, N Y; Basic Books, 1973.
12. Տես **Гидденс Э.** Устроение общества. М.: Академический проект, 2005.
13. Տես www.logos/ovo.ru
14. Տես **Бек У.** Общество риска. На пути к другому модерну. М.: Прогресс-Традиция, 2000.
15. Տես **Гидденс Э.** Ускользающий мир: как глобализация меняет нашу жизнь. Пер. с англ. М.: Весь мир, 2004.
16. Տես **Валлерштайн И.** Конец знакомого мира: Социология XXI века. Под ред. В. Л. Иноземцева. М.: Логос, 2003.
17. Տես **Бауман З.** Текучая современность. Пер. с англ. Под ред. Ю. В. Асочакова. СПб: Питер, 2008.
18. Տես Феноменология социальных трансформаций//www. fst.my1.ru.
19. Նույն տեղում:
20. Տես **Яковец Ю. В.** Закономерности трансформации общества в ритме циклично-генетической динамики // Экономическое возрождение России. СПб//www.ekvr.narod.ru
21. Տես **Данилов А. Н.** Переходное общество. Проблемы системной трансформации. Минск, 1998.
22. Տես ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով) Երևան, 2005:
23. Տես **Ռ. Խ. Հակոբյան** Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները, Երևան: Իրավունք, 2008:
24. Տես **Арутюнян Г. Г.** Конституционализм: уроки, вызовы, гарантии. К.: Логос, 2011.
25. Տես **Հ. Հ. Հակոբյան** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Տիգրան Մեծ, 2007:

ОСОБЕННОСТИ ТРАНСФОРМАЦИОННОГО ОБЩЕСТВА И ГОСУДАРСТВЕННО-ПРАВОВОЙ СИСТЕМЫ

РУЗАННА АКОПЯН

Ректор Гаварского государственного университета,
доктор юридических наук

Статья посвящена особенностям трансформационного общества и переходной государственно-правовой системы. Указывается, что переходные явления и процессы в XXI веке имеют не локальный, а глобальный характер. В процессе трансформации общества изменяются не только все составляющие социального организма, но и форма и содержание государственной организации общества, правовые институты и механизмы нормативного регулирования общественных отношений.

Дата представления статьи 24.02.2012

FEATURES OF TRANSFORMING SOCIETY AND STATE LEGAL SYSTEM

RUZANNA HAKOBYAN

Rector of Gavar State University,
Doctor of Law

The article is devoted to the peculiarities of transforming society and transition state legal system. It is mentioned that transformation processes are not local, but global in nature. In the process of transformation of a society, not only the component parts of the social system and their interrelations, but also the form of the legal organization of the society and mechanisms of legal regulation of social relationships undergo indivertible changes. Changes take place in the form of government, political regime, and structure and contents of the legal system.

Article submission date 24.02.2012

КАДЖИК ОГАНЯН

Заведующий кафедрой социологии ФГБОУ ВПО «Санкт–Петербургский государственный инженерно–экономический университет», доктор философских наук, профессор

КАРИНА ОГАНЯН

Ассистент кафедры социологии ФГБОУ ВПО «Санкт–Петербургский государственный инженерно–экономический университет»

БЕДНОСТЬ И СОЦИАЛЬНОЕ РАССЛОЕНИЕ В ТРАНСФОРМИРУЮЩЕЙСЯ ЭКОНОМИКЕ В КОНТЕКСТЕ СОЦИАЛЬНЫХ РИСКОВ

УДК 36:301.185.1:330

В статье рассматриваются особенности транзитивного общества в России; анализируются важнейшие аспекты в исследовании социальных рисков в рамках социально–экономического преобразования, такие, как риски в бедности и риски социального расслоения, их взаимосвязь.

Ключевые слова: транзитивное общество, социальные риски, бедность, социальное расслоение, рискология, заработная плата, уровень жизни, материальное положение.

Одним важнейшим аспектом в исследовании социальных рисков, формирующихся в рамках социально–экономических преобразований в России, выступают риски бедности и риски социального расслоения российского общества, прежде всего на бедных и богатых [1; 2; 10; 11; 12]. **Цель статьи** – проанализировать эти проблемы в тесной взаимосвязи.

So under the arbitral award of 22 November 1920, the boundary between Armenia and Turkey was settled conclusively and Turkish-Armenian international boundary was subsequently delimited *[26]*, as clearly states The Hague Convention *[27]* (article 54 of the 1899; article 81 of the 1907) *[28]*: *"The award, duly pronounced and notified to the agents of the parties, settles [puts an end to] the dispute definitively and without appeal." [29]*

3. The Validity of the Arbitral Award

For the arbitral award to be valid it must meet certain criteria:

1) The arbitrators must not have been subjected to any undue external influence such as coercion, bribery or corruption;

2) The production of proofs must have been free from fraud and the proofs produced must not have contained any essential errors;

3) The compromis must have been valid;

4) The arbitrators must not have exceeded their powers *[30]*.

<u>Criterion 1</u> – The arbitrators must not have been subjected to any undue external influence such as coercion, bribery or corruption.

In Armenian-Turkish boundary case the arbitrator, as was agreed in the compromis, (i.e. Article 89, the Treaty of Sevres), was *"the President of the United States"*, namely Woodrow Wilson. President Wilson often was challenged for his policy and had various disagreements with other politicians and political bodies. Nevertheless, nobody and never has questioned his political or personal integrity and he never was blamed to act under external influence.

Conclusion:

It is apparent and doubtless that the arbitrator *"have not been subjected to any undue external influence – to coercion, bribery or corruption."*

<u>Criterion 2</u> – The production of proofs must have been free from fraud and the proofs

produced must not have contained any essential errors.

As it was mentioned above, for the accomplishment of the assignment the State Department mid-July 1920 organized a special task group, which was officially entitled: *"Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia."*

The head of the committee was William Linn Westermann, professor of the University of Wisconsin, soon after Professor of Columbia University (1923–48), specialist in the history and politics of the Near and Middle East. In 1919 he had been the chief of the Western Asia division of the American Commission to Negotiate Peace in Paris *[31]*. The principal collaborators and contributors in the committee were Major (Prof.) Lawrence Martin of the Army General Staff, who had participated as the geographer of the Harbord mission, and Harrison G. Dwight of the Near Eastern division of the Department of State *[32]*.

It is obvious that all experts in the task group were knowledgeable, experienced and impartial professionals. After over two months of intensive and thorough work, at the end of September 1920, the task group produced a *"Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey and Armenia."*

The report was sent to the War Department for its observations on 28 September 1920. After seven weeks of comprehensive and scrupulous observations the committee's report was finally delivered to the White House on 12 November 1920. Ten days later, on 22 November 1920, Woodrow Wilson signed the final report, and officially delivered the award through the US Embassy in Paris on 6 December 1920.

President Wilson's award, thanks to its comprehensive character, legal justification and logical arguments, is highly regarded by international lawyers at present:

"President Wilson's arbitral decision was not implemented. Nevertheless, this award must be regarded as one of the most significant analyses of the various factors that have to be taken into account in the determination of international boundaries and of the relationship among them." [33]

"President Wilson's determination of the territorial frontiers of the newly established Armenian State particularly interesting because its includes an explanation of the reasons motivating it: the need for a "natural frontier"; "geographical and economic unity for the new state"; ethic and religious factors of the population were taken account of so far as compatible; security, and the problem of access to the sea, were other important conditions." [34]

Conclusion:

The arbitral award was drawn by respectful and well-informed experts, and, in addition, passed through the United States Government's two relevant department's scrutiny and inspection. It is obvious that the State Department and the Department of War were capable to exclude any *"fraud"* or to notice any *"essential error"* in *"the production of proofs."* Finally the award was signed by the US President, who would never abide a mistake or tolerate any misconduct.

<u>Criterion 3</u> – The compromis must have been valid.

There are several factors that prove the validity of the compromis.

Factor a) – The compromis was duly incorporated in the treaty.

The consent of States to submit a dispute to arbitration may be expressed in different ways: a) by a special arbitration treaty or compromis; b) by the inclusion in any treaty of a special arbitration clause providing for arbitration of any dispute between the parties which might arise in connection with the application of that treaty; c) by a general treaty of arbitration according to which the parties undertake to submit to arbitration all, or certain kinds, of disputes between them which might arise in the future *[35]*.

The consent of Armenia and Turkey, as well as of other High Contracting Parties, *"to*

submit to the arbitration of the President of the United States the determination the question of frontier to be fixed between Turkey and Armenia" and to be bound by the award *"to accept his decision thereupon"* was done by the inclusion of a special arbitration clause in the Treaty of Sevres (10 August 1920) *[36]*.

Article 89: *"Turkey and Armenia as well as the other High Contracting Parties agree to submit to the arbitration of the President of the United States of America the question of the frontier to be fixed between Turkey and Armenia in the Vilayets of Erzerum, Trebizond, Van and Bitlis, and to accept his decision thereupon , as well as any stipulations he may prescribe as to access for Armenia to the sea, and as to the demilitarization of any portion of Turkish territory adjacent to the said frontier."*

Factor b) – The compromis was duly negotiated.

In a joint note, on April 20, 1920, the Allied High Commissioners in Istanbul summoned the Turkish authorities to send a Peace Delegation to receive the draft peace treaty. The Ottoman delegation, headed by Senator Tevfik Pasha (Bey) [former Grand Vezier] left for Paris in May 1 *[37]*. Ten days later on May 11 it was formally given the draft peace treaty. Turkish Government was accorded one month to submit in writing any observations or objections it might have relative to the treaty *[38]*. Tevfik Bey officially acknowledged the receipt of the treaty and pronounced that the document would be given the earnest and immediate attention of his government *[39]*. At the end of May, Damad Ferid, the Grand Vezier of Turkey, applied to the Supreme Council for one-moth extension in presenting the Turkish observations on the settlement. The Supreme Council compromised by granting a two-week extension until 25 June 1920 *[40]*.

The first set of Turkish observations, bearing the signature of Damad Ferid Pasha, was submitted on 25 June 1920. On July 7 second Turkish memorandum was received. In adopting a reply Supreme Council authorized the drafting committee to make minor revisions on the wording of the treaty without altering the substance *[41]*. Regarding the future of Armenia and the arbitration of the boundaries Supreme Council stated: *"they can make no change in the provisions which provide for the creation of a free Armenia within boundaries which the President of the United States will determine as fair and just." [42]* The certitude that Armenians will not be safe and will not be treated fairly by Turkish authorities was based on lifelong understanding that:

"During the past twenty years Armenians have been massacred under conditions of unexampled barbarity, and during the war the record of the Turkish Government in massacre, in deportation and in maltreatment of prisoners of war immeasurably exceeded even its own previous record (...) Not only has the Turkish government failed to protect its subjects of other races from pillage, outrage and murder, but there is abundant evidence that it has been responsible for directing and organizing savagery against people to whom it owed protection." [43]

The Allied response was delivered to the Turkish delegation on 17 July 1920.

Factor c) – The compromis was signed by authorized representatives of a lawful government.

In 1918–1922 Sultan–Caliph Memed VI (Vahydud–Din Efendi // Vahideddin) was the head of the Ottoman Empire, politically recognized legitimate ruler *[44]*. Sultan represents the de jure Government *[45]*. Pursuant to article 3 of the Ottoman constitution [23 December 1876; 23 July 1908] *"The Ottoman sovereignty (...) belongs to the eldest Prince of the House of Ottomans"*. Treaty making power was vested in the Sultan. The Sultan had the sole power to legislate *[46]*. Among the sovereign rights of the Sultan (The Ottoman Constitution, article 7) among others is the conclusion of the treaties.

On 22 July 1920, Sultan Mehmed VI, the constitutional head of the state, convened a *Suray–i Saltanat* (Crown Council), at the Yildiz Palace. The argument for signature

was based on the *"necessities of the situation"*. The Council, which was attended by fifty prominent Turkish political and military figures, including former ministers, senators and generals, as well as by Prime Minister Damad Ferid Pasha, recommended in favor of signing the treaty. The Sultan rounded up the proceedings by asking those in favor of signature to stand up. Everybody but one stood up. The Treaty was accepted *[47]*. The final treaty, including the arbitral clause [Article 89] was signed by Turkish plenipotentiaries [General Haadi Pasha, Senator; Riza Tevfik Bey, Senator; Rechad Haliss Bey, Envoy Extraordinary and Minister Plenipotentiary of Turkey at Berne] sent by the Sultan's Government at Constantinople under the leadership of Damad Ferid Pasha *[48]*.

Conclusion: The compromis was valid.

<u>Criterion 4 – The arbitrators must not have exceeded their powers.</u>

The compromis [Article 89 of the Sevres Treaty] asked the arbitrator 1) to fix the frontier between Turkey and Armenia in the Vilayets of Erzerum, Trebizond, Van and Bitlis; 2) to provide access for Armenia to sea; 3) to prescribe stipulations for the demilitarization of Turkish territory adjacent to the Turkish–Armenian frontier.

President Woodrow Wilson strictly remained within the assignment which has been prescribed by compromis. Even there was a strong pressure on him by missionary groups to include town of Karpurt and vicinities in the future Republic of Armenia, Wilson did not exceed his powers.

The official title of his decision clearly shows that he accurately fulfilled his duty: *"Decision of the President of the United States of America respecting the Frontier between Turkey and Armenia, Access for Armenia to the Sea, and the Demilitarization of Turkish Territory adjacent to the Armenian Frontier."*

4. Legal Features and the Current Status of the Award

a) Though the arbitration mainly is done out of courts but it is a legal procedure. The arbitration is based either upon contract law or, in the case of international arbitration, the law of treaties, and the agreement between the parties to submit their dispute to arbitration is a legally binding contract. Thus the indispensable feature of arbitration award is that it produces an award that is final and binding – *"The arbitral award is the final and binding decision by an arbitrator in the full settlement of a dispute." [49]* By agreeing to submit the dispute to arbitration – *compromis [50]* – the parties in advance agree to accept the decision *[51]*.

b) Pursuant to article 89 of the Treaty of Sevres, the arbitral clause was endorsed by *"the other High Contracting Parties"*, so issue of determination of the boundary was submitted to the arbitration on behalf of all state–signatories of the Treaty of Sevres as well. As the Treaty of Sevres was signed by lawful representatives (*"having communicated their full powers, found in good and due form"*) of the 18 countries [The British Empire [separately] – 1) United Kingdom, 2) Canada, 3) Australia, 4) New Zealand, 5) Union of South Africa, 6) India *[52]*, 7) France, 8) Italy and 9) Japan [as Principal Allied Powers], as well as by 10) Armenia, 11) Belgium, 12) Greece, 13) Poland, 14) Portugal, 15) Romania, 16) Kingdom of Serbs–Croats–Slovenes *[53]*, and 17) Czecho–Slovak Republic *[54]* of the one part and 18) Turkey of the other part], and they pledged *"to accept the decision thereupon"*, thus it is definitely compulsory arbitration and is obligatory for all of them.

c) Once arbitration has been properly executed it becomes irrevocable. It employs the legal doctrine of *Res Judicata (finality of judgments)*, which holds that once a legal claim has come to final conclusion it can never again be litigated *[55]*. The doctrine of *res judicata* is considered applicable to all arbitral awards, whether the special agreement or general treaty of arbitration contains such a provision or not.

d) The arbitral awards and court judgments are similar in their nature, as both are based on law *[56]*. They both are legal decisions. Therefore, the Doctrine of Collateral Estoppel, which affirms that an issue, which has already been legally duly determined, cannot be reopened or litigated again in a subsequent proceeding, applies in arbitration cases as well *[57]*.

e) If a party to an arbitration by an action conforms the award or, by lack of any action in a reasonable period, never confront the award, which believed to be a tacit agreement, the award considered be valid and biding. It is thereafter precluded from going back on that recognition and challenging the validity of the award [Arbitral Award by the King of Spain (1960) International Court of Justice, Rep. 213] *[58]*.

Turkey never has challenged the validity of President Wilson's arbitral award, never started any action for cancellation of the award, and by lack of any action gave its "tacit agreement", therefore the award is absolutely and definitely "valid and binding".

f) The arbitration decisions engage the parties for an unlimited period *[59]*. The validity of the arbitration is not dependent upon its subsequent implementation.

h) The President is the representative authority in the United States, *"his voice is the voice of the nation"* *[60]*. The President's representative character also implies that all official utterances of the President are of international cognizance and are presumed to be authoritative *[61]*. Foreign nations must accept the assertion of the President as final *[62]*. By virtue of the arbitrator's position the award is binding for the United States as well.

i) Annulment (nullification of the legality) of an arbitral award occurs only when there is some authoritative public or judicial confirmation of the ground for such an annulment. This confirmation might come from an international agency such as the International Court of Justice. Confirmation of the ground of an annulment might also be based on international public opinion deriving from general principals of law common to all nations *[63]*. Refusal by the losing party to comply with the award is not in itself equivalent to a lawful annulment. The plea of nullity is not admissible at all and this view is based upon Article 81 of The Hague Convention I of 1907, and the absence of any international machinery to declare an award null and void *[64]*.

Final Conclusions

Territorial disputes, even when they are of law intensity, continue to represent a significant threat to the international peace and security. It is particularly true of those conflicts that remain unresolved for a long time, allowing the rational bases of settlement to be layered by painful emotions. For example, Ararat is not a mere mountain for Armenians. It is not a number of million tones of stone, soil and snow. It's the core of the Armenian national and Biblical-Christian identity. Thus the Turkish *"captivity"* of Ararat and the world ignorance of the fact have grown into a very considerable psychological factor, which is impossible to ignore.

After the arbitrary award of the President of the USA, [signed on 22 November 1920, and duly notified on 6 December 1920] the presence and all acts taken by the Turkish Republic in the "Wilsonian Armenia" are illegal and invalid. Consequently, in spite of the long standing occupation Turkey does not possess any legal title to the territory and its *de facto* sovereignty is not more than an administrative control by force of arms. Belligerent occupation does not yield lawful rule over a territory. A single act of control is not enough to establish a transfer of title as Turkey might hope. Not even continuous occupation since 1920, forced changed demography of the territories and practices aiming at altering the heritage and the character of the country would help Turkey get the title.

The arbitral award of the President of the United States never was revoked and it can't be done. There is not a single legal instrument that conceded *"Wilsonian Armenia"* to Turkey. Furthermore, the boundary between Armenia and Turkey, as determined by President of the United States, was reconfirmed by the Republic of Turkey by virtue Article 16 of the Treaty of Lausanne (24 July 1924). By the Treaty of Lausanne, which is considered *"birth certificate of the Republic of Turkey"*, Turkey and other High Contracting Parties recognized the Turkish title only over the territories situated inside the frontiers *"laid down"* in the Treaty of Lausanne. No frontier was laid down between Armenia and Turkey, thus *"Wilsonian Armenia"* defiantly and evidently was not included in Republic of Turkey. By renouncing all *"rights and title"* over territories *"situated outside the frontiers laid down"* in the Treaty of Lausanne, the Republic of Turkey renounced its title *"whatsoever"* over *"Wilsonian Armenia"* and by virtue of international treaty reconfirmed the legal effects of the arbitral award of the President of the United States:

Article 16. Turkey hereby renounces all rights and title whatsoever over or respecting the territories situated outside the frontiers laid down in the present Treaty and the islands other than those over which her sovereignty is recognized by the said Treaty, the future of those territories and islands being settled or to be settled by the parties concerned.

It is true that Armenia possesses the legal validity to the *"Wilsonian Armenia"*, but it is also true that legal validity by itself will not lead to a solution. Indeed Armenia is the *de jure* holder of the title and Turkey grips the control, and none would relinquish its claims, based on Armenian side on the legal validity and on Turkish side on the military power.

It is true that international law by itself will not be able to bring about a solution for the Armenian-Turkish confrontation. Nonetheless, there is no doubt that international law is the only way to bring about a just and peaceful resolution, thus a durable and permanent solution.

Article submission date: 25.06.2012

ENDNOTES

1. **Louis B. Sohn,** The Role of Arbitration in Recent International Multinational Treaties, Virginia Journal of International Law, # 23,1983, p. 171-2.
2. International Law Commission Yearbook, Doc. A/2436, 1953, II p. 202.
3. **Shabtai Rosenne**, The Law and Practice of the International Court, 1920-1996, Third edition, vol. I, (The Court and the United Nations), 1997, The Hague-Boston-London, p. 11. A Dictionary of Arbitration and its Terms, (ed. by Katharine Seide) New York, 1970. p. 126.
4. **Sheldon Amos,** Political and Legal Remedies for War, London-Paris- New York, 1880, p. 164-5.
5. Manual of Public International Law, (ed. by Max Sorensen), New York, 1968, p. 584.
6. The Hague Court Reports, (ed. by James Brown Scott), New York, 1916, p. lvi-lvii.
7. Manual of Public International Law, *op. cit.*, p. 717.
8. **Arnold J. Toynbee,** Survey of International Affairs 1920-1923, London, 1925, p. 9
9. **G. H. Hackworth,** Digest of International Law, Turkish-Armenian Boundary Question, v. I, Chapters I-V, Washington, 1940, p. 715.
10. The United States recognized the independence of Armenia, but refused to recognize that of Georgia and Azerbaijan. (H. Lauterpacht, Recognition in International Law, Cambridge, 1947, p.
11. Papers Relating to Foreign Relations of the United States, 1920, v. III, Washington, 1936. p. 778.) [hereinafter - FRUS].
12. Hackworth, *op. cit.*, p. 715.
13. The Treaties of Peace, 1919-1923, (Preface by Lt.-Col. Lawrence Martin).vol. I, New York, 1924, p. xxxii.
14. Papers Relating to Foreign Relations of the United States, 1920, III, Washington, 1936. p. 780.
15. *Ibid.*, p. 783.
16. For the Full Report with relative materials, see: US Archives, General Records of the Department of State (Decimal file, 1910-1920), RG 59, RG 59, 760J.6715/65.
17. The notion of an historic title is well known in international law. Historic title is a title that has been

so long established by common repute that this common knowledge is itself a sufficient title.

18. See: Article 16, Treaty of San Stefano, March 3, 1878. See also: Gustave Rolin-Jaequemyns, Armenia and Armenians in the Treaties, London 1891.
19. Diplomacy in the Near and Middle East, 1914–1956, (by J.C. Hurewitz) vol. II, New Jersey, 1956, p. 37.
20. **Vahan Cardashian,** Armenian Independence, New York Times, 30 March 1922, p. 93.
21. **R. Hovannisian,** The Republic of Armenia, v. IV, Berkeley, 1996, p. 37.
22. *Ibid., p. 40.*
23. **Cukwurah A. O.,** The Settlement of Boundary Disputes in International Law, Manchester, 1967, p. 165–6.
24. *Ibid.*, p. 31. Hackworth, *op.cit.*, p. 715.
25. For the full text of Wilson's letter see: FRUS, v. III, pp. 790–795.
26. *Ibid.*, p. 789–90.
27. **Cukwurah A.O.,** *op. cit.*, p. 31. Hackworth, *op..cit.*, p. 715.
28. The 1899 Convention was ratified by Turkey on July 12, 1907. (The Hague Court Reports, *op. cit.*, p. cii).
29. This notion was comprised in article # 54 of the 1899 Convention with slightly deferent wording: *"The award, duly pronounced and notified to the agents of the parties [at variance, puts an end to] the dispute definitively and without appeal."*(The Hague Court Reports, *op. cit.*, p. lxxxix).
30. *Ibid.*
31. Manual of the Terminology of Public International Law, *op.cit.*, § 508, p. 588–90.
32. **R. Hovannisian,** *op. cit.*, vol. IV, p. 30.
33. *Ibid.*
34. **Yahuda Z. Blum,** Secure Boundaries and Middle East Peace, In Light of International Law and Practice, Jerusalem, 1971, p 26.
35. **A.L.W. Munkman,** Adjudication and Adjustment – International Judical Decision and the Settlement of Territorial and Boundary Disputes, p. 139; n. 4 [In: Title to Territory, (ed. Malcolm N. Show), Dartmouth, 2005.]
36. Manual of the Terminology of Public International Law, *op. cit.*, § 506, p.586.
37. The official full text of the Treaty of Sevres was published – British and Foreign State Papers, 1920. vol. CXIII, Printed and Published by His Majesty's Stationary Office, London, 1923, pp. 652–776, [hereinafter – British Papers] and separately, as Command Paper 964 – Treaty Series No. 11 (1920), Treaty of Peace with Turkey, signed at Sevres, August 10, 1920, HMSO, London, 1920, 100 pages.
38. **R. Hovannisian,** The Republic of Armenia, 1996, Berkeley, v. III, p. 106.
39. Herbert Adams Gibbons, An Introduction to World Politics, The Century Co., New York, 1922, p. 430. Paul C. Helmreich, From Paris to Sevres, Ohio, 1974, p. 309.
40. British Papers, *opt.cit.*, v. XIII, p. 70.
41. *Ibid.* p. 79.
42. *Ibid.* VIII, pp. 553–556.
43. *Ibid.*
44. *Ibid.*
45. **Arnold J. Toynbee,** Kenneth P. Kirkwood, Turkey, New York, 1927, p. 151.
46. Harold Armstrong, Turkey in Travail, The Birth of a New Nation, London, 1925, p. 113.
47. Eversley [Lord], The Turkish Empire, From 1288 to 1914, and From 1914 to 1924, [by Sir Valentine Chirol], (Abridged), Lahore, 1958, p. 295.
48. **Salahi Ramsdan Sonyel,** Turkish Diplomacy 1918–1923, Mustafa Kemal and the Turkish National Movement, London, 1975, p. 82.
49. **A. Toynbee, K. Kirkwood,** *op.cit.*, p. 76. Elaine Diana Smith, Origins of the Kemalist Movement and the Government of the Grand National Assembly (1919–1923), June 1959, The American University Washington D.C., (Ph.D. in International Relations and Organization), p. 133.
50. A Dictionary of Arbitration and its Terms, *op. cit.*, p. 32.
51. *The compromis is the arbitration agreement between sovereign States which empowers them to arbitrate an existing dispute.* (A Dictionary of Arbitration and its Terms, *op. cit.*, p. 54)

52. *Ibid.*, p. 27.
53. At present India, Pakistan and Bangladesh.
54. At present Serbia, Croatia, Slovenia, Bosnia and Herzegovina, Macedonia and Montenegro.
55. At present Czech Republic and Slovak Republic.
56. *Ibid.*, p. 198.
57. Manual of Public International Law, *op.cit.*, p. 584.
58. A Dictionary of Arbitration and its Terms, *op. cit.*, p. 49
59. Manual of Public International Law, *op.cit.*, p. 694.
60. **Luzius Wildhaber**, Treaty Making Power and Constitution, Basel and Stuttgart, 1971, p. 98.
61. **Quincy Wright**, The Control of American Foreign Relations, New York, 1922, p. 36.
62. *Ibid, p. 37.*
63. *Ibid., p 38.*
64. A Dictionary of Arbitration and its Terms, *op.cit.*, p. 15.
65. Manual of Public International Law, *op.cit.*, p. 693–94.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀ ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃԻՌԸ ԹՈՒՐՔԻԱ–ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՐԱ ՊԱՊՅԱՆ

«Մոդուս Վիվենդի» կենտրոնի ղեկավար

Սույն հոդվածում առաջին անգամ փորձ է արվել քննության ենթարկել Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո Վիլսոնի մասնակցությունը Առաջին աշխարհամարտից հետո հայ ժողովրդի և Հայաստանի Հանրապետության (1918–1920թթ.) ճակատագրերում, հատկապես Հայաստանի և Թուրքիայի սահմանը որոշելու գործում: Հոդվածում պատմական հենքի վրա տրված է Վիլսոնի Իրավարար վճռի (22 նոյեմբերի 1920թ.) վերլուծությունը, բացահայտված են հարցի իրավական կողմերը և քաղաքական հետևանքները: Սույն հոդվածը նաև որոշակի նպաստ է բերում 1917–1921թթ. բարդագույն ժամանակահատվածում Միջին արևելքում նախագահ Վիլսոնի քաղաքականությունն հասկանալու գործին, ինչպես նաև օգնում է ըմբռնելու այդ քաղաքականության հնարավոր ազդեցությունը տարածաշրջանի վրա մեր օրերում:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 22.06.2012 թ.

АРБИТРАЖНОЕ РЕШЕНИЕ О ТУРЕЦКО–АРМЯНСКОЙ ГРАНИЦЕ ОТ ПРЕЗИДЕНТА СОЕДИНЕННЫХ ШТАТОВ АМЕРИКИ ВУДРО ВИЛЬСОНА

АРА ПАПЯН

Руководитель центра Модус Вивенди

Эта статья является первой попыткой провести исследование по вопросу участия президента США Вудро Вильсона в судьбах армянского народа и Республики Армения (1918–1920) после Первой мировой войны, в особенности в определении границы между Арменией и Турцией. В статье на фоне исторических событий дан анализ, выявлены правовые аспекты и политические последствия Арбитражного решения Вильсона от 22 ноября 1920г. Данная статья также вносит свой вклад в понимание политики президента Вильсона на Ближнем Востоке в сложный период 1917–1921 гг., а также возможные последствия этой политикии в регионе и сегодня.

Дата представления статьи 22.06.2012

ԱՐՄԵՆ ՔԻՆԱԿՑՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ՄԱՐԴԱԿԵՆՏՐՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 351/354:32.001

Մարդը տիեզերքի գեղեցկությունն ու զարդն է,
կենդանական աշխարհի թագն ու պսակը:
Վ. Շեքսպիր

Մարդը, նրա արժանապատվությունը,
հիմնական իրավունքները և ազատությունները
բարձրագույն արժեք են:
ՀՀ Սահմանադրություն, հոդված 3

Հոդվածում ներկայացված են գլոբալ և ազգային անվտանգության վերաբերյալ արդի պատկերացումների զարգացման միտումները, վերլուծության է ենթարկված անհատի, հասարակության և պետության անվտանգության հարաբերակցությունը, պետաիրավական տեսանկյունից բացահայտված և ձևակերպված են ազգային անվտանգության համակարգի կառուցման առաջնահերթությունները, հեղինակի կատարած ուսումնասիրությունների արդյունքներով տրված է անհատի անվտանգության դերը անվտանգության ընդհանուր համակարգում, որի հիման վրա սահմանված է մարդակենտրոն անվտանգության հասկացությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ հասարակական հարաբերություններ, անվտանգության ընկալումներ, գլոբալ, տարածաշրջանային և ազգային անվտանգության համակարգեր, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն, իրավական ինստիտուտ, իրավական երաշխիք:

Այսօր մարդկության աչքի առաջ փլուզվում են երբեմնի անսասան թվացող հյուսիսաֆրիկյան և որոշ այլ արաբական ռեժիմներ, կանխատեսվում են հեղափոխական զարգացումներ ոչ միայն հարևան, այլև տարածաշրջանից դուրս գտնվող մի շարք պետություններում, բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվում դրանց պատճառների ու նպաստող հանգամանքների վերաբերյալ՝ կապելով աշխարհաքաղաքական, տնտեսական, էթնիկական, տեղեկատվական, կրոնական և բազմաթիվ այլ գործոնների հետ: Լայնորեն քննարկվում են նաև տեղի ունեցող իրադարձությունների ֆոնին միջազգային ահաբեկչությանը հասցված վճռական հարվածից հետո (ի դեմս թիվ մեկ ահաբեկիչ Օսամա բեն Լադենի ոչնչացման) ստեղծված նոր իրողությունները:

Այդ համատեքստում շատ հետազոտողներ փորձում են վերլուծել առկա պայմաններում գլոբալ, տարածաշրջանային ու ազգային անվտանգության համակարգերի կառուցման հեռանկարները, մասնավորապես, վերը նշված փաստերի ու անվտանգության համակարգերի զարգացման սկզբունքների միջև պատճառահետևանքային կապը, այդ համակարգերի հետագա զարգացման վրա ստեղծված իրավիճակի հնա-

րավոր ազդեցության բնույթը և չափը:

Սույն աշխատանքում մենք կփորձենք հայացք նետել անվտանգության արդի ընկալումներում հիշյալ իրադարձությունների կապակցությամբ տեղի ունեցող զարգացումներին մեկ այլ՝ պետաիրավական տեսանկյունից:

Պետությունն իր էությամբ հասարակությանը կազմակերպող, ժողովրդի ազատությունն ու անվտանգությունը երաշխավորող կառույցի դեր է կատարում, ուստի բնական է, որ պետք է ապահովի յուրաքանչյուրի հիմնական սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Սակայն, անհրաժեշտության դեպքում, պետությունը նույն նպատակներով պետք է սահմանափակի նաև իր միջամտությունը հասարակական հարաբերություններին, եթե դա կարող է բերել նշված իրավունքների ու ազատությունների ոչ իրավաչափ խոչընդոտման: Այս մեխանիզմը, որը ամրագրված է քաղաքակիրթ աշխարհի շատ երկրների, այդ թվում՝ Հայաստանի Սահմանադրությամբ, անձի, հասարակության և պետության շահերի փոխլրացման ու ներդաշնակման լավագույն դրսևորումներից է: Առանց այդպիսի մեխանիզմների արդի պայմաններում հնարավոր չէ ապահովել այդ շահերն այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են տնտեսությունը, սոցիալական կյանքը, պաշտպանությունը, հասարակական կարգի պահպանությունը, ազգային անվտանգությունը:

Ազգային անվտանգության ապահովումը ցանկացած հասարակությանը հուզող առաջնային հիմնահարցերից է: Ավելորդ է լուսաբանել անգամ հիմնավորել, թե ինչու է այդ ոլորտն այդքան կարևոր:

Արդի պայմաններում ազգային անվտանգության վերաբերյալ պատկերացումները հիմնականում ունիվերսալ բնույթ են կրում, և չկա գոնե մեկ պետություն, որը չդիտի դրա ապահովումը որպես պետական գործունեության ինքնուրույն ուղղություն: Սակայն, յուրաքանչյուր պետության մեջ այդ ոլորտի նկատմամբ գործնական մոտեցումն առանձնահատուկ է, ինչը պայմանավորված է նրա կառուցվածքի և ռեժիմի առանձնահատկություններով, աշխարհաքաղաքական և տնտեսական առաջնահերթություններով, ժողովրդի հոգևոր–մշակութային արժեհամակարգով, անգամ բնավորության գծերով:

Հատկապես այսօր աշխարհում ընթացող գլոբալ փոփոխությունների, հյուսիսաֆրիկյան և արաբական այլ երկրներում ծայր առած հեղափոխական շարժումների ֆոնին շատ հետազոտողներ փորձում են հասկանալ համաշխարհային, տարածաշրջանային և ազգային մակարդակներում անվտանգության համակարգերի զարգացման նորահայտ օրինաչափությունները, դրանց ազդեցությունն այդ համակարգերի ապագայի վրա, կանխատեսել այս կամ այն երկրում քաղաքական, սոցիալական, տնտեսական վերափոխումների ընթացքը և հասարակական ու պետական անվտանգության ապահովման նոր ձևաչափերի առաջացումը:

Սակայն, նշված պետություններում ձևավորված անվտանգության համակարգերի նույնիսկ հպանցիկ ուսումնասիրությունը աներկբայորեն թույլ է տալիս առանձնացնել մի շատ կարևոր հանգամանք. դրանք երբեք չեն կրել մարդակենտրոն բնույթ, այսինքն՝ հիմքում չեն ունեցել յուրաքանչյուր քաղաքացու, անկախ դիրքից, սոցիալական ծագումից, էթնիկ պատկանելությունից, գույքային և այլ դրությունից, անվտանգության ապահովումը, այլ ուղղված են եղել կառավարող շրջանակների գաղափարական կամ ռազմահայրենասիրական թեզերը կյանքի կոչելուն, կրոնաբարոյական կամ «հեղափոխական» (ինչպես Լիբիայի դեպքում) արժեքների սպասարկմանը, ինչպես նաև այդ շրջանակների ու նրանց ունեցվածքի անվտանգության երաշխավորմանը:

Այս համատեքստում է, որ առաջ է գալիս մարդակենտրոն անվտանգության արժևորման անհրաժեշտությունը: Փորձենք համառոտ պարզաբանել դրա էությունը:

Երբ քաղաքական բառապաշարում սկսվեց օգտագործվել ազգային անվտանգություն եզրը, այն չուներ այն նշանակությունը, ինչ այժմ: Այդ եզրն առաջին անգամ կիրառվել է 1904 թ. ԱՄՆ նախագահ Թ. Ռուզվելթի (T. Ruzvelt) կողմից Կոնգրեսին հասցեագրված ուղերձում, որտեղ նա հիմնավորում էր Պանամայի նեղուցը Միացյալ Նահանգների ազգային անվտանգության շահերի գոտի հայտարարելու անհրաժեշտությունը [9, էջ 14]:

Առաջին իրավական փաստաթուղթը, որտեղ օգտագործվել է «ազգային անվտանգություն» եզրը 1947 թ. ԱՄՆ Կոնգրեսի կողմից ընդունված «Ազգային անվտանգության մասին» օրենքն է [10]: Օրենքը կարգավորել է, մասնավորապես, ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդի ձևավորման և գործունեության, Կենտրոնական հետախուզական վարչության ստեղծման, դրա գործունեության նկատմամբ վերահսկողության հարցերը և այլն: Այսինքն՝ հիշյալ օրենքում քայքայիչ ազդեցություններից հասարակության պաշտպանությունը դիտարկվել է ԱՄՆ ընդհանուր ազգային (պետական) անվտանգության համատեքստում:

Այսօր էլ, առանց արտաքին ու ներքին սպառնալիքներից ապահովագրվելու, հատկապես, տնտեսական, ռազմական, տեղեկատվական անվտանգության կայուն երաշխիքների ստեղծման որևէ ժողովուրդ չի կարող բնականոն զարգանալ, օգտվել քաղաքակրթության բարիքներից, գտնել իր տեղը սրընթաց փոփոխվող աշխարհում, դիմագրավել սպառնացող մարտահրավերներին:

Սակայն, արդի ժամանակներում անվտանգության ընկալումները (վերաբերեն դրանք անձի, թե ազգային–պետական անվտանգությանը) էական փոփոխություններ են կրել: Մասնավորապես, առաջին պլան է մղվել անձի և հասարակության անվտանգությունը, այսինքն՝ այն հիմնարար արժեքների, ինստիտուտների անվտանգ կեցությունը՝ պաշտպանվածությունը և ապահովվածությունը, առանց որոնց պետությունն առհասարակ գոյություն ունենալ չի կարող: Դրա հիմքը դրվեց մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների վերաբերյալ միջազգային իրավական հետևյալ կարևորագույն փաստաթղթերի ընդունմամբ՝

– Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության (1945 թ).

– Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (1948 թ.).

– Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (1950 թ.).

– Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (1966 թ.).

– Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի (1966 թ.):

Այսպիսով՝ կարելի է հանգել հետևության, որ ազգային անվտանգության և մարդու (անձի, անհատի) անվտանգության վերաբերյալ առավել ամբողջական իրավական ինստիտուտներն առաջացել են միաժամանակ: Բնականաբար, դա պատահական համարել չի կարելի, և գլխավոր գործոնը, որը պայմանավորեց անվտանգ գոյության և զարգացման ապահովման նոր իրավական և քաղաքական մեխանիզմների մշակման անհրաժեշտությունը երկրորդ համաշխարհային պատերազմն էր: Պատերազմի արհավիրքները կրած աշխարհը սկսեց գիտակցել, որ առանց անձի կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը, իրավունքներն ու ազատությունները այդպիսի արհավիրքներից ապահովագրելու և անվտանգության գլոբալ, կայուն, հուսալի համակարգ ձևավորելու մարդկության ապագան մշուշոտ է և նոր ավերիչ պատերազմների առաջացումը բացառել չի կարելի: Դրա արդյունքում տեղի ունեցավ անձի, հասարակության, պետության և միջազգային անվտանգության շահերի նախկինում չտեսնված ներդաշնակություն:

Այդ միտումը պահպանվեց նաև հետագա տասնամյակներում: Արևմուտք–Արևելք սառը պատերազմի տարիներին, չնայած աշխարհի այս կամ այն հատվածում բռնկվող լոկալ պատերազմներին, հակասությունների ծայր աստիճան լարման պահերին, կողմերը զերծ մնացին միմյանց նկատմամբ ռազմական ուժի ուղղակի գործադրումից՝ քաջ գիտակցելով դրա հետևանքները:

Հարաբերականորեն լոկալ պատերազմի շրջանակներից դուրս չգալու ռազմավարության ցայտուն օրինակ են նաև երկրորդ աշխարհամարտից հետո տեղի ունեցած ռազմական գործողությունները՝ վիետնամական պատերազմը, Ֆոլկլենդական կղզիների համար ռազմական բախումը, աֆղանական պատերազմները առաջինը ԽՍՀՄ մասնակցությամբ, երկրորդը՝ դաշնակիցների՝ ընդդեմ թալիբյան իշխանության), իրաքյան երկու կամպանիաները, Եվրոպայի կենտրոնում Հարավսլավիայի դեմ հյուսիսատլանտյան դաշինքի իրականացրած օպերացիան և այլն:

Անվտանգության ընկալումներում տեղի ունեցող փոփոխություններն արտացոլված են բազմաթիվ միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերում:

Միացյալ Նահանգներում, որը համարվում է ազգային անվտանգության տեսության ծննդավայրը, անվտանգության առավել ընդարձակ իմաստն ու բովանդակությունը արտացոլվեց այդ երկրում 1994 թ. ընդունված ազգային անվտանգության ռազմավարության մեջ [11]: Այդ փաստաթղթում ամրագրված են ինչպես ներքին ու արտաքին ոլորտներում ԱՄՆ պետական անվտանգության շահերը, այնպես էլ նրա քաղաքացիների անվտանգության, իրավունքների ու ազատությունների պաշտպանության, հասարակական անվտանգության և համերաշխության, կրթական համակարգի հզորացման հարցերը, ֆիզիկական, տնտեսական և տեղեկատվական անվտանգության վրա ազդող բազմաթիվ այլ գործոններն ու դրանց ապահովման ուղիները:

Ազգային անվտանգությունը որպես անձի, հասարակության և պետության անվտանգության եռամիասնություն է ընկալվում նաև ռուսաստանցի հեղինակների կողմից և արտացոլված է Ռուսաստանի Դաշնության օրենսդրության մեջ: «Անվտանգության մասին» ՌԴ 1992 թ. մարտի 5–ի օրենքի 1–ին հոդվածի 3–րդ մասով սահմանված են անվտանգության հիմնական օբյեկտները, այն է՝

– անձը՝ նրա իրավունքներն ու ազատությունները.

– հասարակությունը՝ նրա նյութական և հոգևոր արժեքները.

– պետությունը՝ նրա սահմանադրական կարգը, ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը [3]:

Հետագայում, այս սահմանման հիման վրա, 1995 թ. Դաշնային ժողովին Ռուսաստանի նախագահի հղած «Ազգային անվտանգության մասին» ուղերձում այն բնորոշվեց որպես «արտաքին ու ներքին սպառնալիքներից ազգային շահերի պաշտպանվածության վիճակ, որն ապահովում է անձի, հասարակության և պետության առաջընթաց զարգացումը» [5]:

Ներկայումս Ռուսաստանի Դաշնությունում ազգային անվտանգության հասկացության պաշտոնական սահմանումը տրված է «ՌԴ ազգային անվտանգության ռազմավարությունը մինչև 2020 թ.» կոչվող փաստաթղթում, որի համաձայն՝ ազգային անվտանգությունը անձի, հասարակության և պետության պաշտպանվածությունն է

արտաքին ու ներքին սպառնալիքներից, որը թույլ է տալիս ապահովել քաղաքացիների սահմանադրական իրավունքները, ազատությունները, կյանքի արժանի որակն ու մակարդակը, ՌԴ ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը և կայուն զարգացումը, պետության պաշտպանությունը և անվտանգությունը [4]:

Անձի, հասարակության և պետության անվտանգության եռամիասնական համակարգում անձի անվտանգության առաջնահերթությունն ունիվերսալ բնույթ է ստացել: Ժամանակակից աշխարհում որևէ պետություն չի կարող ունենալ կայուն զարգացման երաշխիքներ, եթե ապահովված չեն նրա ազգային անվտանգության հիմնական բաղադրիչները և առաջին հերթին՝ անձի անվտանգությունը: Ընդ որում, «անձ» եզրը պետք է տարածական մեկնաբանության ենթարկվի. դրա տակ պետք է հասկանալ ոչ միայն մարդուն, այսինքն՝ ֆիզիկական անձին, անհատին, այլև իրավաբանական անձին [12]:

Քաղաքակիրթ պետության ազգային անվտանգությունը պետք է բնութագրվի ոչ միայն տվյալ ազգի որպես ամբողջական սոցիալ-էթնիկական համակարգի պաշտպանվածության վիճակով, այլև առանձին վերցրած յուրաքանչյուր անհատի՝ նրա կյանքի, առողջության, պատվի և արժանապատվության, իրավունքների ու ազատությունների պաշտպանվածության և ապահովվածության աստիճանով:

Ռուսաստանցի պրոֆեսոր Ա. Վորոնովի ձևակերպմամբ՝ «Ժողովրդավարական հասարակության համար ազգային անվտանգության ապահովման համակարգում առաջնահերթությունը պատկանում է անձի կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածությանը, այնուհետև հասարակության և վերջում միայն պետության անվտանգությանը: Անվտանգության ապահովման օբյեկտների առաջնահերթության նկատմամբ այսպիսի մոտեցումը անհրաժեշտ պայման և երաշխիք է հանդիսանում ընդհանուր ազգային անվտանգության հուսալի ապահովման համար» [9]:

Միջազգային իրավական փաստաթղթերը ցանկացած պետությանը թույլ են տալիս (եթե չասենք պարտադրում են) անձի անվտանգության ապահովման հարցում առաջնորդվել ունիվերսալ մոտեցումներով: Ոչ պակաս կարևոր դեր կարող է խաղալ այս գործում առավել նշանակալի արդյունքների հասած պետությունների փորձի ուսումնասիրումը և յուրացումը: Բոլոր դեպքերում, անձի անվտանգությունը ապահովվում է իրավական և բարոյական նորմերի, հասարակական ինստիտուտների ու հարաբերությունների այնպիսի համակարգի ձևավորմամբ, որը հնարավորություն է տալիս երկրի բոլոր քաղաքացիներին ապրել արժանավայել կյանքով, դրսևորել սեփական ընդունակությունները, բավարարել սեփական օրինաչափ պահանջմունքները, կայանալ որպես հասարակության լիարժեք անդամ, պետության լիիրավ քաղաքացի:

Ինչպես լրացուցիչ անգամ վկայում են աշխարհում ներկայումս ընթացող զարգացումները, ազգային անվտանգության առավել ամուր համակարգ է ձևավորվում այն հասարակություններում և պետություններում, որտեղ անվտանգության ապահովումը մարդակենտրոն բնույթ ունի, այսինքն՝ ապահովված է առաջին հերթին ազգային անվտանգության առանցքային տարրը՝ անձի անվտանգությունը, որի շուրջ արդեն ձևավորվում են այդ համակարգի մյուս բաղադրիչները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մարդակենտրոն անվտանգությունը կարելի է բնորոշել որպես անվտանգության համակարգի (լինի դա միջազգային, տարածաշրջանային, թե ազգային) այնպիսի հատկություն, որը բնութագրում է անձի անվտանգության առաջ-

նահերթությունը, ինչպես նաև հիմնարար նշանակությունը հասարակության և պետության անվտանգության ապահովման գործընթացում:

Ավելորդ չէ նշել նաև, որ մարդակենտրոն անվտանգությունն առաջին հերթին ենթադրում է անձի անվտանգության իրավական երաշխիքների ստեղծում, որին պետք է հետևեն նաև համալիր՝ տեղեկատվական, վարչակառավարչական, կազմակերպչական, նյութատեխնիկական բնույթի միջոցառումներ:

Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ խոշորամասշտաբ վերափոխումների փուլում գտնվող վերոհիշյալ պետություններում տեսանելի ապագայում անվտանգության համակարգերն այնուամենայնիվ որոշակի հումանիստական ուղղվածություն կստանան, որը նաև բարերար ազդեցություն կունենա այդ երկրներում հասարակական լարվածության թուլացման վրա: Համենայն դեպս, նախկին սկզբունքներով ձևավորված համակարգերն այլևս ի զորու չեն ապահովելու այդ երկրների ազգային շահերի պաշտպանվածությունը, ինչն անխուսափելի է դարձնում անվտանգության համակարգերի համապատասխանեցումը նրանց հասարակությունների արդի պահանջմունքներին: Իսկ այդ պահանջմունքների մեջ, անկասկած, առաջին պլանում է մնում մարդու կենսական շահերի, իրավունքների ու ազատությունների նվազագույն ապահովվածությունը:

Հոդվածի ներկայացման պարեթիվը՝ 10.05.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն ընդունված 05.07.1995թ. (փոփոխություններով և լրացումներով առ 27.11.2005թ.). ՀՀ պաշտոնական տեղեկագիր. Հատուկ թողարկում, 05.02.2005 թ.
2. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն. Հաստատված է ՀՀ Նախագահի 07.02.2007թ. հրամանագրով. «Հայկական բանակ». Երևան, 2007թ.
3. Закон РФ «О безопасности» от 05.03.1992 г. № 2446-I // Собрание актов Президента и Правительства РФ, №52. Москва, 1993; Изд. «Ось-89». М., 2007.
4. Стратегия национальной безопасности Российской Федерации до 2020 г. / Информационный сборник Фонда национальной и международной безопасности. № 1-12, Москва, 2000.
5. Послание Президента РФ Федеральному Собранию «О национальной безопасности» / Независимая газета от 14.06.1996.
6. **Ս. Մ. Հակոբյան,** Փիլիսոփայության տեսություն և պատմություն / Փիլիսոփայության միասնական դասընթաց ԲՈՒՀ-երի ուսանողների համար. Հեղ. հրատ. Երևան, 2007 թ.
7. **Հ. Գ. Ճաքարյան,** Փիլիսոփայություն. Ուսումնական ձեռնարկ. ԵՊՀ հրատ. Երևան, 2005 թ.
8. **Ս. Ա. Ջաքարյան,** Փիլիսոփայության պատմություն. Ուսումնական ձեռնարկ ԲՈՒՀ-երի հումանիտար ֆակուլտետների համար (երկրորդ հրատարակություն). «Նոյյան Տապան» հրատ. Երևան, 2005 թ.
9. **Воронов А. А.** Основы нацинальной безопасности. Научно-практическое пособие. Общая часть. Изд. «Ягуар». М., 2000.
10. http://intelligence.senate.gov/nsaact1947.pdf
11. http://whitehouse.gov/sites/default/files/rssviewer/national_security_strategy. pdf.
12. http://www.arlis.am

ЧЕЛОВЕКОЦЕНТРИЧНАЯ БЕЗОПАСНОСТЬ

КИНАКЦЯН АРМЕН

Начальник научно-учебного центра службы национальной безопасности РА, кандидат юридических наук

Сегодня на глазах всего человечества разваливаются некоторые арабские режимы Северной Африки и прилегающих регионов, которые ранее считались непоколебимыми. Более того, прогнозируются революционные процессы не только в соседних с ними государствах, но и в других странах, находящихся вне региона. Проводятся многочисленные исследования относительно причин этих событий и сопутствующих обстоятельств, привязывая их к геополитическим, экономическим, этническим, религиозным, информационным и многим другим факторам.

Обосновано, в частности, что одной из главных причин возникновения такой ситуации является то, что система безопасности в указанных странах никогда не носила человекоцентричный характер.

В работе рассмотрен процесс изменений в восприятии значения безопасности в сложившихся условиях с государственно–правовой точки зрения. Дано понятие человекоцентричной безопасности.

Дата представления статьи 10.05.2012г.

PEOPLE–CENTRIC SECURITY

ARMEN KINAKTSYAN

Chief of the Scientific–Educational Center of SNS of RA, candidate of legal sciences

Nowadays, in the eyes of humanity some Arabic regimes of Northern African and adjacent regions are collapsing, meanwhile, they are considered to be steadfast in the early past. Moreover, revolution processes are foreseen not only in neighboring countries but also in other out of region countries. It has been done many researches concerning the reasons and favourable conditions of these events which relate them to geopolitical, economic, ethnic, religious, informational and many other factors.

It is founded, particularly, that one of major reasons of the arise of such situation is that the system of security in the above mentioned countries has never beared people–centric character.

Research has studied the process of changes in the sense of the importance of security in the formulated circumstances from the aspect of state legality. The conception of people–centric security has been given.

Article submission date 10.05.2012

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր

ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ասպիրանտ

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՃՅԱՆԻ ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ. ՏՐԱՆՍԿՐԻՊՑԻԱՆԵՐ «ԶԵՄԻՐԵ» ՕՊԵՐԱՅԻՑ

ՀՏԴ 78

Հոդվածն անդրադառնում է հայ մեծանուն կոմպոզիտոր Տիգրան Չուխաճյանի երաժշտության առավել քիչ ուսումնասիրված, սակայն պատմական նշանակություն ունեցող էջին՝ դաշնամուրային երաժշտությանը, մասնավորապես իր օպերաների թեմաներով կատարված տրանսկրիպցիաներին՝ «Զեմիրե» օպերայից: Հոդվածում տեղ են գտել նաև ուշագրավ տեղեկություններ օպերայի ստեղծման և կատարման վերաբերյալ: Այնուհետև ներկայացվում է երեք տրանսկրիպցիաների մանրամասն վերլուծությունը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ դաշնամուրային ստեղծագործություն, տրանսկրիպցիա, Արաբական պար, «Զեմիրե» օպերա, ինտոնացիոն ոլորտ, թեմատիկ մոտիվ, դինամիկ կոնտրաստ, սեկվենցիոն շարժում, ֆակտուրային հնարներ, հիմնական երաժշտական նյութ, պիեսի տոնայնական կառուցվածք, կոդա:

Բացառիկ է Տիգրան Չուխաճյանի դերը հայ երաժշտության պատմության մեջ: Հայ երաժշտական թատրոնի հիմնադիրը միաժամանակ առաջինն է հայ դաշնամուրային երաժշտության բնագավառում[1]: Եվ դա պատահական չէր. դաշնամուրն ուղեկցել է Չուխաճյանին իր ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում՝ առաջին իսկ քայլերից: Հայտնի է, որ նա իր հենց դաշնամուրի և տեսական առարկաների ուսուցիչ, իտալացի պոլսաբնակ մանկավարժ Մանձոնիի խորհրդով և հանձնարարականով է մեկնել Իտալիա՝ մասնագիտական երաժշտական կրթություն ստանալու նպատակով: Իր ողջ կյանքում Չուխաճյանը հանդես է եկել որպես մանկավարժ՝ դաշնամուրի դասեր տալով ապահովել իր ընտանիքի գոյությունը, որպես համերգային կատարող–դաշնակահար ծավալել է համերգային գործունեություն և գրել դաշնամուրի համար հայ իրականության մեջ անդրանիկ opus–ները, որոնք մինչ օրս առանձին ուսումնասիրության չեն արժանացել: Ի դեպ՝ կոմպոզիտորի «դաշնամուրային գործերի շարքում երկուսը ներկայացնում են նոր շրջանի թուրքական մասնագիտացուած նուագական երաժշտութեան անդրանիկ նմոյշները: Վերնագրուած են՝ «Fantaisies orientale sur des motifs turc» (N 1, N 2)»[2]:

Չուխաճյանի դաշնամուրային ժառանգությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օրիգինալ ստեղծագործություններ դաշնամուրի համար և փոխադրումներ օպերաներից:

Օրիգինալ ստեղծագործությունների մեջ մեծ տեղ են զբաղեցնում հիմնականում սալոնային կատարման համար նախատեսված կոնցերտային բնույթի պարային պիեսները՝ վալս, մազուրկա,

---

[1] Տես Ափոյան Շ., Հայկական դաշնամուրային արվեստի պատմություն. 1850–1920, Երևան, 2006, էջ 21:

[2] Թահմիզեան Ն., Տիգրան Չուխաճեան. կեանքը եւ ստեղծագործութիւնը, Փասատենա, 1999, էջ 127:

պոլկա, գավոտ, կադրիլ, տարանտելլա: Առավել վիրտուոզ բնույթի երկեր են ֆանտազիաները, «Քնար արևելյան» կապրիսը, «Քուզի ջրվեժը» էքսպրոմտը, «Անընդհատ շարժում»-ը: Չուխաճյանն անդրադարձել է նաև ֆուգայի ժանրին, գրել 4 ֆուգա:

Դաշնամուրային տրանսկրիպցիաներն են երեք համարներ «Արիֆից», «Զեմիրե» օպերայից «Էբուդիա և Զեմիրե» արաբական մեծ բալետը, երկրորդ արաբական բալետը և «Zemireh–quadrille»–ը, «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» օպերայից «Մեծ վալսը» և «Պոպուրին»:

Ինչպես նշում է Շ.Ափոյանը՝ իր տրանսկրիպցիաներն ու ֆանտազիաները կոմպոզիտորը գրել է Լիստի, Տալբերգի ռոմանտիկական դաշնամուրային երաժշտության ազդեցության ներքո: Ֆանտազիաները կառուցված են կոմպոզիտորի երաժշտա–թատերական ստեղծագործությունների, ինչպես նաև թուրքական, արաբական, պարսկական թեմաների վրա: Օր. «Մեծ վալսը» գրված է «Լեբլեբիջի» օպերետի թեմայի հիման վրա, Կոստանդնուպոլսի հայերի կենցաղի մասին: «Զեմիրե» օպերայի ֆրանսիական և արաբական թեմաներն օգտագործվել են սյուիտի ձևում «Զեմիրե–կադրիլ» անվանմամբ, որը բաղկացած է վեց ծրագրային պիեսներից[1]:

Ներկա հոդվածում կանդրադառնանք «Զեմիրե» կոմիկական օպերայից տրանսկրիպցիաներին:

«Զեմիրեն[2]»՝ Տ.Չուխաճյանի կարապի երգը, հայկական առաջին հեքիաթ-

[1] Апоян Ш. Фортепианная музыка Советской Армении, Ереван, 1968, ст.17.

[2] Առաջին գործողություն: Էբուդիան անտառի առվակը դարձնում է աստվածային սիրային ըմպելիք, որը խմում է Էլսանթուրն ու սիրո ըմպելիքի ազդեցությամբ, սիրահարվում է Զեմիրեին, հարցուփորձ անում, ցանկանում իմանալ, թե ով է նա, բայց՝ ապարդյուն: Բայց նույն ջրից խմած Զեմիրեն նույնպես անտարբեր չէ Էլզանթուրի հանդեպ և ի նշան սիրո՝ աղջիկը երիտասարդին է նվիրում իր մատանին և ասում. «Վերցրեք և պահպանեք որպես հիշողություն իմ մասին»: Էլսանուրը հուսահատ է. ո՞վ կարող է իրեն օգնել, ո՞վ կարող է իրեն նորից հանդիպեցնել Զեմիրեի հետ: Նա որոշում է ուղևորվել Կումանխարա. չէ՞ որ մեծ հրաշագործ Էբուդիային են պատկանում այս աղբյուրի ջրերը: Երկրորդ գործողությունը պատկերում է Էբուդիայի քարանձավը: Հայտնվում են Զեմիրեն ու Ռեբիան. նրանք աղերսում են Հրաշագործին՝ օգնել իրենց: «Մենք եկել ենք Ձեզ մոտ հավատով, Դուք եք մեր փրկությունն ու հույսը, մենք հավատում ենք Ձեզ, մխիթարեք մեզ»– խնդրում է Ռեբիան: Էբուդիան խոստանում է ամեն ինչ կարգավորել: «Զեմիրեն երջանիկ կլինի: Մի վախեցեք ոչնչից, Ձեր ցանկությունները շուտով կիրականանան»–հավաստիացնում է Հրաշագործը: Հայտնելով իրենց երախտագիտությունը՝ կանայք հեռանում են, իսկ Էբուդիան ձեռնամուխ է լինում իր խնդիրների իրականացմանը: Էբուդիան ունի գերագույն իշխանություն: Հրաշագործը հատկապես հետաքրքրվում է սիրահարներով, օգնում նրանց գտնել իրենց երջանկությունը: Գալիս են Էլսանթուրն ու Աթալմուկը: Երիտասարդը օգնություն է հայցում Հրաշագործից. նա սիրում է մի աղջկա, ում անունն անգամ իրեն անհայտ է: Սակայն իր մոտ է նրա մատանին: Էբուդիան անմիջապես կռահում է, որ խոսքը Զեմիրեի մասին է: Նա Էլսանթուրից վերցնում է մատանին, կախարդում է և վերադարձնում երիտասարդին՝ որպես թալիսման. այսուհետ մատանին ուղի ցույց կտա Էլսանթուրին, կօգնի հաղթահարել սպասվող հնարավոր բոլոր խոչընդոտները, և նրա բոլոր ցանկությունները կիրականանան: Այնուհետև Հրաշագործը շարժում է ձեռքը՝ հայտնվում է Զեմիրեի պատկերը: «Ես տենչում եմ ապրել ու մեռնել որպես քո ցանկությունների խոնարհ ծառա, իմ աստվածային հրեշտակ»–խոստովանում է սիրահարված երիտասարդը: Զեմիրեի պատկերն՝ անհետանում է: «Ցնծա, դառնությունն անցավ: Ձեր սիրահար սրտերին օգնելու համար ես անձամբ կգամ՝ քեզ և քո սիրեցյալին երջանկացնելու նպատակով»–հավաստիացնում է Հրաշագործը: Հեռանալուց առաջ Էլսանթուրը հայտնում է իր անսահման երախտագիտությունը. «ինձ հետ միասին իմ բոլոր բարեկամները ծնկաչոք կօրհնեն քո անունը»: Երրորդ գործողությունը ներկայացնում է Զեմիրեի հոր՝ Բենեզարի ապարանքը: Զեմիրեն անդադար հիշում է Էլսանթուրին, իրենց առաջին ու միակ հանդիպումը Չայ–Բաշի անտառում: Զեմիրեի դառը մտորումներն ընդհատում է վերջինիս մտերմուհին՝ Սուհայլեն: Նա տեղեկացնում է, որ այդ օրը Բենեզարի որոշմամբ նա պիտի ամուսնանա. տանն արդեն ավարտին են մոտենում հարսանյաց ճոխ հանդեսի պատրաստությունները: Զեմիրեն ցնցված է՝ հայրն իրեն այդ մասին դեռևս ոչինչ չի ասել: Ներս է մտնում Բենեզարը, և ամեն ինչ պարզվում է: Հայրը բացատրում է դստերը, որ նա արդեն 17 տարեկան է, իսկ այդ տարիքում նա պիտի ամուսնացած լինի: Բենեզարն ընտրել է ամուսին, որն իր հարստությամբ ու ազնվազարմությամբ արժանի է բարեկամա-

օպերան է, որի լիբրետոյի հեղինակն է թատերական գործիչ, հուշարար, թատերագիր, թարգմանիչ **Տիգրան Գալեմճյանը**[1] (1844–1920): «Զեմիրեի» թատերատեքստը Տ.Գալեմճյանի թուրքերեն միակ opus–ն է, որը ֆրանսերեն (հետագայում՝ իտալերեն) է թարգմանել հայ լրագրող, «Figaro»–ի աշխատակից, փարիզաբնակ Պետրոս Անմեղյանը:

1889–1890–ին պատրաստ օպերան 1890–ի վերջին և 1891–ի սկզբին Կ.Պոլսում ներկայացվում է ինն անգամ: Ոգևորված օպերայի հաջողությունից՝ «Զեմիրեն» Փարիզում բեմադրելու մտադրությամբ 1891–ի ապրիլին Չուխաճյանը մեկնում է Ֆրանսիա: Այստեղ էլ բեմադրության ֆինանսական օժանդակությունը ստանձնած ֆրանսահայ մեծահարուստ Գ.Էգնայանի անժամանակ մահով ձախողվում է օպերայի փարիզյան բեմադրությունը[2]: Կոմպոզիտորը վերադառնում է Կ.Պոլիս: 1894–ին «Զեմիրեն» բեմադրվում է Ֆրանձինիի իտալական խմբի ջանքերով՝ Կ.Պոլսի Նոր Ֆրանսիական թատրոնում: Դրանով եզրափակվում է «Զեմիրեի» բեմական ճակատագրի պոլսական շրջանը:

Հաջորդը երևանյանն էր. 1966–ին Երևանում ստեղծվում է Հայաստանի հեռուստառադիոպետկոմի սիմֆոնիկ նվագախումբը, որը ղեկավարելու համար Սարատովից հրավիրվում է Յուրի Դավթյանը: «Եվ ահա նորաստեղծ նվագախմբի անդրանիկ ձայնագրությունն էլ հենց լինում է «Զեմիրեի» ձայնագրությունը, որն իրականացվում է Գեորգի Տիգրանովի, Յուրի Դավթյանի և Վլադիլեն Բալյանի նախաձեռնությամբ: Օպերայի արխիվային ձեռագրերի հիման վրա Վահրամ Դարբասյանը լիբրետոն իտալերենից ու ֆրանսերենից թարգմա-

նալ իրենց ընտանիքի հետ: Զեմիրեն խնդրում է հորը, որպեսզի նա համաձայնվի հետաձգել հարսանիքը, քանի որ ինքը փեսացուին չի ճանաչում, չի սիրում: Հայրը զարմանում է՝ միթե դա կարևոր է: Համոզվելով, որ իր խնդրանքներն ու աղերսանքները զուր են, Զեմիրեն հակաճառում է հորը, և կատաղած Բենեզարը հրամայում է, որ դուստրը հնազանդվի իր կամքին, քանի որ տան տերն ինքն է: Զայրացած Բենեզարը հեռանում է: Զեմիրեն անսփոփ է, նա անդադար արտասվում է, նրա տառապանքները վերջ չեն ունենա: Եվ այդ պահին ներս է մտնում Էլսանթուրը: Զեմիրեն չի հավատում աչքերին. ինչպե՞ս է նա գտել իրեն: Պարզվում է՝ իր իսկ մատանու օգնությամբ, որը դարձել է թանկարժեք թալիսման. դրա միջոցով էլ երիտասարդը հաղթահարել է բոլոր խոչընդոտները: Նրա գալն ուշացրել են լոկ պատահականությունները: Զեմիրեն տեղեկացնում է, որ այդ օրը նշանակված է իր հարսանիքը: Էլսանթուրն առաջարկում է մինչև Էբուդիայի գալուստը հեռանալ Բենեզարի տնից: Ներս է մտնում Սուհայլեն, և հնարամիտ Զեմիրեն ներկայացնում է իրենց փրկության սեփական տարբերակը: Սուհայլեն կգնա պարտեզ և կբացի դեպի դաշտը տանող դուռը, այնուհետև կգնա Զեմիրեի սենյակը, կհագնի նրա համար նախատեսված հարսանյաց զգեստը, սովորության համաձայն կծածկի դեմքը, կզարդարվի Զեմիրեի թանկարժեք զարդերով և կմասնակցի հարսանյաց հանդեսին վերջինիս փոխարեն: Չորրորդ գործողություն: Բենեզարի այգում նստած են Ռեբիան, Սուհայլեն (որպես Զեմիրե), հյուրերը: Ռեբիան առաջարկում է ամուսնուն գրկել ու օրհնել դստերը, քանի որ հյուրերն արդեն հավաքվել են: Բենեզարը բարձրացնում է Սուհայլեի քողը և քար կտրում: «Անարժան ու անհնազանդ աղջիկ»–բղավում է Բենեզարը և վրդովվում. «Իսկ ու՞ր է իմ դուստրը»: Այդ պահին կայծակն ու ամպրոպն ավետում են Էբուդիայի գալստյան մասին: Հրաշագործը մեղմում է խաբված հոր վրդովմունքը, հավատացնում, որ Զեմիրեի սիրեցյալն արժանի է աղջկան: Երիտասարդներն սպասում են, որ Բենեզարի ձեռքը միացնի իրենց: Էբուդիան Բենեզարին կոչ է անում ջերմ ընդունելություն ցույց տալ նրանց: «Սա՛ է իմ կամքը: Ես ասում եմ, ես հրամայում եմ: Կատարե՛ք»–պահանջում է Հրաշագործը: «Ձեր բոլոր հրամանները սրբազան են, մենք կկատարենք ինչ որ հրամայեք»–պատասխանում է Բենեզարը: Ներս են մտնում Զեմիրեն, Էլսանթուրն ու Աթալմուկը: Բոլոր ներկաները ողջունում են Զեմիրեին: Զեմիրեն ներում է հայցում հորից: Բենեզարը ներում է դստերն ու օրհնում սիրահարներին. շարունակվում է հարսանյաց հանդեսը (Տե՛ս Ասատրյան Ա., «Զեմիրե». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը, Երևան, 2009, էջ 76–80: «Զեմիրե», լիբրետո, ռուսերեն, ձեռագիր 34 թերթ, ԳԱԹ, Տ.Չուխաճյանի դիվան N 140):

[1] Տ.Գալեմճյանի մասին տե՛ս Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հատոր Ա, Երևան, 1973, էջ 215, Պեշիկթաշլեան Ն., Թատերական դէմքեր, Անթիլիաս, 1969, էջ 1113: Ասատրյան Ա., Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Երևան, 2011, էջ 384–389:

[2] «Զեմիրեի» բեմական ճակատագրի մասին տե՛ս Ասատրյան Ա., Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, էջ 390–396:

նում է հայերեն, որից հետո Վահան Հարությունյանը դա վեր է ածում չափածո տեքստի: Բորիս Սակիլարին ստեղծում է նոր գործիքավորում: Ներգրավվում են Հայաստանի առաջատար երգիչները՝ Գոհար Գասպարյանը, Նար Հովհաննիսյանը, Միհրան Երկաթը, Արշավիր Կարապետյանը, Տիգրան Լևոնյանը, Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի երգչախումբը (խմբավար՝ Ռուբեն Այվազյան): «Զեմիրեի» գրեթե 3/4–ը ընդգրկող ձայնագրությունը ճանաչվում է տարվա լավագույն ձայնագրություն ու արժանանում Խորհրդային Միության Համամիութենական ռադիոյի մրցանակին: Հետագայում ձայնագրության հիման վրա ստեղծվում է ռադիոմոնտաժ, որը տասնամյակներ շարունակ հեռարձակվում էր Մոսկվայի ու Երևանի ձայնասփյուռներով: Ոգևորված օպերայի հաջողությունից՝ կատարված ձայնագրությունը ներկայացվում է Երևանի օպերային թատրոնում, թատերական գործիչների միությունում և Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում և, բնականաբար, որոշվում է բեմադրել օպերային մայր թատրոնում»[1]: Բայց «Զեմիրեն» Երևանում այդպես էլ բեմ չի բարձրանում:

«Զեմիրեի» բեմական կենսագրության երրորդ՝ ամերիկյան, էջը գրվեց 2008–ի մայիսի 30–ին, 31–ին և հունիսի 1–ին, Փասադենայում, Վաչե Պարսումյանի նախաձեռնությամբ ու ջանքերով:

Երաժշտագիտության մեջ տարածված տեսակետի համաձայն՝ «Զեմիրե»–ի հիմքում արաբական հեքիաթն է. «այն յօրինուած է ըստ արաբական հեքիաթի, որն հեղինակին հնարավորութիւն է տուել անկաշկանդ կերպով դրսեւորելու վիպապաշտական ներքին ձգտումները, եւ նուրբ ձայներանգներով բանաստեղծականացնելու սիրոյ մասին սրտառուչ մի պատմություն»[2]: Սակայն ըստ Ա.Ասատրյանի՝ արաբական հեքիաթների մեջ «Զեմիրե»–ն կամ նրա բովանդակությանը մոտ հեքիաթ չի գտնվել[3]: Մենք ևս առավել հակված ենք կոմպոզիտորի մոտեցմանը. նա իր օպերան անվանել է «Արևելյան լեգենդ»[4]:

Օպերան, որի իրադարձությունները ծավալվում են 15–րդ դարի վերջերին, Արաբիայում, բաղկացած է չորս գործողությունից՝ 22 համարից[5]:

«Զեմիրեից» մեզ հասած դաշնամուրային տրանսկրիպցիաները երեքն են[6]՝

1. Ebudiat et Ze´mire´, Grand Ballet Arabe – Էբուդիա և Զեմիրե. Մեծ արաբական պար

2. Ebudiat et Ze´mire´, 2e´me Ballet Arabe – Երկրորդ արաբական բալետ

3. Ze´mireh–quadrille, Sur les motifs de l'ope´ra comique et fe´erique – Զեմիրե-կադրիլ:

«Մեծ արաբական պարը»[7] ըստ Հ.Ավագյանի, տպագրվել է 1888 թվականին[8]: Հրատարակության առիթով «Արևելքը» գրել է. «Երաժշտապետ Տ.Չուհաճեան էֆ. նոր գործ մը հրատարակած է սոյն անուամբ: Եղանակաց շար մը որոց արաբական նկարագիրն ամբողջ երկին մասնաւոր հրապոյր մը կու տայ: Արեւելեան այս ոճը կը յարմարի նա մանավանդ

[1] Ա. Ասատրյան, «Զեմիրե». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը, Երևան, 2009, էջ 18:

[2] Ն. Թահմիզեան, Տիգրան Չուխաճեան. կեանքը եւ ստեղծագործութիւնը, էջ 162:

[3] Ա. Ասատրյան, «Զեմիրե». Տիգրան Չուխաճյանի կարապի երգը, էջ 12–13:

[4] ԳԱԹ, Տ. Չուխաճյանի դիվան N 20, «Զեմիրե», ձեռագիր կլավիրի տիտղոսաթերթ:

[5] «Զեմիրե» օպերայի վերլուծությունը տես Ա. Ասատրյան, Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, էջ 397–449:

[6] Տես Տիգրան Չուհաճեան, Ստեղծագործութիւններ դաշնակի համար, Խմբագրութիւն՝ Հայկ Ավագեան, Գահիրէ, 2005, էջ 145–155:

[7] Տես Չուխաճյան Տ., "Ballet Arabe" «Զեմիրե» օպերայից, դաշնամուրի համար, Կոստանդնուպոլիս, տպագիր 4 թերթ, ԳԱԹ, Տ.Չուխաճյանի դիվան N 177: Tchouhadjian D. Ebudiat et Ze´mire´, Grand Ballet Arabe, Տիգրան Չուհաճեան, Ստեղծագործութիւններ դաշնակի համար, էջ 156–162:

[8] Տիգրան Չուհաճեան, Ստեղծագործութիւններ դաշնակի համար, էջ XXI:

պալլէներու. գիտենք թէ Վէրտի առիթ մը չէ կորուսած եգիպտական աւաչներով իր *Աիտան* պճնազարդել: Առաջին անգամ չէ որ Չուհաճեան էֆ. սոյն ոճով կը գրէ: Ունեցած ենք արդէն իրմէ ուրիշ արտադրութիւններ, մին միւսէն գերազանց, եւ այն՝ զոր ի լոյս կ'ընծայէ ուրիշ բան չէ բայց եթէ իր *Էպուտիաթ եւ Զեմիրէ* անուն օբէրայէն առնուած մի շատ սիրուն թերթ ամենասիրուններուն մէջ: Ով որ զինքը տեսած է իր դաշնամուրին առջեւ յօրինած ատեն այդ չքնաղ գուսաներգութիւնը, չպիտի կարենայ երբեք մոռնալ ի՛նչ խնամօք, ինչ գիտնական մտահոգութեամբ հայ երաժիշտներիս կը չարչրէր ու կը չարչրէր իր հնչեղ գործին հպատակեցնելու համար զայն իր գաղափարականին, զի պէտք է խոստովանիլ, ինչպէս ամէն արուեստագէտ որ անձնաւորութիւն մըն է, Չուհաճեան ալ ունի իւրը»[1]:

«Մեծ արաբական պարը» «Զեմիրե» օպերայի չորրորդ գործողությունից N 20 տեսարանից «Արաբական բալետն» է: Տեսարանն իր կառուցվածքով ռոնդո է և ունի հետևյալ սխեման.

A+B+A+C+Coda(A)

Ռոնդո ձևն առավելագույնս համապատասխանում է բալետային մեծ տեսարանի էությանը: Այն թույլ է տալիս ստեղծել բազմապլան պարային էպիզոդներ:

Տեսարանն սկսվում է փոքրիկ՝ ութ տակտանի նախաբանով, որը նախապատրաստում է գլխավոր երաժշտական նյութի՝ ռեֆրենի մուտքը:

Ռեֆրենի մեղեդային գիծն աչքի է ընկնում իր հուզականությամբ, այն նրբագեղ է ու քնքուշ, ավելի անձնական ու ինքնամփոփ:

Սա հիշեցնում է արևելյան կնոջ հեզաճկուն պար: Սկսվում է թեման P շտրիխով և աստիճանաբար զարգանալով՝ դուրս է գալիս անձնական ոլորտից և հանգեցնում է բալետային մեծ տեսարանի, որտեղ երաժշտության վառ արտահայտչականության շնորհիվ աչքի առաջ հառնում է աշխույժ, մարդաշատ բալետային տեսարան D–dur տոնայնության մեջ: «Երաժշտությունը թևակոխում է արևելյան պարի տարերքը. շռայլ՝ ռիթմական տեսակետից և հարուստ՝ կերպարայնության ճկունությամբ: Սրանում իշխում է նվագախմբային գույների «թափանցիկությունը» և բացակայում որևէ ծանրաբեռնում՝ երաժշտական կտավում չկա ոչ մի ավելորդություն: Նվագախմբային գույների նուրբ խաղի միջոցով Չուխաճյանը նորովի է լուսաբանում բալետի՝ իրար հաջորդող էպիզոդներից յուրաքանչյուրը: Ռոնդոյի ձևում գրված բալետի երաժշտությունը լի է առույգությամբ, սրընթաց է ու դինամիկ, ծավալվում է մեկ շնչով: Ռեֆրենը՝ շնորհիվ տոնիկական ձայնառության անփոփոխ ֆոնի և տրելների առատության, ստանում է տիպիկ արևելյան երանգ, իսկ առաջին դրվագում համադրելով զուգահեռ տոնայնություններն ու ff և pp դինամիկ նշանները Չուխաճյանն ստեղծում է լույսի ու ստվերի էֆեկտ»[2]:

Առաջին էպիզոդի ինտոնացիոն ոլորտը կոմպոզիտորը կառուցում է կվարտա ինտերվալի վրա, որը մինչ այդ արդեն օգտագործել էր մասի փոքրիկ նախաբանում: Առհասարակ ամբողջ տեսարանի թեմաների ինտոնացիոն հիմքը կազմում են տերցիա և կվարտա ինտերվալները:

Առաջին էպիզոդին հաջորդում է ռեֆրենի երկրորդ անցկացումը նույնությամբ, այնուհետև անցում է կատարվում դեպի երկրորդ էպիզոդ՝ C, որը շարադրվում է համանուն (G–dur) տոնայնության մեջ: Սա առավել խոշոր հատվածն է, որը կարծես միջին մասի դեր է կատարում: Թեմատիկ մոտիվը հիմնվում է տերցիա ինտերվալի դեպի վեր և վար թռիչքների վրա: Հավատարիմ մնալով դինամիկ կոնտրաստի ստեղծման սկզբունքին,

[1] Նույն տեղում:

[2] Ա. Ասատրյան, «Զեմիրե» Տիգրան Չուխաճյանի կարապի երգը, էջ 64–65:

այս էպիզոդը նո ունի հարուստ դինամիկ և կերպարային ոլորտ: Կատարվող մոդուլյացիայից հետո (B–dur) թեման տեղափոխվում է բասային ռեգիստր և վերականգնվում է կվարտային ինտոնացիոն հիմքը, այս անգամ թռիչքների հակառակ՝ վարից վեր ուղղությամբ: Չուխաճյանի գրչին բնորոշ սեկվենցիոն շարժումներով հատվածը շարունակվում է՝ հարստանալով ռիթմական նոր հնարներով: Ի հայտ է գալիս նոր թեմատիկ կորիզ, բասում հայտնվում է նվագակցող պունկտիրային շարժում, և դրա շնորհիվ ավելի արտահայտիչ է դառնում երաժշտության պարային սկիզբը: Վարընթաց սեկվենցիոն շարժումը բերում է երաժշտությունը դեպի հիմնական՝ D–dur տոնայնություն և անցում է կատարվում դեպի Coda: Coda–ում շարադրվում է ռեֆրենը, որը հենվելով նախորդ էպիզոդների ֆակտուրային հնարների կիրառման, տևողությունների կրճատման վրա, ընդարձակվում է և սրընթաց պասաժների շնորհիվ ստանալով սրընթաց բնույթ, եզրափակում է հատվածը հզոր ակորդային հնչողություններով:

«Երկրորդ արաբական պարում»[1] կոմպոզիտորը ստեղծել է զվարթ, պարային տրամադրություն ամբողջ ընթացքում, ի տարբերություն «Մեծ արաբական պարի», որի ռեֆրենում տեսանելի է անձնական հույզերի, ապրումների արտահայտումը:

Ստեղծագործությունը տոնայնապես ավելի կայուն է, ինչն օգնում է այն ավելի ամբողջական ընկալելուն: Միայն Trio–ում անցում է կատարվում դեպի սուբդոմինանտային As–dur տոնայնություն: Թե՛ «Մեծ արաբական պարը» և թե՛ «Երկրորդ արաբական պարը» կառուցվածքով նման են միմյանց:

Սա նույնպես ռոնդո ձև է և ունի փոքրիկ չորս տակտանի նախաբան, որը նախապատրաստում է հիմնական երաժշտական նյութի մուտքը: Ըստ երևույթին՝ Չուխաճյանն պիեսները նախաբանով սկսելով, նպատակ է հետապնդել հիմնական երաժշտական նյութը դարձնել ավելի ընդգծված և արտահայտիչ: Փոքրիկ նախաբանի շնորհիվ ունկնդիրն արդեն համակվում է համապատասխան տրամադրությամբ և հետագա շարադրանքի սպասումով: Հիմնական թեման՝ ռեֆրենն աչքի է ընկնում պարային, զվարթ տրամադրությամբ: Թեմային առանձնակի գրավչություն են հաղորդում նաև տակտի թույլ մասի վրա ընկնող շեշտերը, որոնց միջոցով ակնհայտ է դառնում երաժշտության պարային բնույթը: Բավական հագեցած է նվագակցությունը: Առկա են և՛ ակորդներ, և՛ փոքրիկ մեղեդային անցկացումներ, և՛ ինտերվալային շարժումներ: Այն դուրս է գալիս զուտ նվագակցության ֆունկցիայից և հավասարապես լրացնում է մեղեդային գիծը:

Միջին մասը՝ Trio–ն, նախ և առաջ առանձնանում է տոնայնության փոփոխությամբ և ի հայտ է բերում նոր մեղեդային գիծ՝ թեմա, որը սկզբում շարադրվում է բասում ben marcato il basso նշումով, այնուհետև շարունակվում է վերին ռեգիստրում՝ բերելով նոր տոնայնական շեղում c–moll:

Դրան հաջորդում են խրոխտ, պունկտիրային կոչերը բասում, որոնց հետևում է PP պատասխանը վերին ռեգիստրում: Երկրորդ կոչական նախադասությունը բերում է հանդիսավոր տրամադրություն և կապ է ստեղծում հաջորդող նյութի հետ: Շարունակվում են դինամիկ կոնտրաստները, վերականգնվում է երաժշտության պարային բնույթը և Trio–ի ավարտին բասում նորից հնչում է թեման՝ առաջնորդելով դեպի Coda:

Coda–ն, ինչպես և «Մեծ արաբական բալետում» հիմնական երաժշտական նյութի շարադրումն է, որը փոքրիկ եզրափակիչ կտորով և ակորդների ու շեշտերի շնորհիվ հաստատում է հիմնական տոնայնությունը:

Ստեղծագործությունը Չուխաճյանն ավարտում է տոնայնության մեղմ P հնչողությամբ և հաստատմամբ:

[1] Տես Tchouhadjian D. Ebudiat et Ze´mire´, 2e´me Ballet Arabe, Տիգրան Չուհաճեան, Ստեղծագործութիւններ դաշնակի համար, էջ 163–168:

Այն, որ այս պարը դուրս է մնացել օպերայից, մեզ թույլ է տալիս ենթադրել, որ Չուխաճյանը նպատակ է ունեցել ստեղծել արաբական պար՝ իրեն բնորոշ արևելյան կոլորիտով համեմված, իսկ այս պարն աչքի է ընկնում հստակ արտահայտված արևմտյան երաժշտությամբ, կոմպոզիտորն այստեղ որոշակի հակասություն գտնելով անվանման և երաժշտության միջև, այն բաց է թողել օպերայի հետագա տարբերակներում: Այժմ ունկնդիրներն ու երաժիշտները հնարավորություն ունեն այս պարին ծանոթանալու միայն դաշնամուրային տրանսկրիպցիայի տեսքով:

«Զեմիրե–կադրիլը»[1]՝ գրված «Զեմիրե» օպերայի մոտիվների հիման վրա (այդ է վկայում ստեղծագործության ենթավերնագրում տեղ գտած Sur les motifs de l'ope´ra comique et fe´erique Ze´mireh նշումը), բաղկացած է վեց ոչ մեծ պարային տեսարաններից, վեց պատկեր–կերպարներից՝ Pantalon, E´te´, Poule, Tre´nis, Pastourelle և Finale: Ինչպես տեսնում ենք, հավատարիմ ռոմանտիկ երաժշտության ավանդույթներին, կոմպոզիտորն իր ցիկլ է ներմուծել ծրագրայնությունը՝ պիեսներից յուրաքանչյուրին տալով վերնագրեր:

Իսկ ինչու՞ է Չուխաճյանն այն անվանել կադրիլ: Կադրիլը, որը բառացի նշանակում է չորս հոգուց բաղկացած խումբ, եվրոպական մի շարք ժողովուրդների մոտ տարածված պար է, որը ենթադրում է քառակուսիներով դասավորված չորս զույգերի մասնակցություն: Չափը, որպես կանոն, 2/4, բաղկացած է 5–6 ֆիգուրից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր անվանումն ու ուղեկցվում է յուրահատուկ երաժշտությամբ: 17–րդ դարի վերջից մինչև 19–րդ դարի վերջը սալոնային ամենահանրահայտ պարերից էր[2]:

Սա փայլուն գաղափար էր, որը Չուխաճյանին հնարավորություն ընձեռեց սինթեզել և մի ստեղծագործության մեջ միահյուսել կադրիլը, ցիկլային կառուցվածքը և ծրագրայնությունը: Հավատարիմ մնալով կադրիլի եվրոպական ավանդույթներին և ձևակառուցմանը՝ Չուխաճյանն իրեն բնորոշ կոմպոզիտորական բարձր վարպետությամբ համադրել է այս մի քանի ժանրերին բնորոշ գծերը: Սա ցիկլ է, որն առանձնանում է կերպարների հարուստ ու բազմազան աշխարհով, մեղեդային գծերի առատությամբ, կառուցվածքի հստակությամբ: Այստեղ բացակայում են տեմպի և ստեղծագործության բնույթի վերաբերյալ կոմպոզիտորի նշումները: Նա կարծես ցանկանում է զարկ տալ կատարողի երևակայությանը, երաժշտական ճաշակին և անհատական մոտեցմանը:

Հիմնականում բոլոր համարները եռամաս կառուցվածքով ավարտուն փոքրիկ պիեսներ են, որտեղ գերիշխում են պարային, զվարթ տրամադրությունները:

1. Առաջին պիեսում՝ **«Pantalon»**, Չուխաճյանն օգտագործել է երեք թեմա՝ դրանց միջև ստեղծելով վառ կոնտրաստներ: Պանտալոնեն մեզ հայտնի կոմիկական, երգիծական պերսոնաժ է, որը ներկայանում է տարբեր կերպարներով, և երեք թեմաները հրաշալիորեն կատարում են այդ դերերը: Նրանք կարծես այս պերսոնաժի տարբեր դիմակները լինեն:

Առաջին թեման ստանձնում է հիմնական երաժշտական նյութի դերը՝ իրար կապելով բոլոր թեմաները: Այն հարուստ է դինամիկ և ազոգիկ նշաններով, ինչն օգնում է կերպարի բացահայտմանը: Թեման ունի զվարթ, երգիծական բնույթ, որին հակադրվում է արևելյան երանգով և հնչողությամբ հագեցած երկրորդ թեման: Այստեղ օգ-

[1] Տես Չուխաճյան Տ., "Zemireh Quadrille" դաշնամուրի համար, Լայպցիգ, տպագիր 4 թերթ, ԳԱԹ, Տ.Չուխաճյանի դիվան N 179: Tchouhadjian D. Ze´mireh–quadrille, Sur les motifs de l'ope´ra comique et fe´erique Ze´mireh, Տիգրան Չուհաճեան, Ստեղծագործութիւններ դաշնակի համար, էջ 169–175:

[2] Տես Музыкальный энциклопедический словарь, Москва, 1991, էջ 224:

տագործված է արևելյան երաժշտության բնորոշ մեծացրած սեկունդա ինտերվալը, իսկ բասում հնչում է դոմինանտային ձայնառությունը: Այս թեման ունի հոսուն, հեզաճկուն բնույթ: Թեև թեմաները ցուցադրվում են շատ կարճ, ութից–ինը տակտի ընթացքում, սակայն դա բավական է հակադիր կերպարները լիովին արտահայտելու համար: Պիեսի կառուցվածքն է. A–B–A–C–A:

Երրորդ թեման՝ Es–dur, անցնում է առաջինի զուգահեռ մաժորում և կարծես առաջինի շարունակությունն է: Ի դեպ, այս թեմայում Չուխաջյանն օգտագործել է «Զեմիրե» օպերայի առաջին գործողությունից N 5 տեսարանից կանանց խմբերգի երգամասը[1], որը շարադրված է A–dur–ում և, ի տարբերություն Կադրիլի, մոդուլյացիա չէր պարունակում:

Պիեսի տոնայնական կառուցվածքում ընդգրկված են c–moll–Es–dur–c–moll տոնայնությունները:

2. E՛te՛ (Ամառ) – Ելնելով անվանումից՝ սա վառ և գունագեղ բնապատկեր է, ամբողջովին պարային բնույթի մեղեդայնությամբ հագեցած: Պիեսի առաջին՝ G–Dur հատվածի համար նյութ է ծառայել «Զեմիրե» օպերայի N 5 տեսարանի սկզբնական նվագախմբային պարտիան, որն այնտեղ շարադրված է F–dur–ում և մոդուլացնող պարբերություն է (F–dur – C–dur)[2]: Նույն մոտիվի հատվածն օպերայում կար դեռևս N 4 տեսարանից Աթալմուկի կանցոնետայի նվագախմբային նվագակցության մեջ F–dur–ում[3]: Պիեսի այս բաժնում, ըստ էության ներկայացված է Աթալմուկը՝ «Զեմիրե» օպերայի կոմիկական սկզբի միակ կրողն է, կոմիկական միակ կերպարը:

Պիեսի միջին մասում կոմպոզիտորն օգտագործել է օպերայի չորրորդ գործողությունից N 20 տեսարանից «արաբական բալետի» B–dur էպիզոդը, որն օպերայում հնչել էր նաև չորրորդ գործողության ինտրոդուկցիայում՝ H–dur–ում: Իսկ պիեսում կոմպոզիտորն ընտրել է D–dur–ը: Ի տարբերություն պիեսի՝ օպերայում սա մոդուլացնող պարբերություն է՝ B–dur–F–dur: Օպերայի համեմատ պիեսում նվագակցության նվագամասում առկա են ֆակտուրային որոշակի փոփոխություններ:

Պիեսի տոնայնական կառուցվածքում ընդգրկված են G–dur–D–dur–G–dur տոնայնությունները:

3. Poule (Հավ) – Այս պիեսում ցիկլում առաջին և միակ անգամ երևան է գալիս չափի փոփոխություն, 2/4ը փոխարինվում է 6/8–ով:

Իր կառուցվածքով նման է առաջին համարին, նույնպես օգտագործված են երեք տարբեր թեմաներ և կրկին առաջին թեմային է վերապահված գլխավոր դերը ձևակառուցման մեջ: Օգտագործելով ստակատո շտրիխը և բախման երկրորդ ութերորդականի փոխարեն պաուզան, կոմպոզիտորն ստեղծել է թռչնին բնորոշ բնութագրական կերպար: Սրան հաջորդում է քնարական–երգային մինորային կտոր: Coda–ից հետո, որտեղ հնչում է գլխավոր թեման օկտավային կրկնապատկված հնչողությամբ, շարադրվում է նոր էպիզոդ B–dur տոնայնության մեջ, որից հետո գլխավոր թեմայի կրկնությամբ պիեսն ավարտվում է:

4. Tre՛nis (Արցունքներ) – Այս հատվածը կարծես իր վրա է վերցնում ցիկլի կենտրոնական հատվածի դերը: Արդեն անվանումն իսկ հուշում է, որ այստեղ կոմպոզիտորն առաջին անգամ ցիկլում փորձել է ներմուծել անձնական հույզեր, թեև այն սկսվում է հանդիսավոր, քայլերգային տրամադրությամբ և վարընթաց սեկվենցիոն շարժմամբ:

Պիեսի առաջին՝ D–dur հատվածում կոմպոզիտորն օգտագործել է «Զեմիրե» օպերայի երկրորդ գործողությունից N 12 տեսարանից երգչախմբի և նվագախմ-

[1] «Զեմիրե», կլավիր, ձեռագիր 143 թերթ, ԳԱԹ, Տ.Չուխաջյանի դիվան N 20, էջ 18:

[2] Նույն տեղում, էջ 16:

[3] Նույն տեղում, էջ 14–ի հակառակ կողմում:

բի G–dur հատվածը[1], որն օպերայում շարունակվում է D–dur–ում, բայց արդեն առանց երգչախմբի, միայն նվագախմբի նվագամասում[2]: Օպերայում այս հատվածը նախապատրաստում է Էբուդիայի մուտքը:

Պիեսը եզրափակվում է առաջին D–dur մասի կրկնությամբ:

Պիեսի տոնայնական կառուցվածքում ընդգրկված են D–dur–A–dur–D–dur տոնայնությունները:

5. Pastourelle (Գեղջկական) – Ծրագրային անվանումը ներկայացնում է դինամիկ կոնտրաստներով հագեցած կենսուրախ, առույգ տեսարան պատկերող երաժշտական կերպարը: Կառուցվածքում ուշագրավ է այն փաստը, որ կրկնվող էպիզոդները դասավորված են համաչափ.

A – B – C – B – A

D–dur – A–dur – D–dur – A–dur – D–dur

Երրորդ էպիզոդն այսպիսով կենտրոնական դեր է կատարում, որտեղ առավել հարուստ հարմոնիաներ են հնչում:

Պիեսի տոնայնական կառուցվածքում ընդգրկված են D–dur–A–dur–D–dur տոնայնությունները:

6. Finale (Ֆինալ) – Ցիկլի եզրափակիչ մասում, կարծես, ականատես ենք լինում զույգերից կազմված պարող խմբերի: Երաժշտությունը շատ սրընթաց, դինամիկ կոնտրաստներով հագեցած բնույթ ունի: Էպիզոդներն այստեղ փոքր–ինչ ավելի ծավալուն են, քան նախորդ պիեսներում:

Միջին բաժնում՝ B–dur հատվածում, միանգամից փոխվում է տոնայնությունը, F–dur–ից անցում է կատարվում B–dur տոնայնություն. այստեղ Չուխաջյանն օգտագործել է «Զեմիրե» օպերայի երրորդ գործողությունից N 16 տեսարանից Զեմիրեի և Էլսանթուրի զուգերգի F–dur հատվածը, որն անցնում է թե՛ երգիչների վոկալ երգամասում, թե՛ նվագախմբային նվագամասում[3]: Պիեսի վերջին, առավել լարված հատվածում առաջանում է ավելի հզոր, էներգիայով լի հնչողություն, որից հետո ըստ կրկնության նշանի՝ կրկնվում է պիեսն ամբողջությամբ: Այստեղ խտացված է ամբողջ ցիկլի կենսախինդ, պարային տրամադրությունը:

Ավարտելով խոսքը «Զեմիրե–կադրիլ» ցիկլի մասին, պետք է փաստենք, որ սա իր պատմական նշանակությամբ աննախադեպ երևույթ է հայկական դաշնամուրային երաժշտության ստեղծման և զարգացման ճանապարհին և պետք է որ իր ուրույն և արժանի տեղը զբաղեցնի հայ դաշնամուրային երաժշտության փառավոր էջերում:

Այսպիսով՝ «Զեմիրեից» երեք տրանսկրիպցիաները միավորվում են մեղեդային շռայլությամբ, ռիթմաինտոնացիոն սրությամբ և ճկունությամբ, ինչպես նաև դրանց կերպարային սրամտությամբ: Մեղեդիական գծերը Չուխաջյանը հագեցրել է իր ստեղծագործական ձեռագրին բնորոշ երգայնությամբ, դրանք շատ արագ տպավորվում են՝ համապատասխան տրամադրություն հաղորդելով թե՛ կատարողին և թե՛ ունկնդրին:

Էական տարբերություններ կլավիրի և դաշնամուրային փոխադրությունների մեջ մենք չենք նկատում: Հեղինակն, ըստ երևույթին, նպատակ է ունեցել «Զեմիրեի» երաժշտությունը ճանաչելի դարձնել ունկնդիրների ավելի լայն շրջանակի համար, հնարավորություն ընձեռել ոչ միայն լսել հատվածներն օպերայի ներկայացումների ժամանակ, այլև հնչեցնել ամենատարբեր առիթներով և վայրերում:

Դաշնամուրային կատարման համար կարևոր է ունենալ տեղեկություն օպերայում տվյալ հատվածների վերաբերյալ, և իհարկե դրանք պահանջում են տեմբրային գուներ, հագեցած հնչողությամբ կատարում:

[1] Նույն տեղում, էջ 60–ի հակառակ կողմում:

[2] Նույն տեղում, էջ 61:

[3] Նույն տեղում, էջ 92–ի հակառակ կողմում:

Չուխաճյանի այս փոխադրումները կատարելիս դաշնակահարը կարող է հետապնդել մի քանի նպատակ`

1. Ունկնդրին ծանոթացնել Չուխաճյանի օպերային արվեստի անհայտ էջերին, որպիսին է «Զեմիրե» հեքիաթ-օպերան, քանի որ նույնիսկ պրոֆեսիոնալ երաժիշտներից քչերն են ծանոթ այս հիրավի հանճարեղ, իր տեսակի մեջ անդրանիկ և պատմական նշանակություն ունեցող ստեղծագործությանը:

2. դաշնակահարը կարող է դաշնամուրի վրա հնարավորինս վերստեղծել նվագախմբային և երգային հնչողություն, որը, թեև նրանցից շատ ջանքեր կպահանջի, սակայն նոր մակարդակի կբարձրացնի նրա կատարողական վարպետությունը:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը 22.06.2012

ФОРТЕПИАННОЕ ТВОРЧЕСТВО ТИГРАНА ЧУХАДЖЯНА: ТРАНСКРИПЦИИ ИЗ ОПЕРЫ "ЗЕМИРЭ"

АННА АСАТРЯН

Заместитель директора Института искусств Национальной Академии наук РА, доктор Искусствоведения

АННА АДАМЯН

Аспирант Ереванской государственной консерватории имени Комитаса

В данной статье представлена мало изученная, однако имеющая исторического значения страница – фортепианная музыка великого армянского композитора Тиграна Чухаджяна. В частности, анализируются фортепианные транскрипции на темы оперы «Земирэ». В статье также преведены примечательные факты о создании и исполнении оперы.

Дата представления статьи 22.06.2012

PIANO HERITAGE OF TIGRAN TCHOUHADJIAN TRANSCRIPTIONS FROM THE OPERA ««ZEMIRE»»

ANNA ASATRYAN

Deputy Director of the Arts Institute of the National Academy of Sciences, RA, Doctor of Arts

ANNA ADAMYAN

Postgraduet of Yerevan State Conservatory after Komitas

The article reveals some interesting facts about less known piano heritage of the Armenian great composer T. Tchouhadjian. Particulrly, his piano transcriptions from the opera "Zemire" are being analized in the given research. Many attractive facts about creation and presentation of this opera are illustrated and covered, as well.

Article submission date: 25.06.2012

ԳԻՏԱԿԱՆ ՕՐԱՑՈՒՅՑ
НАУЧНЫЙ КАЛЕНДАРЬ
SCIENTIFIC CALENDAR

SEPTEMBER 2012

- **International Conference on Computer Science, Information System & Communication Technologies** (ICCSISCT 2012)
  1st to 2nd September 2012
  Bangkok, Thailand
  Website: http://www.csisct.com
  Contact person: Conference Secretariat

- **2012 4th International Conference on Software Technology and Engineering (ICSTE 2012)**
  1st to 2nd September 2012
  Phuket, Thailand
  Website: http://www.icste.org/
  Contact person: ICSTE 2012 Secretary

- **Passion Purpose Potency Bangkok**
  3rd to 8th September 2012
  Bangkok, Thailand
  Website: http://www.tglp.com.au/passion-purpose-potency-conference/
  Contact person: Monique Hewitt

- **The first Unisa international ODL conference**
  5th to 7th September 2012
  Pretoria, South Africa
  Website: http://www.unisa.ac.za/odl12
  Contact person: Dr Paul Prinsloo

- **7th Annual Conference of Australian College of Nurse Practitioners**
  6th to 8th September 2012
  Gold Coast, Queensland, Australia
  Website: http://www.dcconferences.com.au/acnp2012
  Contact person: Melissa Best

- **11th International Conference on Complexity in Acute Illness**
  6th to 9th September 2012
  Ottawa, Ontario, Canada
  Website: http://iccai2012.org
  Contact person: ICCAI 2012

- **International Psychogeriatric Association International Meeting 2012**
  7th to 11th September 2012
  Cairns, Queensland, Australia
  Website: http://www.ipa2012cairns.com/
  Contact person:

- **Indo-Global Education Summit 2012**

7th September to 11th July 2012
Hyderabad, Andhra Pradesh, India
Website: http://www.indus.org/
Contact person: Ashok Kallam

- **2012 SALT International Conference**
  9th to 10th September 2012
  Arau, Perlis, Malaysia
  Website: http://saltconference.wordpress.com
  Contact person: Mr Azaharee Abdullah, Mr Mohamad Fadhili Yahaya

- **2nd International Conference on Geographies of Education**
  10th to 11th September 2012
  Loughborough, United Kingdom
  Website: http://www.lboro.ac.uk/departments/gy/goe/
  Contact person: Sarah Holloway

- **NARD INTERNATIONAL CONFERENCE 2012**
  10th to 14th September 2012
  Uyo, AKWA-IBOM, Nigeria
  Website: http://www.wesoeduonline.com
  Contact person: ASSO. PROF. BYRON U. MADUEWESI

- **ACADEMIC DEMARCATIONS: DISCIPLINES AND INTERDISCIPLINARITY**
  12th to 14th September 2012
  Oslo, Norway
  Website: http://www.uio.no/forskning/tverrfak/kultrans/aktuelt/konferanser/demarcations/
  Contact person: Vidar Gr?tta

- **1st Moodle Research Conference**
  14th to 15th September 2012
  Heraklion, Crete, Greece
  Website: http://research.moodle.net/
  Contact person: Mrs Constantina Georga

- **HUMANISTIC FOREIGN LANGUAGE TEACHING AND LEARNING I. Innovative methods and approaches**
  14th to 15th September 2012
  Nitra, Slovakia
  Website: http://www.kaa.ff.ukf.sk/index.php/en/events/121-humanistic-foreign-language-teaching-and-learning-i
  Contact person: Diana Zidova

- **2nd Annual International Conference on Education & e-Learning (EeL 2012)**
  17th to 18th September 2012
  Bali, Indonesia
  Website: http://www.e-learningedu.org/
  Contact person: Conference Secretariat

- **1st. International Conference on Mobile Learning, Applications and Services (mobilcase2012)**
  18th to 20th September 2012
  Melaka, Malaysia
  Website: http://mobilcase.utem.edu.my
  Contact person: Associate Prof. Dr. Sazilah Salam

- **International conference on Information Technology, E-government and applications (IC-ITEA 2012)**
  20th to 21st September 2012
  Abu Dhabi, United Arab Emirates
  Website: http://www.icitea.com
  Contact person: Conference Secretariat

- **International Conference on Internet , E-Learning and Education Technologies (ICIEET 2012)**
  23rd to 24th September 2012
  Dubai, United Arab Emirates
  Website: http://www.icieet.com
  Contact person: Conference Secretariat

- **The Digital Education Show Asia**
  25th to 26th September 2012
  Kuala Lumpur, Malaysia
  Website: http://www.terrapinn.com/digitaleducation
  Contact person: Amelia Yeo

- **International Conference on ICT Culture in Education**
  27th to 29th September 2012
  New Delhi, Delhi, India
  Website: http://etma-india.in/ictce2012/
  Contact person: Charu Dhingra

- **3rd international conference on Cultural Diversity and Multilingualism**
  27th to 28th September 2012
  Cluj-Napoca, Cluj, Romania
  Website: http://www.wix.com/foreignlanguages/conference
  Contact person: Sonia Munteanu

- **ICEM 2012**
  27th to 29th September 2012
  Nicosia, Cyprus
  Website: http://icem2012.cardet.org
  Contact person: Dr. Charalambos Vrasidas

- **2012 2nd International Conference on Education, Research and Innovation – ICERI 2012**
  28th to 29th September 2012
  Phnom Penh, Cambodia
  Website: http://www.iceri.org/
  Contact person: ICERI 2012 Secretary

- **International Conference on Social and Technological Development (STED 2012)**
  28th to 29th September 2012
  Banja Luka, Bosnia and Herzegovina
  Website: http://conference.univerzitetpim.com
  Contact person: Prof. dr Mile Vasic
  OCTOBER 2012

- **Quality Matters' 4th Annual Conference on Quality Assurance in Online Learning**
  3rd to 6th October 2012
  Tuscon, AZ, United States of America
  Website: http://www.qmprogram.org/4th-annual-conference
  Contact person: Beth Knapp/Grace Hall

- **E-Learn 2012 : World Conference on E-Learning in Corporate, Government, Healthcare, & Higher Education**
  9th to 12th October 2012
  Montreal, Quebec, Canada
  Website: http://aace.org/conf/elearn
  Contact person: AACE Conferences

- **Ulearn12**
  10th to 12th October 2012
  Auckland, North Island, New Zealand
  Website: http://core-ed.org/ulearn
  Contact person: Sherry Chrisp

- **18th Annual Sloan Consortium International Conference on Online Learning**
  10th to 12th October 2012
  Orlando, Florida, United States of America
  Website: http://sloanconsortium.org/aln
  Contact person: Christine Hinkley

- **International Symposium – Foreign Language Education and Its Applications in Prep Classes(I)**
  11th to 13th October 2012
  Istanbul, Turkey
  Website: http://sempozyum.marmara.edu.tr/YabanciDilSempozyumu2012/
  Contact person: Lect. F. Sebnem Ozgur

- **42nd Annual ISETL Conference**
  11th to 13th October 2012
  San Antonio, Texas, United States of America
  Website: http://www.isetl.org/conference/
  Contact person: Jill Lane

- **1st International Conference on Tertiary Language Education**
  11th to 12th October 2012
  Subang Jaya, Selangor, Malaysia
  Website: http://www.taylors.edu.my/ICTLE/
  Contact person: Hema Letchamanan

- **Ubiquitous Learning: An International Conference (Fifth Annual)**
  12th to 13th October 2012
  Champaign-Urbana, Illinois, United States of America
  Website: http://ULConference.com
  Contact person: Abigail Manekin

- **Stretching Horizons – Educational Travel Conference**
  12th to 13th October 2012
  Bristol, United Kingdom
  Website: http://www.stretchinghorizons.co.uk
  Contact person: Nichola Vickers

- **The 6th International Conference on Application of Information and Communication Technologies AICT2012**
  17th to 19th October 2012
  Tbilisi, Georgia
  Website: http://www.aict.info/2012
  Contact person: Abzetdin ADAMOV

- **IADIS International Conference WWW/Internet 2012**
  18th to 21st October 2012
  Madrid, Spain
  Website: http://www.internet-conf.org/
  Contact person: Conference Secretariat

- **The Creativity Workshop in New York (October 19 – 22, 2012)**
  19th to 22nd October 2012
  New York, United States of America
  Website: http://creativityworkshop.com/newyork.html
  Contact person: Ceci Glusman

- **Organizational Learning Conference – Middle East and North Africa**
  21st to 22nd October 2012
  Abu Dhabi, United Arab Emirates
  Website: http://www.olcmena.com
  Contact person: Mohamed Solyman

- **ACE – The Fourth Asian Conference on Education**
  24th to 28th October 2012
  osaka, Japan
  Website: http://ace.iafor.org/index.html
  Contact person: Kiyoshi Mana

- **E4BT (English for Business and Technology)**
  24th to 25th October 2012
  Brunei, Brunei Darussalam
  Website: http://www.itb.edu.bn/e4bt/index.html
  Contact person: Mike Cross

- **9th International Guanghua Nursing Conference**
  25th to 26th October 2012
  London, UK, United Kingdom
  Website: http://www.ghdglobal.org/
  Contact person: Shao Bing

- **2012 3rd Journal Conference on e-Education, e-Business, e-Management and e-Learning (JC4E 2012 3rd)**
  26th to 28th October 2012
  HongKong,
  Website: http://www.ijeeee.org/jc4e/3rd/
  Contact person: Journal Secretary

- **2012 6th International Conference on Distance Learning and Education (ICDLE 2012)**
  26th to 28th October 2012
  Hong Kong, China
  Website: http://www.icdle.org/index.htm
  Contact person: Ms. Li

- **2012 STEMtech Conference**
  28th to 31st October 2012
  Kansas City, Missouri, United States of America
  Website: http://www.league.org/2012stemtech/
  Contact person: Edward Leach

- **American Conference for Academic Disciplines**
  29th October to 1st November 2012
  Rome, Italy
  Website: http://www.internationaljournal.org/rome.html
  Contact person: Professor Joseph Bonnici, PhD, JD

- **2nd Ireland International Conference on Education 2012**
  29th to 31st October 2012
  Dublin, Ireland
  Website: http://www.iicedu.org
  Contact person: Galyna Akmayeva

- **The 5th Asia-Pacific Conference on Engineering and Technology Education & The Second Conference on Engineering Education**
  29th October to 2nd November 2012
  Taipei, Taiwan
  Website: http://www.ateem.org.tw/apcete2012/default.php
  Contact person: Frank Tseng

NOVEMBER 2012

- **8th Central and Eastern European Software Engineering Conference in Russia**
  1st to 2nd November 2012
  Moscow, Russian Federation
  Website: http://www.cee-secr.org
  Contact person: Boris Kulakov

- **International Conference on Virtual Learning – ICVL 2012 (the 7th edition)**
  2nd to 3rd November 2012
  Brasov, Romania
  Website: http://c3.icvl.eu
  Contact person: Dr. Marin Vlada

- **ERP Future 2012 – Research**
  12th November 2012 to 0th December 0
  Salzburg, Austria
  Website: http://2012.erp-future.com/en
  Contact person: Andreas Hagn

- **4th International Conference on Innovations in Learning for the Future 2012: e-Learning**
  14th to 16th November 2012
  Istanbul, Turkey
  Website: http://futurelearning.istanbul.edu.tr
  Contact person: Informatics Department

- **International Conference ICT for Language Learning**
  15th to 16th November 2012
  Florence, Italy
  Website: http://www.pixel-online.net/ICT4LL2012
  Contact person: Lorenzo Martellini

- **Global Conference on Education**
  16th to 17th November 2012
  Los Angeles Metro, California, United States of America
  Website: http://www.uofriverside.com/edconference.html
  Contact person: Conference Coordinator

- **London International Conference on Education (LICE-2012)**
  19th to 22nd November 2012
  London, United Kingdom
  Website: http://www.liceducation.org
  Contact person: Margaret Smith

DECEMBER 2012

- **The Creativity Workshop in Dubai (December 5 – 10, 2012)**
  5th to 10th December 2012
  Dubai, United Arab Emirates
  Website: http://creativityworkshop.com/dubai.html
  Contact person: Ceci Glusman

- **Higher Education of the 21st century**
  21st to 21st December 2012
  St Petersburg, Russian Federation
  Website: http://en.lengu.ru/research/international-conferences/higher-education-of-the-21st-century
  Contact person: Olga Gavrilova

ՀՈՒՇԱԳԻՐ ՀՈԴՎԱԾԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Հոդվածները ներկայացվում են հայերենով, ռուսերենով և անգլերենով:

1. ՀՈԴՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԸ

Հոդվածը պատրաստվում է A 4 ձևաչափի թղթի վրա՝ միակողմանի տպված:
Տարածքը՝ վերևից՝ 2սմ, ներքևից՝ 2 սմ, ձախից՝ 2սմ, աջից՝ 2 սմ:
Տառատեսակը՝ հայերենի համար՝ «Unicode», անգլերենի և ռուսերենի համար՝ «Times New Roman»:
Տողերի միջև հեռավորությունը՝ 1,5:
Տառաչափը՝ 12:

Հոդվածի առաջին էջը պետք է ներառի՝

- հոդվածի վերնագիրը (ցանկալի է, որ վերնագրի առավելագույն երկարությունը չգերազանցի 10 բառը).
- ամփոփումը՝ ներկայացվող հոդվածի լեզվով (5–10 նախադասություն).
- հոդվածի 5–10 հանգուցային բառեր և արտահայտություններ:

Սկզբում տրվում են հոդվածի հեղինակի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, կոչումը և գիտական աստիճանը: Հեղինակի անունը, ազգանունը լինում են թերթի մեջտեղում՝ հոդվածի վերնագրից առաջ, գլխատառ (հաստ–**Bold**), զբաղեցրած պաշտոնները, կոչումները և գիտական աստիճանները՝ փոքրատառ:

Օրինակ՝

ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի տնտեսական աշխարհագրության և ԱԴՄ ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ներքևում պարբերության հեռավորությամբ կենտրոնից տեղադրվում է հոդվածի վերնագիրը (գլխատառ):

Հետո բաց է թողնվում 2 տող, և տրվում է հիմնական տեքստը:

Հիմնական տեքստից հետո ներկայացվում են հոդվածի ամփոփումները: Եթե հոդվածը հայերենով է, ապա հոդվածի վերջում ամփոփումները տրվում են ռուսերենով և անգլերենով:

Հաջորդ տողում պարբերության հեռավորությամբ հավաքվում է «Հանգուցային բառեր և արտահայտություններ»՝ նույն ձևաչափով, ինչ ամփոփումն էր:

Օրինակ՝

ԵՐԿՐԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ (ԵՏՀ) ԴԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հոդվածում ներկայացված է երկրատեղեկատվական համակարգերի (ԵՏՀ) դերը աշխարհագրական կրթության մեջ, դասավանդման երկամյա փորձը Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ–ի տնտեսական աշխարհագրության և աշխարհագրության դասավանդման մեթոդիկայի ամբիոնում:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ տարածական տվյալներ, գլոբալ տեղորոշման համակարգ, էլեկտրոնային քարտեզ, վեկտորային և ռաստրային տվյալներ, տվյալների հենքեր, տվյալների շերտեր:

Հայտնի է, որ երկրատեղեկատվական համակարգերը (ԵՏՀ, GIS) օգտագործվում են ամենատարբեր ոլորտներում, մարդկային կյանքի և գործունեության խնդիրների լուծման համար [1, էջ 5]:

Տեքստում հղումը (աղբյուրի համարը և էջը) լինում է քառակուսի փակագծերում ([1, էջ 86]), որը պետք է արտացոլվի գրականության ցանկում:
Հոդվածի վերջում տրվում է գրականության ցանկը:
Հոդվածի վերջում պետք է նշվի հոդվածի ներկայացման ամսաթիվը:
Հոդվածի հետ միասին ներկայացվում է նաև երաշխավորական կարծիք:
Հոդվածը պետք է լինի ինդեքսավորված «Հայաստանի ազգային գրապալատ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից:

2. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Պատրաստվում է «Microsoft Word» ձևաչափով: Ներկայացվում է կա՛մ սկավառակով, կա՛մ էլեկտրոնային կրիչով (Flesh), կա՛մ ուղարկվում է ինտերնետային փոստով (intercoop85@mail.ru):

3. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Ամսագրին վերաբերող և հոդվածների պատրաստման հետ կապված բոլոր հարցերով կարող եք դիմել.

Գլխավոր խմբագիր՝
Նաիրա Հակոբյան
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական որակավորման բարձրացման և միջբուհական համագործակցության կենտրոնի ղեկավար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հայաստան, ք. Երևան, Տիգրան Մեծի 17
Հեռախոս՝ (+374 10) 59–70–29, (+374 98) 77–74–07
e–mail: intercoop85@mail.ru

ПАМЯТКА АВТОРУ

Статьи представляются на армянском, русском или английском языках.

1. ТРЕБОВАНИЯ К ОФОРМЛЕНИЮ СТАТЬИ

Формат страницы А4 (210 x 297 мм).
Поля: сверху – 2см, снизу – 2см, справа – 2 см, слева – 2 см.
Шрифт: армянский язык – Unicode; русский и английский языки – Times New Roman.
Межстрочный интервал – 1,5.
Размер символа – 12 pt.

Первая страница статьи должна включать:
- название статьи (желательно, чтобы максимальная длина названия не превышала 10 слов);
- аннотация на языке статьи (5–10 предложений);
- 5–10 ключевых слов и словосочетаний.

Перед названием статьи – имя, фамилия, должность, звание и ученая степень автора. Имя и фамилия автора размещаются по центру и набираются прописными буквами (**Bold**), должность, звание и ученая степень набираются строчными буквами.

Например:

ОЛЬГА УСКОВА
Доцент кафедры русского языка центра международного образования
МГУ им. М. В. Ломоносова,
доктор филологических наук

Название статьи располагается по центру с абзацем через пробел в один интервал (прописные буквы).

Под названием статьи через пробел в 2 интервала следует основной текст.

После основного текста представляются аннотации не на языке статьи (если статья на русском, то после основного текста помещаются аннотации на армянском и английском языках).

На следующей строке с абзацем набираются «Ключевые слова и словосочетания» таким же форматом, как аннотация.

Например:

МИР ЛИЧНОСТИ В ПРОСТРАНСТВЕ МЕТАЯЗЫКА БИЗНЕСА И СТАНОВЛЕНИЕ КОРПОРАТИВНОЙ КУЛЬТУРЫ РОССИЙСКОЙ БИЗНЕС–СРЕДЫ

В статье рассматриваются процессы становления метаязыка бизнеса в русском языковом пространстве, связанные с субъектным миром (миром личности).

Ключевые слова и словосочетания: метаязык бизнеса, языковое пространство, бизнес–среда, корпоративная культура.

Одним из интереснейших лингвистических феноменов, переживающих в настоящее время период своего становления в системе русского языка, является метаязык бизнеса. Будучи языком профессионального общения российской бизнес–среды, метаязык бизнеса представляет собой сложную, многоуровневую систему, которая связана с соответствующим пространством референции, органической частью которого является мир личности [1: 5].

Сноски на литературу – номер источника и страница в квадратных скобках; нумерованный список литературы в алфавитном порядке.

Вместе со статьей представляется экспертное заключение о возможности публикации.

2. ЭЛЕКТРОННАЯ КОПИЯ

Готовится в формате «Microsoft Word». Представляется на диске, или съемном носителе (USB Flash Drive), или отправляется по электронной почте: intercoop85@mail.ru

3. ОБРАТНАЯ СВЯЗЬ

По вопросам, связанным с работой журнала и подготовкой статей, просим обращаться:

Главный редактор
Наира Акопян
Руководитель центра повышения профессиональной квалификации и сотрудничества в сфере образования Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна, доктор психологических наук, профессор
Армения, г. Ереван, ул. Тигран Меца 17
Телефон: (+374 10) 59–70–29, (+374 98) 77–74–07
e–mail: intercoop85@mail.ru

ARTICLE REQUIREMENTS

The articles should be in Armenian, Russian and English

1. THE STRUCTURE OF THE ARTICLE

The article should be typed on A4 format paper, on one side.
Page size: top – 2cm, bottom – 2cm, left – 2cm, right – 2cm
«Unicode» for Armenian
«Times New Roman» for English and Russian
Letter size: 12
Line Spacing: 1,5

The first page of the article:

- The title of the article(not more than 10 words)
- Brief summary of the article in the same language(5–10 sentences)
- Key words and expressions from the article(5–10words)

The article begins with the author's name, surname, title, status, position, scientific degree earned. The author's name and surname are in the middle : top of the paper with capital letters(**Bold**).

Example:

DOLAK JAN
UNESCO Chairholder on Museology
and World Heritage of Masaryk
University (The Czech Republic) PhD in History
Title of the article (in CAPITAL LETTERS)

Main body of the article should be divided into two columns
At the end of the article there should be 2 brief summaries: if the article is in English, the summaries should be in Armenian and in Russian.

Example:

LIFE–LONG EDUCATION IN MUSEOLOGY AND WORLD HERITAGE

The world and life in it have been accelerating. While still a hundred years ago a farmer used similar or even identical tools like his father or his grandfather and made use of his knowledge of the four seasons, no one can do with their knowledge acquired during school education today. We must simply learn all life long. Life–long learning or education is required by the state and progress of contemporary societies.

Key words and expressions: tertiary education, transfer system, dynamic knowledge, museality, Museology.

The Bologna process, launched in 1999, is a voluntary initiative joined by forty European countries by now, both members and non–members of the European Union. It is an action plan for the development of European university education by 2010 [1, 5].

The references should be mentioned in the article ([1, 5]), in the same order as in the Bibliography list.
At the end of the article there should be the list of Bibliography
The article should be presented with the Recommendation letter attached.

2. ELECTRONIC VERSION

«Microsoft Word» document should be presented to us either in CD or Flash, or sent to us by e–mail: intercoop85@mail.ru

3. CONTACT

Feel free to contact us if you have any questions connected with the article requirements:

Chief Editor
Hakobyan Naira
Head of the Center of Professional Quality Improvement and Intercollegiate Cooperation other Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Doctor of Psychological Sciences, Professor
Address: Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
Armenia, Yerevan
Str. Tigran Mets 17
Tel: (+374 10) 59–70–29, (+374 98) 77–74–07
e–mail: intercoop85@mail.ru:

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
Армянский государственный педагогический университет им. Хачатура Абовяна
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես

•

ПРОБЛЕМЫ ПЕДАГОГИКИ И ПСИХОЛОГИИ

Научное периодическое издание межвузовского консорциума

•

MAIN ISSUES OF PEDAGOGY AND PSYCHOLOGY

Scientific Periodical of Interuniversity Consortium

2

Հրատարակչության տնօրեն՝
ԷՄԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ
Համարի թողարկման պատասխանատու և գլխավոր խմբագիր՝
ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Սրբագրիչ՝
ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝
ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

Լրատվական գործունեության իրականացնող՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տիգրան Մեծի 17
Վկայական՝ 03 Ա 058062: Տրված՝ 24.12.2002 թ.

Հանձնված է տպագրության՝ 15.08.2012 թ.
Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70×100 1/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 11 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 150 օրինակ



«ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2,
Հեռ.՝ (+37410) 23 25 28, հեռապատճե՝ (+37410) 23 25 95
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am
Էլ. փոստ՝ info@zangak.am